

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼ ՍԱՐԱՆ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԼԵՆԱ ՌՈՒԲԵՆԻ

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲԱՐԵԼ ԱՎՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՀՀ-
ՈՒՄ

ԱՏԵՆԱԿՈՍՈՒԹՅՈՒՆ

Ը.00.03 Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում
մասնագիտությունը ամբողջական թեկնածուի
գիտական աստիճանի համար

ԳԻՏԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ՝

տգ.թ, ԵՊՐ դոցենտ՝ Ս. Ս. ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒ ԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒ ԹՅՈՒՆ	2
ՆԵՐԱԾՈՒ ԹՅՈՒՆ	3
ԳԼՈՒԽ 1. ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԵՎ ԲԱՆԿԵՐԻ ԿԱՅՈՒՆՈՒ ԹՅԱՆ ԴԵՐԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒ ԹՅԱՆ ԱՊԱՅՈՎՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ	9
1.1. Ֆինանսական համակարգի կայունությունը և հիմնախնդիրները	9
1.2. Ռիսկերի կառավարումը բանկային համակարգում, և դրա ազդեցությունը ֆինանսական կայունության վրա.....	20
1.3. Հայաստանի Հանրապետության բանկային համակարգը և դրա կարգավորման առանձնահատկությունները	38
ԳԼՈՒԽ 2: ՍԹՐԵՍ ԹԵՍՏԱԿՈՐՄԱՆ ԱՌԱՋՆԱՀԱՏԿՈՒ ԹՅՈՒՆՆԵՐԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒ ԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐՈՒՄ	46
2.1. Սթրես թեստավորման էությունը և հիմնական բաղադրիչները	46
2.2. Սթրես-թեստերի տրամաբանությունը և իրականացման առանձնահատկությունները ֆինանսական համակարգում	55
2.3. Արժույթային ճգնաժամերի ազդեցությունը և դրանց հաղթահարման նույնիսկ միջոցառումները ՀՀ բանկային համակարգում	67
ԳԼՈՒԽ 3. ՀՀ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒ ԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ	80
3.1. Բանկերի ֆինանսական կայունության գնահատումը ընդհանրական ինդեքսի միջոցով	80
3.2. ՀՀ առևտրային բանկերի և բանկային համակարգի հավանական զարգացումները արդի փոփոխությունների համատեքստում	90
3.3. Ֆինանսական կայունության էմպիրիկ վերլուծության առանձնահատկությունները ՀՀ բանկային համակարգում	101
ԵԶՐԱԿԱՑՈՒ ԹՅՈՒՆ ՆՆԵՐ	110
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒ ԹՅԱՆ ՑԱՆԿ	117
Հավելված	120

ՆԵՐԱՃՈՒԼ ԹՅՈՒՆ

Բանկային համակարգը յուրահատուկ է այն առումով, որ դրա անխափան գործունեությունը առանցքային նշանակություն ունի ֆինանսական կայունության ապահովման համար: Հայտնի է, որ տնտեսական անկումը, որն ուղեկցվում է բանկային ճգնաժամով ավելի ցավոտ հետևանքներ ունի, քան այն դեպքում, երբ բանկային համակարգը մնում է կայուն: Եթե բանկային համակարգը լավ զարգացած չէ և թույլ է մնում տարիների ընթացքում, ապա այդպիսին է դառնում նաև տնտեսությունը:

Բանկային համակարգը փոխկապակցված է տնտեսության տարբեր հատվածների հետ: Նրա ծառայությունները անհրաժեշտ են տնտեսության արդյունավետ գործունեության համար: Միևնույն ժամանակ բանկերը փոխկապակցված են միմյանց հետ, մի բանկի՝ հատկապես համակարգաստեղծ բանկի ֆինանսական վիճակի վատթարացումն իր բացասական ազդեցությունն է ունենում մնացած բանկերի և ընդհանուր ֆինանսական համակարգի վրա:

Ֆինանսական կայունության և տնտեսության զարգացման վրա դրա հիմնական բացասական հետևանքը և վտանգը պայմանավորված է վճարահաշվարկային համակարգում և վարկերի ապահովման մեջ բանկային համակարգի ունեցած հատուկ դերով: Տնտեսության ծախսը բավականին մեծ կլիներ, եթե բիզնես միջավայրը չկարողանար ձեռք բերել միջոցներ իրենց օրական գործառնությունների համար, տնային տնտեսությունները չկարողանային օգտագործել վարկերը ծախսումները հարթեցնելու և երկարաժամկետ օգտագործման ապրանքները մասնակիորեն ֆինանսավորելու համար:

Այսպիսով, ֆինանսական կայունության խնդիրը ինչպես բուն տնտեսություններում, այնպես էլ անցումային երկրներում գտնվում է մակրոտնտեսական և միկրոտնտեսական գործընթացների նորմալ կենսագործունեության հիմքում: Դա ֆինանսական կայունության ուսումնասիրության գործընթացը դարձնում է բարդ և բազմաբովանդակ:

Հետազոտվող թեմայի արդիականությունը: Ներկայումս ֆինանսական կայունության խնդիրը հուզում է ոչ միայն պետական,

դրամավարկային մարմիններին և տնտեսվարող սուբյեկտներին, այլ և հասարակության բոլոր անդամներին: Բանկային համակարգը կատարում է երկու կարևորագույն ֆունկցիաներ՝ ներգրավում է ազատ միջոցներ տնտեսական սուբյեկտներից և վարկեր է տրամադրում ձեռնարկություններին և սպառողներին: Դրանով պայմանավորված՝ բանկային համակարգը դառնում է տնտեսության բոլոր հատվածները սպասարկող օղակ, որի արդյունավետ գործունեությունը դառնում է առանցքային տնտեսության զարգացման համար: Այդ պատճառով էլ ֆինանսական կայունությունը ընկած է բոլոր տնտեսական գործընթացների հիմքում, և դրա ուսումնասիրությունը ընդգրկում է բոլոր տնտեսական գործակալներին: Ուստի մեր օրերում ֆինանսական կայունության հիմնախնդիրների ուսումնասիրությունը առավել քան արդիական է և ունի խիստ կարևոր գիտագործնական նշանակություն:

Թեմայի արդիականության մասին է վկայում գիտական այն մեծ հետաքրքրությունը, որը ձևավորվել է դրա շուրջ: Ֆինանսական կայունության այս կամ այն հարցադրման գիտական հետազոտությանը տնտեսագիտական լայն շրջանակներում նվիրված են բազմաթիվ հետազոտություններ: Տվյալ դեպքում խնդիր է դրվել առանձնացնել և գիտական համակողմանի ուսումնասիրության առարկա դարձնել թեմային առնչվող այն արդիական հարցադրումները, որոնք դեռևս խորությամբ ուսումնասիրված չեն: Միաժամանակ անդրադարձ է կատարվել արդեն իսկ հետազոտված որոշ հարցադրումների, սակայն դրանք ներկայացվել են միանգամայն այլ տեսանկյունից:

Ֆինանսական կայունությանը առնչվող հիմնախնդիրների հետազոտության և դրանց լուծումների բացահայտման ու հիմնավորման արդիականությունը և հրատապությունն էլ պայմանավորել են թեմայի ընտրությունը, որոշել նրա նպատակները ու խնդիրները, հետազոտության օբյեկտն ու առարկան, կառուցվածքն ու տրամաբանությունը:

Թեմայի ուսումնասիրության վիճակը: Ֆինանսական կայունության հիմնախնդիրները միշտ եղել են տարբեր

տնտեսագետների ու շաղրուղյան կենտրոնում: Այդ հարցերին անդրադարձել են Ջ. Չանտը, Ա. Կրոկետը, Մ. Ֆուտը, Ռ. Ֆերգյուսոնը, Ֆ. Միշկինը, Ջ. Ալանը, Ա. Ֆրանկլինը, Գ. Դուգլասը, Բ. Ռեյը, Դ. Ֆիլիպը, Բ. Տորստենը, Դ. Էնրիկան, Դ. Ասլին, Է. Էմրեն, Բ. Ջեյմսը, Գ. Բլեյզը, Ջ. Կայուշիկը, Գ. Ռոմոլդասը, Պ. Ասկոլդասը, Յ. Դանիելը, Ռ. Ջոզեֆը, Գ. Գարին, Գ. Օլդֆիլդը, Ա. Բերգերը, Գ. Շինազին, Տ. Պադոա-Շիոպան, Գ. Յոգարտը, Վ. Սապրոտան, Ա. Յալդանեն, Ս. Յոլը, Ս. Պեցինին, Վ. Սունդառառաջանը, Ս. Էնոքը, Պ. Յիլբերսը, Ռ. Կուդգերը, Մ. Մորետտին, Գ. Սլաքը, Մ. Ջոնսը, Մ. Տիհակը, Մ. Սորգեն, Գ. Կրենը, Տ. Օյաման, Գ. Բարդսենը, Կ. Լինդբլիստը, Կ. Վիլյեմը, Յ. Մինսկին, Ս. Կինդլբերգերը, Ս. Վիլյամսոնը, Բ. Ասատրյանը, Լ. Բադանյանը և այլն: ՀՀ-ում առևտրային բանկերի ֆինանսական կայունության վերաբերյալ վերլուծություններ և հետազոտություններ առավել ապստիրակապես կատարվում է ՀՀ Կենտրոնական բանկը:

Առենախոսուղյան նպատակը: Սույն առենախոսուղյան նպատակն է ՀՀ-ի համար գնահատել բանկերի ֆինանսական կայունությունը, բացահայտել բանկային համակարգի ֆինանսական կայունության վրա ազդող գործոնները, առաջարկել գործիքակազմ ֆինանսական համակարգի կայունության կառավարման արդյունավետության բարձրացման համար:

Առենախոսուղյան խնդիրները: Տվյալ նպատակին հասնելու համար առենախոսուղյունում հատուկ ուշադրություն է դարձվել, քննարկվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- Ուսումնասիրել ՀՀ-ում ֆինանսական կայունության ներկա վիճակը, բացահայտել զարգացման միտումները և առանձնահատկությունները,
- Ուսումնասիրել ՀՀ առևտրային բանկերի ֆինանսական կայունության գնահատման հիմնահարցերը,
- Ուսումնասիրել բանկային համակարգի ավանդների կառուցվածքը և դինամիկան՝ որպես ֆինանսական կայունության նշանակալի գործոն,
- Սթրես-թեստերի միջոցով գնահատել բանկերի ֆինանսական կայունության փոփոխությունները արտաքին շուկերի պարագայում,

- Յետագոտել վարկային ռիսկի գնահատման և կառավարման հիմնախնդիրները ,

- Էմպիրիկ մեթոդով գնահատել \$ինանսական համակարգի վրա ազդող գործոնների ազդեցությունը և չափը ,

Ատենախոսության օբյեկտն ու առարկան: Յետագոտության օբյեկտ է ընտրվել ՀՀ բանկային համակարգը: Յետագոտության առարկա է ընտրվել ՀՀ առևտրային բանկերի \$ինանսական կայունության գնահատումը:

Ատենախոսության տեսական, տեղեկատվական և մեթոդաբանական հիմքերը: Ատենախոսության ուսումնամառաչադրված խնդիրների լուծման համար տեսական հիմք են հանդիսացել \$ինանսական կայունության, սթրես-թեստավորման և ռիսկերի կառավարման մոդելների վերաբերյալ հայ և արտասահմանյան հետազոտողների աշխատությունները:

Յետագոտության ընթացքում կիրառվել են տեսական և տրամաբանական, ինդուկցիայի և դեդուկցիայի, վիճակագրական վերլուծության ունենալի, էկոնոմետրիկ գնահատման, իրավիճակային և գործոնային վերլուծության ունենալի մեթոդները:

Ատենախոսության համար տեղեկատվական հիմք են հանդիսացել ՀՀ ազգային վիճակագրական ծառայության հրատարակումները, ՀՀ կենտրոնական բանկի վիճակագրական տվյալները և գնահատումները, Արժույթի միջազգային հիմնադրամի և այլ պետությունների ու միջազգային կազմակերպությունների հրատարակած վիճակագրական տվյալները և տեղեկագրերը, փորձագիտական գնահատականները և հեղինակի սեփական գնահատումները:

Ատենախոսության գիտական նորույթը: Ատենախոսության ուսումնամ կատարված հետազոտական և վերլուծական աշխատանքների գիտական նորույթ են հանդիսանում հետևյալ դրույթները.

- ՀՀ առևտրային բանկերի համար մշակվել և կառուցվել են \$ինանսական կայունության մասնակի և ընդհանուր ինդեքսներ, որոնք հնարավորություն են տալիս որոշել յուրաքանչյուր բանկի դիրքը բանկային համակարգում՝ կայունության տեսանկյունից ,

▪ Կորելացիայի գործակցի և վարկերից հավանական կորուստների պահուստների օգնությամբ գնահատվել է վարկավորած ճյուղերում ռիսկերի կուտակումն ամբողջ բանկային համակարգի հրապարակված տվյալներով, որը առանձնակի կարևորություն ունի յուրաքանչյուր բանկի վարկային ռազմավարության մշակման համար:

▪ Էմփրիկ ռեգրեսիոն վերլուծության միջոցով բացահայտվել է, թե ինչ գործոններ են ազդում ֆինանսական կայունությանը գնահատող նորմատիվային ընդհանուր կապիտալ /ռիսկով կշռված ակտիվներ ցուցանիշի վրա, և գնահատվել է յուրաքանչյուր գործոնի ազդեցության չափը:

Ատենախոսության գիտագործնական նշանակությունը:

Ատենախոսության գործնական նշանակությունը, նախ և առաջ, սերտորեն կապված է ՀՀ կենտրոնական բանկի խնդիրներից մեկի՝ բանկային համակարգի ֆինանսական կայունության ապահովման հետ: Բանկային համակարգը բաղկացած է առանձին առևտրային բանկերից, և ամբողջ համակարգի ֆինանսական կայունությանը ապահովելու համար անհրաժեշտ է գնահատել դրա առանձին տարրերի ֆինանսական կայունությունը, և այդ տեսանկյունից տվյալ ատենախոսությունը անհրաժեշտ գործիքակազմ է առաջարկում: Մյուս կողմից, սույն աշխատանքը կարող է օգտակար լինել բանկերի համար, քանի որ այն հնարավորություն է տալիս յուրաքանչյուր բանկին գնահատել իր տեղը ամբողջ բանկային համակարգում, և դրանով պայմանավորված կատարել անհրաժեշտ միջոցառումներ իր ֆինանսական կայունությունն ամրապնդելու ուղղությամբ:

Առևտրային բանկերի ֆինանսական կայունության գնահատումը կարող է օգտագործվել այն տնտեսվարող սուբյեկտների կողմից, որոնք իրենց միջոցները պահում են բանկերում: Բարձր ֆինանսական կայունություն ունեցող բանկերում միջոցները ավելի վստահելի և ապահովված են, նույնիսկ վարկեր ստանալու ժամանակ դա մեծ նշանակություն ունի, քանի որ ավելի քիչ է բանկերի դեֆոլտի ռիսկը և վարկերը շուտետպահանջելու վտանգը:

Հետազոտությունը, հանդիսանալով առևտրային բանկերի ֆինանսական կայունության գնահատման և կառավարման տարբերակ,

տնտեսագիտական այլ հարցեր մեկ միասնական մոդելում քննարկելու լավ օրինակ կարող է հանդիսանալ: Ատենախոսության տեսական և գործնական արդյունքները կարող են օգտակար լինել տվյալ հիմնախնդրով զբաղվող տնտեսագետների և այլ անձանց համար:

Ատենախոսության արդյունքների փորձարկումը և հրապարակումները: Ատենախոսությունը քննարկվել է Երևանի պետական համալսարանի «Ֆինանսառաջվային» ամբիոնում, Կենտրոնական բանկում, իսկ որոշ դրույթներ ներկայացվել և քննարկվել են միջարթ գիտաժողովներում:

Ատենախոսության հիմնական դրույթներն ու արդյունքները հրապարակվել են գիտական վեց հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքը: Յետագոտության առջև դրված խնդիրների համաչափ լուծման նկատառումներով պայմանավորված՝ ընտրվել է աշխատության այնպիսի կառուցվածք, որը հնարավորություն է տվել անհրաժեշտ խորությամբ և համամասնությամբ ներկայացնել հետագոտության առարկան կազմող հիմնախնդիրները:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից և օգտագործված գրականության ցանկից, հավելվածից:

Ատենախոսության տեքստի ծավալը կազմում է 116 տպագիր էջ:

ԳԼՈՒԽ 1. ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԵՎ ԲԱՆԿԵՐԻ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՅՈՎՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

1.1. Ֆինանսական համակարգի կայունության երկայնքը և հիմնախնդիրները

Առևտրային բանկերի ֆինանսական կայունության խնդիրը հնարավոր չէ դիտարկել մեկ բանկի կամ առանձին բանկերի օրինակներով: Դրա հիմնական պատճառներն են օրենսդրական կարգավորման միասնական դաշտը, ֆինանսական համակարգի առավել ինտեգրվածության մակարդակը, թիրախ հանդիսացող շուկայի միակողմանի (խոսքը գնում է հիմնականում փոքր տնտեսության ներքին վերաբերյալ) և այլն: Այս հիմնավոր պատճառներից ելնելով՝ սույն աշխատանքի հետագա ուսումնասիրությունները բաժանվել են սկզբունքային ուղղությունների՝ տնտեսության ֆինանսական համակարգի կայունություն, բանկային համակարգի ֆինանսական կայունություն և բանկերի ֆինանսական կայունություն: Տնտեսության ֆինանսական համակարգի կայունություն ասելով՝ հասկանում ենք ֆինանսական համակարգի բոլոր սուբյեկտների և դրանց հարաբերությունների կայունությունը ընդհանուր համատեքստում: Բանկային համակարգի ֆինանսական կայունությունը սահմանվում է որպես համակարգի գործունակության պահպանում բնականոն և ճգնաժամային իրավիճակներում: Բանկերի ֆինանսական կայունությունը միկրոտնտեսագիտական խնդիր է, որը մեկ բանկի կայունությանն է վերաբերում:

Հայաստանի Հանրապետության ֆինանսական համակարգի խոշորագույն ենթահամակարգը բանկայինն է, որին բաժին է ընկնում ֆինանսական համակարգի ակտիվների մոտ իննսուն տոկոսը¹: Այդ իսկ պատճառով սխալված չենք լինի, եթե բանկային համակարգի և բանկերի ֆինանսական կայունության

¹ Տե՛ս ՀՀ Կենտրոնական բանկի կայքը՝ <https://www.cba.am/am/SitePages/fscintroduction.aspx>:

ուսումնասիրությունը սկսենք ֆինանսական համակարգի կայունությունից:

Մի կողմից, ենթադրվում է, որ ֆինանսական կայունությունը նշանակում է ինստիտուտների ամրություն, շուկաների կայունություն, անորոշության բացակայություն, ցածր տատանողականություն: Մյուս կողմից՝ այն կարելի է դիտարկել, որպես ավելի խորը երևույթների առկայության արդյունք՝ հանրային հատվածի գույքի համակարգերի գոյություն, որոնք հնարավորություն չեն տալիս մասնավոր հատվածին վնասներ հասցնել ամբողջ տնտեսությանը: Նման համակարգի գոյության հնարավորությունը ապացուցելու համար անհրաժեշտ է տալ ֆինանսական կայունության սահմանումը: Ցավոք, գոյություն չունի մեկ ընդհանրական սահմանում. մի շարք հեղինակներ փորձել են այդ սահմանումը տալ կոնկրետ դեպքից և խնդրից ելնող նկարագրությամբ, իսկ հիմնականում նրանք սահմանում են ֆինանսական անկայունությունը և համակարգային ռիսկը²: Ի տարբերություն դրամավարկային և մակրոտնտեսական համակարգերի, որտեղ գնահատման հստակ և համընդունելի չափանիշներ են մշակված, բանկային համակարգի կայունության վերաբերյալ մեծ թվով մոտեցումներ են առկա, և անցումային տնտեսությունների խնդիրն է ընտրել դրանցից առավել համապատասխանը և տեղայնացնել կոնկրետերկրում:

Մինչ բանկային համակարգի կայունության սահմանումը՝ մատնանշենք այն սկզբունքները, որոնց վրա պետք է կառուցվի ֆինանսական կայունության գաղափարը:

- Ֆինանսական կայունությունը համապարփակ երևույթ է, որը ներառում է տարբեր հատվածների՝ ենթակառուցվածքների, ինստիտուտների և շուկաների կայունությունը: Մասնավոր և հանրային հատվածները հանդիսանում են ֆինանսական շուկայի մասնակիցներ: Կառավարությունը փոխառություններ է վերցնում շուկայից, հեջավորում ռիսկերը, իրականացնում դրամավարկային քաղաքականություն, տիրապետում սեփական վճարումների

² Ֆինանսական կայունության տարբեր սահմանումները կտրվեն ստորև:

համակարգին: Այս տեղից ենթադրվում է, որ ֆինանսական կայունության վրակարող են ազդել և մասնավոր, և հանրային հատվածների գործողությունները:

- Պետք է հասկանալ, որ ֆինանսական կայունությունը չի ենթադրում միայն ռեսուրսների և ռիսկերի ադեկվատ բաշխում, զարգացման և աճի հետ ուղեկցվող խնայողությունների տեղավորում, այլ և տնտեսությունում առօրյա ֆինանսական հոսքերի սահուն կազմակերպում: Վերջինիս հասնելու համար տնտեսությանը անհրաժեշտ է նաև վստահություն թողարկված փողի, ածանցյալ գործիքների, միջբանկային հաշիվների և ամբողջ վճարային համակարգի նկատմամբ:
- Երբ տնտեսությունում տվյալ պահին առկա չեն ֆինանսական խնդիրներ, կարող ենք ասել, որ ֆինանսական համակարգը կայուն է, սակայն ֆինանսական կայունությունը նաև ներառում է ֆինանսական շուկերին դիմակայելու կարողություն: Որևէ տնտեսություն զուրկ չէ տատանողականությունից, բայց կայուն ֆինանսական համակարգը շուկայական զարգացած համակարգերի պայմաններում կարող է հաղթահարել անգամ լուրջ ճգնաժամեր:
- Տնտեսությունում ընթացող գործընթացները կարող են շուկայից դուրս մղել որոշ ֆինանսական կազմակերպությունների: Սա չի նշանակում, որ գործունենք անկայուն ֆինանսական համակարգի հետ: Այսպիսի երևույթները կտրուկ տեղի չեն ունենում, և շահառուները միշտ ժամանակ ունեն իրենց միջոցները առավել արդյունավետ տնօրինելու: Եթե նրանց անտարբերությունը բերել է որոշ կորուստների, ապա ֆինանսական համակարգի անկայունության մասին խոսելն անիմաստ է:
- Ֆինանսական հատվածն ունի ինչպես օգտակար, այնպես էլ ծախսային բնույթ: Տնտեսության գրեթե բոլոր սուբյեկտները օգտվում են ֆինանսական կազմակերպությունների առաջարկած ծառայություններից:

Բայց ֆինանսներից օգտվելիս պետք է վստահել, իսկ վստահությունը խոցելի երևույթ է, ինչից և առաջանում են հավանական կամ փաստացի ծախսեր:

Այս բոլոր սկզբունքները հաշվի առնելով կարելի է սահմանել, որ ֆինանսական համակարգը գտնվում է կայունության միջակայքում, եթե այն հնարավորություն ունի պատշաճ ապահովել տնտեսության գործունեությունը և չեզոքացնել էնդոգեն կամ չկանխատեսված պատճառներով առաջացած ֆինանսական անհավասարակշռությունը:

Ֆինանսական կայունության գնահատման և կարգավորման նպատակով պետք է հաշվի առնել հետևյալ հանգամանքները:

- Ֆինանսական կայունության գնահատումը հնարավոր չէ տվյալ մեկ քանակական ցուցանիշի միջոցով: Ի տարբերություն գնային կայունությանը՝ գոյություն ունի ֆինանսական կայունության գնահատման չափման միավոր: Այս հանգամանքը պայմանավորված է համակարգի բազմագործոն բնույթով:
- Բավական դժվար է կանխատեսել ֆինանսական կայունության զարգացումները: Քանի որ ի տարբերություն մակրոտնտեսական գործընթացների՝ ֆինանսների արագությունը շատ մեծ է, հետևաբար առաջացող ռիսկերն անհամեմատ դժվար է կանխատեսել: Սա լավագույնս ապահովելու նպատակով անհրաժեշտ է ֆինանսական հոսքերի առցանց մոնիտորինգի համակարգերի ներդրում, ինչը հնարավորություն կտա կարգավորողին ակնթարթային արձագանքել իրադարձություններին:
- Ֆինանսական կայունությունը միայն մասամբ կարող է կարգավորվել: Կարգավորող մարմնի գործառնությունները սահմանափակված են գների կայունության, ավանդների երաշխավորման և ֆինանսական գործարքների անընդհատության գերնպատակներով: Ազդեցության լծակների անուղղակիությունը միշտ չի հնարավորություն տալիս կոնկրետ ազդել անկայունության աղբյուրների վրա:

Ֆինանսական կայունության դրսևորումների և սահմանման նման մանրակրկիտ դիտարկումները ու սկզբունքների

մատնանշումը հնարավորություն է տալիս առանձնացնել ուսումնասիրության խնդիրները: Այն առավել խորացնելու նպատակով պետք է քննարկել ֆինանսական կայունության (որոշ հեղինակներ ֆինանսական կայունությունը սահմանելու նպատակով ձևակերպում են համակարգային ռիսկը) այլ սահմանումներ:

Ջոն Չանտը և այլոք³ իրենց աշխատանքում ֆինանսական անկայունությունը նույնացնում են ֆինանսական շուկաների այնպիսի պայմանների, որոնք վնասում կամ մեծ հավանականությամբ կարող են վնասել ֆինանսական համակարգի մասնակիցներին՝ խաթարելով նրանց բնականոն գործունեությունը: Չարգացած և զարգացող երկրներում ֆինանսական համակարգի մասնակիցներ են հանդիսանում տնտեսության գրեթե բոլոր սուբյեկտները: Այդ պատճառով ֆինանսական անկայունությունը կարող է վնասել և տնային տնտեսություններին, և կազմակերպություններին, և կառավարությունը:

Էնդրյու Քրոքեթը⁴ ֆինանսական կայունությունը սահմանում է անկայունության բացակայությամբ՝ մի իրավիճակ, երբ տնտեսական գործընթացները խզվում են ֆինանսական ակտիվների գների տատանողականության կամ պայմանագրային պարտավորությունների կատարման անհնարիտության պատճառով:

Գերմանիայի Բոլնդեսբանկը⁵ ֆինանսական կայունությունը սահմանում է ֆինանսական համակարգի մի վիճակ, երբ այն արդյունավետ իրականացնում է իր տնտեսական գործառույթները, ինչպիսիք են ռեսուրսների բաշխումը և ռիսկերի ցրումը վճարումներին համահունչ՝ անգամ շուկերի, սթրեսների և տնտեսության կառուցվածքային նշանակալի վերափոխման ժամանակ:

³ St'u Chant J., "Financial Stability As a Policy Goal," in Essays on Financial Stability, Bank of Canada Technical Report No. 95 (Ottawa: Bank of Canada), September, 2003, pp. 3-4.

⁴ St'u Crockett A., "The Theory and Practice of Financial Stability," GEI Newsletter Issue No. 6 (United Kingdom: Gonville and Caius College Cambridge), 1997, 11-12 July. pp. 77-82.

⁵ St'u Deutsche Bundesbank, "Report on the Stability of the German Financial System," Monthly Report, Frankfurt, December, 2003, pp. 5-9.

Ռոջեր Ֆերգուսոնը⁶ նախընտրում է ֆինանսական կայունությանը բացառել անկայունության բացակայությամբ: Վերջինս հեղինակը նկարագրում է հետևյալ կերպ՝

- ֆինանսական ակտիվների որոշ խմբի գները կտրուկ շեղվում են իրենց նոմինալ արժեքներից,
- տեղական և միջազգային վարկերի անհասանելիություն, շուկայի անգործունակություն,
- ամբողջական սպառման կրճատում ամբողջական առաջարկի նկատմամբ:

Միշել Ֆոլթը⁷ գտնում է, որ տնտեսությունում առկա է ֆինանսական կայունությանը, երբ գոյություն ունի

- դրամավարկային կայունություն,
- զբաղվածությունը մոտե բնական մակարդակին,
- հիմնական ֆինանսական ինստիտուտների բնականոն գործունեություն,
- առաջին երկու պայմանների գոյության պարագայում առկա է նաև ֆինանսական, ոչ էլ իրական ակտիվների գների փոփոխություններ:

Ֆրեդերիկ Միշկինը⁸ գտնում է, որ ֆինանսական անկայունությունը ի հայտ է գալիս, երբ ֆինանսական համակարգի շուկերը ուղեկցվում են վերջինիս մասին տեղեկությունով, որ այն հնարավորություն չի ունենա բնականոն շարունակել իր գործունեությունը:

Ֆրանկլին Ալենը և Դուգլաս Գեյլը իրենց «Ֆինանսական վարակ»⁹ աշխատանքում ուսումնասիրում են ֆինանսական ինտեգրացիայից բխող խնդիրները: Ըստ հեղինակների բարձր ինտեգրացիան դրական ազդեցություն է ունենում տնտեսական

⁶ St'u Ferguson R., "Should Financial Stability Be An Explicit Central Bank Objective?" (Washington: Federal Reserve Board), 2002, pp. 1-8.

⁷ St'u Foot M., "What Is 'Financial Stability' and How Do We Get It?" The Roy Bridge Memorial Lecture (United Kingdom: Financial Services Authority), April 3, 2003, pp. 4-13.

⁸ St'u Mishkin F., "Global Financial Instability: Framework, Events, Issues," Journal of Economic Perspectives, Vol. 13 (Fall), 1999, pp. 3-9.

⁹ St'u Franklin A., Douglas G., "Financial Contagion", The Journal of Political Economics, Volume 1, Issue 1, Feb. 2000, pp 1-4.

վերելքների ժամանակ: Մինչ դեռ ճգնաժամերի դեպքում ֆինանսական համակարգի որևէ ոլորտի իրացվելիության խնդիրներն անգամ հեռավոր ծայրամասերից կարող են թափանցել կենտրոն, տարածվել ոլորտից ոլորտ և ունենան զգալի հետևանքներ: Դրանցից խուսափելու համար աշխատանք ունեն անելու ինչպես տնտեսվարող սուբյեկտները, այնպես էլ կենտրոնական բանկերը՝ որպես կարգավորող մարմիններ: Դա հնարավոր է իրականացնել օպտիմալ ինտեգրացիոն քաղաքականության շնորհիվ՝ ինչպես ֆինանսական համակարգի տարրերի միջև, այնպես էլ՝ տարածաշրջանների:

Ալան Աուրբախի, Վիլյամ Գեյլի և Բենջամին Յարիսի «Յարկաբյուջե տային քաղաքականության ակտիվիստ»¹⁰ աշխատանքն անդրադարձ է կատարում 2008թ. ճգնաժամից առաջ և հետո ԱՄՆ բանկերի կարգավորման պետական քաղաքականությանը: Աշխատանքում բացահայտվում է, որ աշխարհում կարգավորման հիմնական բարեփոխումներն իրականացվում են ճգնաժամերից անմիջապես հետո, մինչդեռ մինչ ճգնաժամերը որևէ էական փոփոխություններ չեն լինում: Այս երևույթը առկա է նաև ԱՄՆ բանկային համակարգում, ինչը բավարար նախադրյալներ ստեղծեց 2008թ. ֆինանսական, այնուհետև նաև տնտեսական ճգնաժամի համար: Այս փորձը հաշվի առնելով՝ հեղինակները առաջարկում են կանխարգելիչ քաղաքականությունների մշակում, ինչը հնարավորություն կտա առավել սահուն լուծել ձևավորված խնդիրները:

Ռեյ Բառելի և այլոց «Բանկային կապիտալի կառուցվածքը, կարգավորումը և ռիսկի հակումը»¹¹ աշխատանքում քննարկվում է, թե ինչպես են բանկերի կապիտալի բաղադրիչների մեծությունը և դրանց միջև հարաբերությունը ազդում բանկի ռիսկերի կառավարման քաղաքականության վրա: Ըստ նրանց ընդհանուր կապիտալի մեծության աճը բանկերի մոտ առաջացնում է ռիսկի նկատմամբ հակվածության կրճատում: Մյուս կողմից՝ «Tier 2» (բանկերի կապիտալները տարբեր երկրներում շերտավորված են ըստ

¹⁰ St'e Alan J., William G. and Benjamin H., "Activist Fiscal Policy", Journal of Economic Perspectives, Vol. 24, No. 4, 2010, pp. 141-164.

¹¹ St'e Ray B., Philip D., Tatiana F. and Dilruba K., "Bank Capital Composition, Regulation and Risk Taking", Brunel University London, 2011, pp. 2-8.

կշռման եղանակի) կապիտալի մեծացումը կապիտալի համարժեքության տրված վիճակում բերում է ռիսկերի ավելացմանը:

Թորնսթոնս Բեքի «Ֆինանսներ և աճ»¹² աշխատանքը նվիրված է տնտեսության վրա ֆինանսների ազդեցությանը: Ըստ հեղինակի իսկզբանե ֆինանսական գործիքները և միջնորդության խորացումը նպատակ ունեին խթանելու տնտեսական աճը: Ներկայիս զարգացումները ֆինանսների զարգացումը ինչ որ իմաստներով ինքնանպատակ է դարձել: Ավելին՝ ֆինանսական համակարգերում և մասնավորապես բանկերում ձևավորվում են ռիսկեր, որոնք բացասականորեն են ազդում ողջ տնտեսության վրա: Այստեղից հետևում է, որ բանկային համակարգի և ֆինանսական հատվածի այլ սուբյեկտների կարգավորման գործընթացը պետք է ուղղված լինի այնպիսի ֆինանսական համակարգի ձևավորմանը, որը խթանում է տնտեսական աճը՝ չձևավորելով լուրջ ռիսկեր ողջ տնտեսության համար:

Վիտոր Կոնստացիոն¹³ 2012թ. Եվրոպական բանկի «Ֆինանսական կայունությանը և մեթոդաբանական նորարարություններ և խնդիրներ» թեմայով գիտաժողովում նշեց, որ վերջին ճգնաժամը ընդգծեց ֆինանսական հատվածում համակարգային ռիսկի դեմ իրականացվելիք խիստ միջոցառումների անհրաժեշտությունը: Այդ նպատակով ստեղծվել են Եվրոպայի ֆինանսական վերահսկողության համակարգը¹⁴, ԱՄՆ ֆինանսական կայունության վերահսկողության խորհուրդը¹⁵, իրականացվել են վերահսկողության խստացման ծավալուն աշխատանք, որն արտահայտվում է Բազել 3¹⁶-ում ֆինանսական կայունության խորհրդի¹⁷ որոշումներում:

Ֆինանսական անկայունության պատճառների ուսումնասիրությունը Ասլի Դեմիրգուլց Կուլստի և Էնրիցա Դետրազիաչի «Ֆինանսական ազատականացում և ֆինանսական

¹² St'u Thorsten B., ' ' Finance and Growth – Lessons From The Literature and The Recent Crisis' ' , European Banking Center, 2012, pp. 1-6.

¹³ St'u Speech by Mr Vítor Constâncio, Vice-President of the European Central Bank, at the high level conference on "Financial stability – methodological advances and policy issues", Frankfurt am Main, 14 June 2012.

¹⁴ St'u http://ec.europa.eu/finance/index_en.htm.

¹⁵ St'u <http://www.treasury.gov/initiatives/fsoc/Pages/home.aspx>.

¹⁶ St'u <<Բազել -3, Համառոտ տեղեկանք>>, ՀՀ Կենտրոնական բանկ, 2012թ.:

¹⁷ St'u <http://www.fsb.org/publications/policy-documents/>:

խոցել ի ու թյ ու ն»¹⁸ աշխատանքում եզրահանգում են այն մտքին, որ վերջին տասնամյակներում ֆինանսական համակարգը մշտապես ազատականացվել է՝ նվազեցնելով պետության դերը բանկային և այլ ֆինանսական հատվածներում: Այդ ազատականացումները ֆինանսական հատվածում առաջացրել են համակարգային ռիսկեր, որոնք էլ այնուհետև բերում են ճգնաժամի: Յեղիևակների կողմից առաջարկված թեզը ապացուցվում է էկոնոմետրիկ վերլուծությամբ, որի արդյունքները հանգում են նրան, որ ազատականացումը նպատակահարմար է կայացած ենթակառուցվածքներ ունեցող երկրներում, որտեղ կոռուպցիայի մակարդակը ցածր է: Այլապես ազատականացումը առաջացնում է ռիսկեր, որոնք ի հայտ են գալիս առաջին իսկ ֆինանսական անկայունության ժամանակ, կամ դառնում են վերջինիս հիմնական պատճառը: Էմրե Էրգունգերի և Ջեյմս Թոմսոնի «Յամակարգային բանկային ճգնաժամ»¹⁹ աշխատանքում բացահայտվում է բանկային ճգնաժամերի պատճառները: Յեղիևակները համաձայն են բանկային ճգնաժամերի հետևանքների հետ՝ աճի դանդաղ տեմպեր, բարձր տոկոսադրույթներ, ցածր կենսամակարդակ: Սակայն նրանք համաձայն չեն, որ բանկային ճգնաժամերի հիմնական պատճառը ֆինանսական վարակի տարածումն է: Նշված պատճառը սովորաբար բերվում է կառավարությունների և կարգավորողների կողմից, մինչդեռ հեղիևակները բացահայտել են, որ բանկային համակարգի համակարգային ռիսկերն առաջանում են բանկիրների ամբոխային վարքի, անտեղի կառավարական երաշխիքների և կարգավորողների քաղաքականության պատճառով, որը հնարավորություն է տալիս բանկերին պատշաճ գնահատել ռիսկերը:

Բլաիս Գադանեշի և Կաուշիկ Ջայարամի «Ֆինանսական կայունության գնահատման եղանակները»²⁰ թեմայով հոդվածում ցույց են տալիս, որ համախմբված ինդեքսները առավել լավ են գնահատում ֆինանսական կայունությունը, քան պարզ ինդեքսները:

¹⁸ St'u Asli D., Enrica D., "Financial Liberalization and Financial Fragility", World Bank Conference on Development Economics, Washington, 1998, pp. 3-7.

¹⁹ St'u Emre E. and James B., " Systemic Banking Crises", Federal Reserve Bank of Cleveland, 2005, pp. 1-4.

²⁰ St'u Blaise G. and Kaushik J., " Measures of Financial Stability – a Review", IFC Bulletin No 31, 2010, pp 365-378.

Սակայն գործնականում կիրառություն են գտնում նաև վերջիններս: Ինդեքսների կառուցման մեջ անհրաժեշտ է ներառել տվյալ երկրի առանձնահատկություննը հաշվառող գործակից: Այդ դեպքում հնարավորություն է առաջանում միջերկրային համեմատություններ կատարել: Բայց այս դեպքում էլ անհրաժեշտ է հաշվի առնել տարածաշրջանային առանձնահատկությունները, այսինքն դժվարություններ է առաջանում համեմատել երկու իրարից հեռու և տնտեսապես էական տարբերություն ունեցող երկրները: Միասնական գնահատման ինդեքսի խնդիրը շատ երկրների կենտրոնական բանկերի համար առաջնային է, բայց դրա հիմնական թերություննը դրսևորվում է ճգնաժամերի արձագանքման ժամանակ, ինչը բխում է ինդեքսի ունիվերսալությունից:

Ռոմուալդաս Գինեվիչիուսի և Ասկոլդաս Պոդվիեզկոյի «Առևտրային բանկերի գնահատման շրջանակը»²¹ աշխատանքը ընդգծում է առևտրային բանկերի գնահատման այլընտրանքային եղանակների ներդրումը, հատկապես ճգնաժամից հետո: Ճգնաժամերն ապացուցում են, որ ոչ ավանդների երաշխավորման ինստիտուտը, ոչ էլ հայտնի վարկանշային կազմակերպությունների շնորհած վարկանիշերը չեն ապահովում ավանդատուներին վերահասկորուստներից: Այդ նպատակով հեղինակները առաջարկում են բանկերի գնահատման մի շարք բարեփոխումներ՝ մեծացնել թափանցիկությունը և ներկայացնել հստակ արդյունքներ հասարակությանը: Գործառնական քայլերից առաջարկվում է՝ ընդգծել բանկերի ֆինանսական կայունության ցուցանիշները, այնուհետև այդ ցուցանիշների հիմման վրա կատարված վերլուծությունները պարզ և հասկանալի ձևով ներկայացնել հանրությանը: Այս քայլերը, ըստ հեղինակների հաճախորդներին հնարավորություն կտա ճշգրիտ ընտրություն կատարել՝ բանկային ծառայություններից օգտվելիս:

Դանիել Յարդիի և Յեյլա Պազաբասիոզուի «Բանկային ճգնաժամի հիմնական ցուցանիշները...»²² աշխատանքում մանրամասն

²¹ St'u Romualdas G., Askoldas P., ' ' A Framework of Evaluation of Commercial Banks' ' , Intellectual Economics, No. 1(9), 2011, pp. 37–53.

²² St'u Daniel H., Ceyla P., ' ' Leading Indicators of Banking Crisis: Was Asia Different?' ' , International Monetary Fund, WP/98/91, 1998, pp. 4-8.

քննարկվում է բանկային ճգնաժամերից առաջ դիտարկվող մակրոտնտեսական ցուցանիշների վիճակը, որոնք ազդարարում են վերահաս ճգնաժամը: 1980-97թթ. ուսումնասիրության ընթացքում 38 երկրներում ցույց է տալիս, որ իրական հատվածի մակրոտնտեսական ցուցանիշները առավել շուտ են ազդարարում բանկային համակարգի դժվարության նշանների մասին: Ժամանակակից տնտեսության ընթացքում այդպիսի ցուցանիշներ են իրական ՀՆԱ աճի անկումը, գնաճի թռիչքաձև բարձրացումը, վարկային էքսպանսիան, կապիտալի արտահոսքը, իրական տոկոսադրույքի անկումը, առևտրային շուկայի վաճառքը: Այս ցուցանիշների վաղաբարձացման ժամանակին հայտնաբերումը հնարավորություն է կտա խուսափել բանկային համակարգի ճգնաժամից:

Ժողովո՞ր Մասունն իր աշխատանքում²³ նշում է, որ ֆինանսական նորարարությունը անբավարար իրոքն կապված է անհամաչափ տեղեկատվության հետ, ինչը արդյունքում հանգեցնում է ճգնաժամի: Համաշխարհային բոլոր նշանակալի ճգնաժամերը պարունակում են անհամաչափ տեղեկատվության խնդրի տարրեր: Սամասամբ պայմանավորված է նրանով, որ ֆինանսական նորարարությունները դուրս են կարգավորողի իրավական և գործառնական դաշտից, ինչը և պատճառ է հանդիսանում ամեն անգամ նոր խնդիրների հետ առնչվելու: Նման պարագայում կարգավորողները պնդում են, որ գործ ունեն համակարգային ռիսկի հետ, սակայն խնդիրը հիմնականում չհայտնաբերված ռիսկերի իրականացման մեջ է, որոնց հայտնաբերումը և բանկերի, և առավել ևս կարգավորողի նպատակն է: Մյուս կողմից պետք է նշել, որ ֆինանսական համակարգի ինստիտուտների բարձր ինտեգրվածության մակարդակը հնարավորություն է չի տալիս իրականացնել կարգավորման փոփոխություններ մեկում՝ առանց անդրադարձնելու մնացածին:

Գարի Գորթոնն²⁴ իր աշխատանքում քննարկում է բանկային խուճապները և դրանց առաջացման պատճառները: Վերոնշյալ

²³ Տե՛ս JOSEPH R., ' ' Regulating for Financial System Development, Financial Institutions Stability, and Financial Innovation' ' , 2009, pp 1-15.

²⁴ Տե՛ս Gary G., "Banking Panics and Business Cycles" Oxford Economic Papers, New Series, Vol. 40, No. 4, 1988, pp. 751-761.

խուճապների հիմնական պատճառը գործարար ակտիվության փոփոխության առաջացած համակարգային իրադարձություններն են: Կարելի է նաև պնդել, որ խուճապը առաջանում է կանխիկ կրճատմամբ պայմանավորված սպառման նվազումից: Բանկերը վարկավորում են կազմակերպություններին կամ անհատներին, տնտեսական անկումը վարկառուներին դարձնում է անվճարունակ, ինչը վերածվում է խոշոր ռիսկի ավանդատուների համար: Միջոցների կորստի տագնապն արագ տարածվում է ավանդատուների շրջանում՝ առավել խորացնելով խուճապից առաջացած ռիսկերը:

Յեղիականները չեն ժխտում նաև չբացահայտված գործոնների ազդեցության թեզը: Սակայն իրավացիորեն նշում են, որ դրանք առկա են միշտ՝ և հանգիստ, և խուճապային ժամանակաշրջաններում: Այդ պարագայում վերոնշյալ գործոնների ազդեցությունը, մշտապես ներկալինելով, վերջիվերջո կբացահայտվեր:

Ընդհանրացնելով վերոնշյալ սահմանումները և հաշվի առնելով ՀՀ տնտեսության առանձնահատկությունները կարելի է ամրագրել, որ բանկային համակարգի կայունությունը հանդիսանում է ֆինանսական համակարգի կայունության անկյունաքարերից և ենթադրում է բանկային ծառայությունների անխափան և շարունակական մատուցում բնականոն տնտեսական իրավիճակում, իսկ արտաքին կամ ներքին գործոններով պայմանավորված շոկերի պարագայում՝ դրանց հաղթահարման արտենցիալի առկայություն:

1.2. Ռիսկերի կառավարումը բանկային համակարգում, և դրա ազդեցությունը ֆինանսական կայունության վրա

Յայտնի է, որ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվողները հետապնդում են տնտեսական օգուտներ՝ դիմելով

ռիսկեր: Գործունեությունն ինչ սպասվող օգուտները որքան մեծ են, այնքան պետք է, որ մեծ լինի նաև ռիսկերը: Առևտրային բանկերի գործունեությունը դասվում է ձեռնարկատիրության հնագույն ձևերին և ևս պարունակում է ռիսկի որոշակի մակարդակ:

Բանկի (այսուհետ ինկատի ունենք առևտրային բանկը) ֆինանսական կայունությունը մակրոտնտեսական միջավայրից և արդյունավետությունից բացի առավելապես կախված է ռիսկերի գնահատման և կառավարման համակարգից: Ռիսկերի գնահատման և կառավարման արդյունավետ համակարգը տնտեսական վերելքի փուլում կնպաստի կայուն զարգացմանը, իսկ անկման փուլում կնվազեցնի հավանական կորուստների մեծությունը: Նման զարգացումներն էլ հանդիսանում են ֆինանսական կայունության գաղափարի սպասվելիք դրսևորումները:

Օլդֆիլդի և Սանտոմերոյի աշխատանքում²⁵ նշվում է, որ ֆինանսական կառույցներն ընդհանրապես առնչվում են երեք խումբ ռիսկերի հետ՝

- ռիսկեր, որոնցից կարելի է խուսափել պարզ բիզնես գործընթացների միջոցով,
- ռիսկեր, որոնք հնարավոր է փոխանցել այլ մասնակիցների,
- ռիսկեր, որոնք պետք է ակտիվորեն կառավարվեն կազմակերպության ներսում:

Ռիսկից խուսափման արակտիկան ենթադրում է հիմնականում երեք տեսակի գործողություններ: Դրանցից առաջինը բիզնես գործընթացների և պայմանագրերի ստանդարտացումն է, որը հնարավորություն է ընձեռում կազմակերպությանը խուսափել անարդյունավետ և սխալ ֆինանսական որոշումների կայացումից: Զաջորդ քայլը պորտֆելների ձևավորման ժամանակ փոխառուների դիվերսիֆիկացիան է, ինչը կրճատում է կորուստների շղթայական տարածումը: Վերջապես, կազմակերպության աշխատակիցները պետք է պատասխանատու լինեն որոշումների կայացման համար:

²⁵ Տե՛ս G. Oldfield, A. Santomero, The Place of Risk Management in Financial Institutions, Financial Institutions Center, Wharton, 1995.

Վերոնշյալ բոլոր քայլերը կազմակերպությանը ուղղում են ֆինանսական մի վիճակի, երբ առկա են բանկային գործունեությանը նից բխող օպտիմալ ծավալի ռիսկեր:

Ինչպես արդեն նշվեց, գոյություն ունեն նաև փոխանցելի ռիսկեր: Օրինակ տոկոսադրույքի ռիսկը հնարավոր է փոխանցել տոկոսադրույքի տարբեր գործիքների միջոցով, ինչպիսին են սվոֆները և այլ ֆինանսական ածանցյալները: Պարզվում է, որ տարբեր ինստիտուտներ ունեն ռիսկերի կառավարման ոլորտում առավելություններ, այդ պատճառով նպատակահարմար է, որ բանկն ինքը կրի այդ ռիսկերը:

Այնուամենայնիվ գոյություն ունեն առնվազն երկու խմբի ակտիվներ, որոնցից բխող ռիսկերը պետք է կրի բանկը: Առաջին խումբը ներառում է բարդ և յուրահատուկ ռիսկեր կրող ակտիվները: Ըստ Բերգերի և Ուդելի աշխատանքի²⁶ առկա են ֆինանսական գործիքներ, որոնք ներկայացված չեն երկրորդային շուկաներում և հնարավոր չէ ռիսկերի փոխանցումը: Այդպիսի ակտիվների ռիսկերի կառավարումը դառնում է բանկերի մասնագիտական գործունեության կարևոր մասը: Երկրորդ խումբը ներառում է գույքային ակտիվները: Գույքային ակտիվները հանդիսանում են վարկերի վերադարձելիության հիմնական երաշխիքները, այդ պատճառով պետք է ունենալ գույքի գնահատման և իրացման արդյունավետ համակարգեր, որպեսզի վարկային ռիսկը չդառնա կորուստների խոշորագույն պատճառ:

Ռիսկերի վերոնշյալ դասակարգումը կատարվում է ըստ բնույթի, իսկ ըստ տեսակի բանկային բիզնեսում ռիսկերը հիմնականում բաժանվում են՝

- համակարգային կամ շուկայական ռիսկի,
- վարկային ռիսկի,
- գործընկերոջ ռիսկի,
- իրացվելիության ռիսկի,

²⁶ St'u A. Berger, G. Udell, Lines of Credit and Relationship Lending in Small Firm Finance, Financial Institutions Center, Wharton, 1994, pp. 4-14.

- գործառնական ռիսկի,
- իրավական ռիսկեր:

Ակնհայտ է, որ ռիսկերի նման դասակարգումը միակը չէ, սակայն այն ներկայացնում է ոլորտում դրսևորվող ռիսկերը համընդունելի խմբերով:

Քանի որ բանկերի և բանկային համակարգի ֆինանսական կայունության իմաստով ռիսկերի կառավարումը կենտրոնական դիրք է զբաղեցնում, շատ հեղինակներ և կարգավորող մարմիններ մեծ ուշադրություն են դարձնում դրանց ձևավորման նախադրյալներին: Ռիսկերի կառավարման անկատարության հետևանքով են առաջանում բանկային համակարգի ճգնաժամերը:

Մի շարք աշխատանքներ մատնանշում են կարգավորման թուլությունները՝ որպես 2008թ. սկիզբ առած ֆինանսական ճգնաժամի հիմնական պատճառ: Ոչ միայն ճգնաժամը բազմաթիվ հարցեր առաջացրեց, այլև իրենք կարգավորողները զգում էին ֆինանսական համակարգում փոփոխություններ, որոնք արձագանքման կարիք ունեն: Յետագոտողները նշում են, որ հասանելի և հուսալի տվյալները ժամկետանց են: Իրապես խնդիրն առկա է, մասնավորապես Յամախարիային բանկի տվյալների պահոցը մինչև երեք տարվա հնություն ունի, ինչն ամբողջ աշխարհի վերլուծաբաններին հնարավորություն է չի տալիս իրենց աշխատանքներում ներառել թարմ տվյալներ: Ի տարբերություն դրան ՅՅ առևտրային բանկերը եռամսյակի ավարտվելուն պես տեղադրում են համապատասխան հաշվետվությունները իրենց կայքերում:

Ռիսկերի կառավարման և համընդհանուր ընդունելի մոտեցումների մշակման և սահմանման մեջ մեծագույն դերը պատկանում է բանկային վերահսկողության բազելյան կոմիտեին: Բազելյան կոմիտեն բանկային գործունեության հսկողության մեջ ունի խորը արմատներ, որոնք գալիս են դեռ 1973թ. Բրետոն Վոլդսի փլուզումից: Այս ժամանակ է, որ գերմանական բանկերը արձանագրում են, որ արտարժույթային գործարքները մի քանի անգամ գերազանցում են բանկերի կապիտալը: Գերմանիայից դուրս շատ բանկեր արտարժույթի առքուվաճառքից խոշոր կորուստներ էին

ուևնեցել: Վերոնշյալները և ֆինանսական շուկաների այլ ձախողումներ դրդեցին տասը խոշորագույն երկրների²⁷ 1974թ. հիմնել Բանկերի կարգավորման և վերահսկողության գործառույթների կոմիտե²⁸: Հետագայում այն անվանվեց Բանկերի վերահսկողության բազելյան կոմիտե: Կոմիտեն նպատակ ուներ պարբերական հանդիպումներում քննարկել մասնակից երկրների խնդիրները բանկային վերահսկողության ոլորտում՝ խթանելով բանկերի ֆինանսական կայունությանը, որի համար պետք է օգտագործվեին վերահսկողության նորարարություններ: Այն ջանում էր հաստատել բանկային կարգավորման և վերահսկողության միասնական չափանիշներ, տեղեկացնել մասնակից երկրներին ֆինանսական շուկաների զարգացման նորություններին և բացահայտել ֆինանսական համակարգում ի հայտ եկող ռիսկերը: 1975թ. հանդիպումից հետո Բազելյան կոմիտեի նիստերը տեղի են ունենում տարեկան երեք-չորս անգամ: Մեծ տասնյակով հիմնադրվելուց հետո 2009թ.-ին և 2014թ.-ին կոմիտեն ընդլայնվեց 28 երկրներով և միություններով: Առյուսակ 1-ում ներկայացված է Բազելյան կոմիտեի անդամ երկրները և միությունները:

Առյուսակ 1: Բազելյան կոմիտեի անդամ երկրները և միությունները

Արգենտինա	Կորեա
Ավստրալիա	Լյուքսեմբուրգ
Բելգիա	Մեքսիկա
Բրազիլիա	Նիդերլանդներ
Կանադա	Ռուսաստան
Չինաստան	Սաուդյան Արաբիա
Եվրոպական միություն	Սինգապուր
Ֆրանսիա	Հարավային Աֆրիկա
Գերմանիա	Իսպանիա
Հոն Կոնգ	Շվեդիա
Հնդկաստան	Շվեյցարիա
Ինդոնեզիա	Թուրքիա
Իտալիա	Միացյալ Թագավորություն
Ճապոնիա	ԱՄՆ

Բազելյան կոմիտեի երկրները ներկայացված են կենտրոնական բանկերով և բանկային բիզնեսի վերահսկողությամբ զբաղվող պաշտոնական կառույցների մակարդակներով: Կան երկրներ, որոնք ներկայումս են մի քանի կառույցներով:

²⁷ G10, Մեծ տասնյակ:
²⁸ Committee on Banking Regulations and Supervisory Practices.

Կոմիտեի որոշումները ի սկզբանե չունեին պարտադիր բնույթ անդամ երկրների համար: Այն հրապարակում էր վերահսկողության չափանիշներ և խորհուրդ էր տալիս դրանցից օգտվել: 2012թ. կոմիտեն սկսել է ներդրված համակարգերի արդյունավետության վերաբերյալ դիտարկումներ իրականացնել միջազգային նշանակություն ունեցող բանկերի մոտ:

Հիմնադրումից ոչ շատ ուշ՝ 1980թ., Բազելյան կոմիտեն առնչվեց կապիտալի համարժեքության խնդիր հետ: Այդ ժամանակահատվածում Լատինական Ամերիկայի պարտքային ճգնաժամը հաստատեց, որ միջազգային բանկերն իրենց գործունեությամբ առանձնացնում են միջազգային ռիսկեր: Մեծ տասնյակի կառավարությունները կոմիտեի օգնությամբ լուծեցին կապիտալի համարժեքության հետ ծառայած վաղեմի խնդիրները: Այս համաձայնության մեծագույն արդյունքը ռիսկի չափման կշռված մեթոդի ներդրումն էր և բանկերի հաշվեկշռում, և հաշվեկշռից դուրս: Այս որոշումը մեծ տասնյակի կառավարությունները փոխանցեցին իրենց բանկերին 1988թ. և պահանջեցին, որ մինչև 1992թ. կապիտալ-ռիսկով կշռված ակտիվների հարաբերակցությունը առնվազն լինի 8%: Կապիտալի համարժեքության պահանջին փորձում էին անցնել ոչ միայն Բազելյան կոմիտեի անդամ երկրներ, այլ և երկրներ, որոնց բանկային համակարգը հավակնում էր միջազգային գործունեություն վարել: Այնուհետև բազմաթիվ ճշգրտումներ են մտցվել կապիտալի համարժեքության նորմի մեջ՝ փոխելով և կապիտալի մաս կազմող ակտիվների ցանկը, և դրանց տրվող ռիսկերը:

2004թ. հունիսին Բազելյան կոմիտեն առաջ է բերում Կապիտալի վերափոխված չափանիշները, որը լայն շրջանակներում հայտնի է որպես Բազել 2: Բազել 2-ը ուներ երեք հիմնասյուներ՝

1. կապիտալի նվազագույն չափի հաստատում, որը դեռ Բազել 1-ի ժամանակ նպատակադրված էր իրագործել,
2. կազմակերպության կապիտալի համարժեքության և ներքին գնահատման վերահսկողության վերանայում,
3. բացահայտումների արդյունավետ օգտագործում որպես համակարգի կարգապահության և առողջ բանկային գործունեության խրախուսման լծակ:

Նոր մոտեցումները պետք է կարգավորողին հնարավորություն և տային առավել համաչափ արձագանքելու թաքնված ռիսկերին և ֆինանսական նորարարություններին, որոնք ի հայտ են եկել Բազել 1-ից հետո: Վերջնական տարբերակը հրապարակվեց 2006թ. Բազել 2²⁹ համախմբված աշխատանքով:

Բազել 2-ի ներդրման ժամանակ կոմիտեի անդամ երկրները հանդիպեցին բազմաթիվ խնդիրների, մասնավորապես ռիսկի հաշվարկման մեթոդաբանությունն առաջացնում էր օրենսդրական հակասություններ տեղի կարգավորողների համար: Սակայն այս խնդիրն արդեն 1996թ. Բազելյան կոմիտեն հանդիպել էր, իսկ կարգավորողները լուծումները մասամբ պատկերացնում էին:

2008թ. ֆինանսական ճգնաժամն ապացուցեց, որ Բազել 2-ի հիմնադրույթները վերանայման անհրաժեշտություն ունեն: Բանկային համակարգը մուտք գործեց ճգնաժամի փուլ մեծ պարտավորություններով և անհամապատասխան իրացվելիության պահուստներով: Այս խնդիրները մեկտեղվել էին թույլ կառավարման մակարդակով և ռիսկի մենեջմենթով:

Բազելյան կոմիտեն հերթական անգամ ստիպված էր խտացնել Բազել 2-ի վերահսկողական դաշտը: 2010թ. հուլիսին հրապարակվում է Բազել 3-ը³⁰: Այս փաստաթղթում վերափոխվում են կապիտալի և իրացվելիության չափանիշները: Մասնավորապես, խտացվում է ռիսկի կառավարման վերահսկողությունը, մեծացվում է նվազագույն կապիտալի պահանջը, անդրադարձ է կատարում ստորև բերված միջարք նորարարությունների՝

- կապիտալը բաժանվում է շերտերի, որը հնարավորություն է տալիս խուսափել վերահաս կորուստներից,
- սահմանվում է կապիտալի հակացիկլիկ պահուստ, որը սահմանափակում է բանկին կրեդիտային համընդհանուր կորուստների հավանականությունից,
- լեվերիջի դրույթ, որը ցույց է տալիս, թե կորստի որտուր ուղարկվելու է մարվել կապիտալի հաշվին,

²⁹ St'u Basel Committee on Banking Supervision, ' ' International Convergence of Capital Measurement and Capital Standarts' ' , 2006.

³⁰ St'u Basel Committee on Banking Supervision, ' ' Basel 3: International Framework for Liquidity Risk Measurement, Standarts and Monitoring' ' , 2010. pp. 1-5.

➤ իրացվել ի ու թյ ան պահանջներ, որոնք արտահայտվում են երկու ցուցանիշների միջոցով՝

1. իրացվել ի ու թյ ան ծածկման գործակից³¹ պահպանել բավարար կանխիկ միջոցներ, ինչը հնարավորություն կտա երեսնօրյաստի ժամանակ ամբողջությամբ բավարարել պարտավորությունները,
2. գուտ կայունության ֆինանսավորման գործակից³² նախատեսված է ավելի երկարաժամկետ կայունության պահպանման համար:

Բազել 3-ի խտացումները էապես կնվազեցնեն բանկային համակարգի և առանձին բանկերի գործունեության խաթարման հավանականությունը: Անդամ երկրների ներկայացուցիչները պնդում են, որ այն իր խտությունը այնուամենայնիվ չի վնասի տնտեսության իրական հատվածին: Ընդունված խտացումները որոշակի ժամանակացույցով պետք է ներդրվեն անդամ երկրների բանկային համակարգեր 2012-2019թթ.:


ՀՀ ԿԲ-ն հետևողական է Բազելյան կոմիտեի առաջարած պահանջներին և առաջարկություններին, ավելին՝ որոշ դեպքերում Հայաստանում նորմատիվներն ավելի խիստ են, քան դրանք առաջարկվում են: ՀՀ բանկային համակարգը անմասն չի մնում ռիսկերի կառավարման արդիական համակարգերի կիրառման ուղղությամբ, սակայն ինչպես բոլոր երկրներում, այնպես էլ մեզ մոտայս ուղղությամբ գոյություն ունեն նշանակալի խնդիրներ:

Վերոբերված ռիսկերից ՀՀ-ում գործող առևտրային բանկերի համար առավել կարևոր է վարկային ռիսկի գնահատման և կառավարման գործընթացը, քանի որ այստեղ բանկային գործունեության մասնագիտական ուղղությունը վարկավորումն է: 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ առևտրային բանկային համակարգի ընդհանուր ակտիվները կազմում է 3,457,080 մլն. ՀՀ դրամ, վարկերը՝ 2,119,513 մլն. ՀՀ դրամ, որը կազմում է ընդհանուր ակտիվների մոտ 61 տոկոսը³³:

³¹ LCR-Licuidity Coverage Ratio

³² NSFR-Net Stable Funding Ratio

³³ Տե՛ս <https://www.cba.am/am/SitePages/statfinorg.aspx>:



Գծապատկեր 1³⁴: ՀՀ բանկային համակարգի չաշխատող վարկեր և ընդհանուր վարկերի հարաբերակցությունը՝ ըստ 2005-2015 թթ

Գծապատկեր 1-ում ներկայացված է ՀՀ բանկային համակարգի չաշխատող վարկեր ընդհանուր վարկեր հարաբերակցությունը: Նկատելի է, որ 2008թ. սկիզբ առած ճգնաժամը էապես ազդել է ինդիքի վարկերի ծավալի մեծացման վրա: ՀՀ տնտեսության ներկայիս վիճակը և սպաստավոր չէ վարկերի աշխատունակության իմաստով: Այդ պատճառով կարելի է նկատել, որ նշված հարաբերակցությունը 2016թ. սկզբին հասել է 2008թ. ճգնաժամի մակարդակին: Այսպիսի վիճակագրությունը մեկ անգամ ևս ապացուցում է վարկային ռիսկի ուղղությամբ իրականացվելիք վերլուծությունների արդիականությունը մի կողմից, մյուս կողմից բանկերում վարկերի գնահատման և կառավարման առավել արդյունավետ մոտեցումների անհրաժեշտությունը:

ՀՀ-ում գործող բանկերի տարեկան հաշվետվությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վարկային ռիսկի ռազմավարության մշակման և ամրագրման իմաստով դրանց քաղաքականությունները առաջավոր աշխարհում ընդունված մոտեցումներին շատ նման են: Սակայն հիմնական տարբերությունը կայանում է ամրագրված ռազմավարության իրացման գործընթացում, քանի որ վարկային ռիսկի կառավարումը հանդես է գալիս մեկ վարկը տրամադրելու, մեկ էլ ինդիքի վարկերի վերադարձելիությունը ապահովելու ժամանակ: Վարկի տրամադրումը իրականացվում է հիմնականում վարկունակության

³⁴ Տե՛ս <https://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx>:

գնահատականով, իսկ ապահովության միջոցները գրավն է և երաշխավորությունները:

Այստեղ բաց է մնում վարկային ռիսկի կառավարման շատ կարևոր մաս՝ վարկի ընթացիկ դիտարկումը: Ընթացիկ դիտարկումը բանկին պետք է հնարավորություն ընձեռի վարկառուից շուտ հայտնաբերել ապագայում սպասվելիք խնդիրները: Սա թվում է վերամբարձ գաղափար, սակայն ինչպես արդեն նշվել է, վարկային ռիսկը բանկի համար մասնագիտական ուղղություն է: Դանշանակում է, որ բանկը երբեմն պետք է հաճախորդից առավել լավ տեղեկացված լինի վերահաս ռիսկերի մասին՝ հիմնվելով տնտեսության, դրա ճյուղերի և ոլորտների վերաբերյալ գիտելիքների և տիրապետած վիճակագրության վրա:

Մինչ 2008թ. վարկային ռիսկի կառավարումը կարելի էր անվանել գործունակ, քանի որ ապահովության միջոցը՝ հիմնականում անշարժ գույքը, անընդհատ թանկանում էր: Եվ եթե անգամ վարկառուն չէր սպասարկում վարկը, ապա գրավի իրացումը դառնում էր խնդրի լուծման երկկողմանի շահավետ տարբերակ: Սակայն այս իրավիճակը կտրուկ փոխվեց անշարժ գույքի գների անկման պատճառով: Ինչպես երևում է տարածաշրջանային մակրոտնտեսական զարգացումներից, անշարժ գույքի գների նախկին աճողական դինամիկան չի վերականգնվի: Սա իր հերթին նշանակում է, որ բանկերը վարկավորման քաղաքականությունը պետք է փոխեն:

Վարկային ռիսկի ուսումնասիրությունը ընդհանրապես տնտեսությունում գործող բոլոր բանկերի համար չի կարող ուղղված լինել կոնկրետ վարկերի ռիսկի գնահատմանը, քանի որ այդ պարագայում գործ ունենք բանկային գաղտնիքի հետ: Այսինքն գնահատականները պետք է տրվեն հրապարակվող ցուցանիշների հիմքերի վրա:

Ինչպես արդեն նշվել է, վարկային ռիսկի կառավարումը սկսվում է վարկի տրամադրման գործընթացից: Իսկ վարկի տրամադրումը հիմնականում համապատասխանում է բանկի վարկավորման քաղաքականությանը: Այդ քաղաքականությունը սկսվում է տնտեսության ճյուղերի ընտրությունից: Տնտեսության ճյուղի սուբյեկտներին վարկավորելիս բանկը իր ակտիվներում

ներառում է ճյուղից բխող ռիսկերը: Հայտնի է, որ ՀՀ բանկերն իրականացնում են պահուստավորում վարկերի համար՝ կախված դասակարգումից: Եթե բանկն ունի մեծ ծավալի դասակարգված վարկեր, ապա վարկերի գծով հավանական կորուստների պահուստը մեծ կլինի (այստեղ հաշվի չի առնվում բանկի կամավոր պահուստավորումը, քանի որ սովորաբար դա էապես չի շեղվում ՀՀ ԿԲ կողմից սահմանված պահուստավորման սահմանաչափերից): Սա նշանակում է, որ որքան նշված պահուստավորումը մեծ է միավոր վարկի հաշվով, այնքան բանկի բանկային ռիսկի կառավարման համակարգը թույլ է (որպես գնահատական դիտարկվում է պահուստի և վարկերի հարաբերությունը, որպեսզի չեզոքացվի բանկերի մասշտաբների տարբերությունը): Աղյուսակ 2-ում ներկայացված է պահուստ/վարկեր հարաբերակցությունը ՀՀ բանկային համակարգի համար երեք ժամանակաշրջանի համար:

Աղյուսակ 2³⁵. ՀՀ բանկային համակարգի պահուստ-վարկեր ցուցանիշը՝ ըստ 2014-2016թթ.:

Ամսաթիվ	31.12.2014թ.	31.12.2015թ.	30.09.2016թ.
Պահուստ/վարկեր ցուցանիշ (տոկոս)	2.97	4.1	4.2

Աղյուսակ 2-ից նկատվում է, որ ՀՀ բանկային համակարգում վարկային ռիսկը գնալով մեծանում է, քանի որ պահուստավորումը աստիճանաբար մեծանում է:

Այս պնդումը ճիշտ է նաև այն դեպքում, երբ բանկն իրականացնում է հավելյալ պահուստավորում՝ անկախ վարկերի դասակարգումից, քանի որ հավելյալ դասակարգումը իրացվելի ակտիվների հաշվին է իրականացվում, ինչը փոքրացնում է կապիտալի օգտագործման արդյունավետությունը: Ստորև՝ աղյուսակ 3-ում ներկայացվում է ՀՀ բանկերի՝ վարկերից հավանական կորուստների պահուստների և վարկերի ծավալների հարաբերությունները:

Ամերիաբանկը այս ցուցանիշի գծով լավագույն դիրքն է զբաղեցնում, իսկ Բիբլոս Բանկը՝ վատագույն: Եթե ուշադիր ուսումնասիրենք աղյուսակը, ապա պարզ կդառնա, որ միավոր վարկի գծով պահուստի մակարդակը կախված չէ բանկի մեծությունից, ինչը

³⁵ Տե՛ս <https://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx>:

օրինաչափ չէ, քանի որ մեծ բանկերը պետք է ունենան վարկային ռիսկի կառավարման մասնագիտական բարձր մակարդակ՝ ունենալով \$ֆինանսական և կադրային մեծ հնարավորություններ:

Փոքր բանկերը հիմնականում ուղղում են իրենց գործունեությունը վարկավորմանը, քանի որ այլ \$ֆինանսական միջնորդությունների լայն հնարավորություններ չունեն: Սա իր հերթին նշանակում է, որ ակտիվ և ռիսկային վարկավորումը կբերի վարկային ռիսկի կուտակմանը: Ի հակադրում այս մոտեցմանը՝ ՀՀ որոշ փոքր բանկերի վարկային ռիսկերի կառավարումը մրցակցում է խոշոր բանկերի համակարգերի հետ:

Ուսումնասիրության իմաստով անհրաժեշտ է յուրաքանչյուր բանկի համար այս ցուցանիշը ներկայացնել դիսամիկայում, այդ նախատված ստորև ներկայացված են բոլոր բանկերի պահուստ/վարկեր ցուցանիշները և կարգաթվերը 2014 և 2015թթ. դեկտեմբերի 31-ի և 2016թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ:

Աղյուսակ 3³⁶. ՀՀ առևտրային բանկերի պահուստ/վարկեր ցուցանիշը և դրանց կարգաթվերը՝ ըստ 2014-2016 թթ.:

Ամսաթիվ	31.12.2014		31.12.2015		30.09.2016	
	Պահուստ/վարկ ցուցանիշ (տոկոս)	Կարգաթիվ	Պահուստ/վարկ ցուցանիշ (տոկոս)	Կարգաթիվ	Պահուստ/վարկ ցուցանիշ (տոկոս)	Կարգաթիվ
Պրոմեթեյ Բանկ	1.51	4	1.50	1	1.11	1
Հայ Էկոնոմբանկ	1.39	3	1.67	2	1.94	4
Ամերիաբանկ	0.97	1	1.69	3	2.28	5
Հայբիզնեսբանկ	2.26	8	1.99	4	1.81	2
Մեյլ Լաթ Բանկ	1.36	2	2.20	5	5.2	15
Արարատբանկ	2.40	10	2.40	6	2.32	6
Արդշինբանկ	2.00	7	2.47	7	1.82	3
Ինեկոբանկ	1.65	5	2.84	8	3.87	11
Արմավիսբանկ	3.21	13	3.01	9	3.46	9
Էյչ-Էս-Բի-Սի Բանկ	1.78	6	3.03	10	4.31	14
Արցախբանկ	5.65	19	3.23	11	3.08	8
Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ	5.27	18	3.85	12	4.29	13
Յուրեյ Բանկ	3.66	15	3.99	13	3.85	10
Անելիք Բանկ	2.64	11	4.05	14	2.96	7
Կոնվերս Բանկ	3.36	14	4.63	15	3.98	12
Չարգացման Հայկական Բանկ	3.98	16	5.54	16	6.44	16

³⁶ Տես ՀՀ առևտրային բանկերի \$ֆինանսական հաշվետվությունները:

ՎՏԲ-Յայ աստան Բանկ	4.21	17	6.69	17	9.73	17
Բիբլոս Բանկ	8.28	21	17.73	18	16.27	18
ՊրոԿրեդիտԲանկը	2.29	9				
ԲՏԱ Բանկ	2.92	12				
Առեկսիմբանկ	6.17	20	32.11	19	29.68	19

Աղյուսակ 3-ից պարզ է դառնում, որ պահուստ/վարկեր ցուցանիշի իմաստով առևտրային բանկերի վիճակը դինամիկ է, ինչև արտահայտվում է նրանով, որ 2016թ. որոշ բանկեր վատթարացրել են իրենց դիրքերը (Յայ Էկոնոմբանկ, Ամերիաբանկ, Մելլաթ Բանկ, Ինեկոբանկ, Էյչ-Էս-Բի-Սի Բանկ, Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկը), որոշները՝ բերել ավել (Յայ բիզնեսբանկ, Արդշինբանկ, Արցախբանկ, Յունիբանկ, Անելիք Բանկ, Կոնվերս բանկ), մի քանիսը՝ պահպանել (Պրոմեթեյ Բանկ, Արարատ Բանկ, Արմսվիսբանկ, Չարգացման Յայ կական Բանկ, ՎՏԲ-Յայ աստան Բանկ, Բիբլոս Բանկ, Առեկսիմբանկ):

Որպեսզի բացահայտենք, թե տնտեսության տարբեր ճյուղերի վարկավորումն ինչպես է ազդում վարկային ռիսկի վրա, ուսումնասիրենք վարկերից հավանական կորուստների պահուստի կախվածությունը տնտեսության ճյուղերին տրված վարկերի մեծություններից: Այստեղ կարելի էր կիրառել ռեգրեսիոն անալիզ, սակայն դրա համար անհրաժեշտ վիճակագրական տվյալները բավարար չեն (պայմանավորված է բանկերի քիչ քանակով և հրապարակվող վիճակագրության անհամատեղելիությամբ):

Փոխարենը կօգտագործվի կորելացիայի գործակիցը, որը ցույց է տալիս տվյալների երկու շարքերի միջև կախվածության ուղղությունը և ուժգնությունը³⁷: Ինչպես վերևում նշվեց, վարկերի ճյուղային կառուցվածքն Էական ազդեցություն ունի վարկային ռիսկի վրա: Այդ նպատակով կառուցենք ճյուղային վարկեր և պահուստներ գրաֆիկները: Բանկերն իրենց վարկերի ճյուղային կառուցվածքը ներկայացնում են առևտուր, մանրածախ առևտուր, մեծածախ առևտուր, շինարարություն, անշարժ գույք, Էներգետիկա, Էլեկտրաէներգիայի արտադրություն, գյուղատնտեսություն և անտառապահություն, արդյունաբերություն, արտադրություն, սննդի և խմիչքի արտադրություն, տրանսպորտ և կապ, ծառայություններ, պետական և

³⁷ St'u Neil A. Weiss, "Introductory Statistics" Arizona State University, Addison-Wesley, 2012, pp. 656-660.

տեղական ինքնակառավարման մարմիններ, հիփոթեքային, սպառողական և այլ վարկային հոդվածներով: Բայց, քանի որ այս հոդվածները բոլոր բանկերի հաշվետվություններում գոյություն չունեն, ապա պետք է խմբավորել և ներկայացնել հիմնական՝ առևտուր, շինարարություն, գյուղատնտեսություն, արդյունաբերություն, սպառողական և այլ ճյուղերի միջոցով:

Գծապատկեր 2-ում ներկայացված են ՀՀ-ում գործող բանկերի առևտրի ոլորտում տրված վարկերը և վարկերից հավանական կորուստների պահուստի³⁸ տվյալները խաչաձև գրաֆիկի տեսքով: Կորելացիայի գործակիցը հավասար է 0.33, ինչը նշանակում է, որ նշված երկու գործոնների մեջ առկա է թույլ դրական կախվածություն (տես աղյուսակ 5-ը):


Աղյուսակ 4³⁹: Բանկերի համարները սույն հետազոտության համար:

Համար	Բանկ	Համար	Բանկ
1	ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՒԼ ԲԱՆԿԸ	11	Չարգացման Հայկական Բանկ
2	Ամերիաբանկ	12	Էյչ Էս Բի Սի Բանկ
3	Անել իք Բանկ	13	ԻՆԵՎՈՒՍԲԱՆԿ
4	Առեկսիմբանկ	14	Կոնվերս բանկ
5	ԱՐԱՐԱՏԲԱՆԿ	15	Հայբիզնեսբանկ
6	Արդշինբանկ	16	ՀԱՅԷԿՈՆՈՍԲԱՆԿ
7	ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ	17	Մելլաթ Բանկ
8	Արցախբանկ	18	Յոնիբանկ
9	Բիբլոս Բանկ	19	ՊրոԿրեդիտ Բանկը
10	ԲՏԱ Բանկ	20	Պրոմեթեյ Բանկ
		21	ՎՏԲ-Հայաստան Բանկ

Աղյուսակ 4-ում ներկայացված են բանկերի համարները, որոնք կիրառվում են ստորև բերված խաչաձև գրաֆիկներում:

³⁸ Բոլոր գրաֆիկներում ներկայացված է բանկերի վարկերից հավանական կորուստների ամբողջ պահուստը, ոչ թե յուրաքանչյուր ոլորտի վարկերի գծով, քանի որ դափսի վիճակագրություն կարելի է գտնել միայն երկու բանկերի հրապարակային հաշվետվություններում: Բոլոր գրաֆիկներում արսցիսում ներկայացված են համապատասխան ոլորտի վարկերը, օրդինատում՝ պահուստները:

³⁹ Կարգավերը օգտագործվում են հետազոտվելու ծնունդի համար:



Գծապատկեր 2⁴⁰: Առևտրի ոլորտի վարկեր-պահուստ՝ ըստ 2014թ.-ի:


Առևտրի ոլորտում տրված վարկերի և պահուստների թույլ կորելացիան ճշգրիտ է մինչև 2014թ.: 2015թ. աչքի է ընկնում առևտրի կտրուկ անկումով:

Աղյուսակ 5: Կորելյացիայի գործակիցը և Նշանակությունը

Դրական կորելացիա		Բացասական կորելացիա	
Գործակիցը	Նշանակությունը	Գործակիցը	Նշանակությունը
0,00-0,19	շատթույլ	-0,00(-0,19)	շատթույլ
0,20-0,39	թույլ	-0,20(-0,39)	թույլ
0,40-0,59	միջին	-0,40(-0,59)	Միջին
0,60-0,79	ոլժեղ	-0,60(-0,79)	Ոլժեղ
0,79-1,0	շատոլժեղ	-0,79(-1,0)	շատոլժեղ


Չափորոշը շինարարության ոլորտն է, որի խաչաձև գրաֆիկը ներկայացված է Գծապատկեր 3-ում: Կորելյացիայի գործակիցը հավասար է 0,54, ինչը վկայում է միջին դրական կորելյացիայի մասին: Այս արդյունքը հիմնավորվում է 2008թ. սկիզբ առած ֆինանսատնտեսական ճգնաժամի ազդեցությամբ, քանի որ հայտնի է, որ այդ ճգնաժամից առավել ապեստուժել է շինարարության ոլորտը:

⁴⁰ ՅՅ առևտրային բանկերի ֆինանսական հաշվետվություններից՝ առևտրի ոլորտում տրված վարկեր և պահուստներ:



Գծապատկեր 3: Ճինարարու թյան ոլորտի վարկեր-պահուստ՝ ըստ 2014թ.-ի:


Գծապատկեր 4-ում ներկայացված է գյուղատնտեսության ոլորտում տրված վարկերի և պահուստների խաչաձև գրաֆիկը: Այդ երկու փոփոխականների կորելյացիայի գործակիցը 0,75, ինչը վկայում է ուժեղ դրական կորելյացիայի մասին: Այս արդյունքը ևս հիմնավորվում է տնտեսագիտության տեսական մոտեցումներով, քանի որ գյուղատնտեսության ոլորտը բարձր ռիսկային է համարվում: Այստեղ նկատելի է դառնում, որ ոլորտում տրված պետական երաշխիքները մեծապես չեն նպաստում ռիսկերի կրճատմանը:



Գծապատկեր 4: Գյուղատնտեսության ոլորտի վարկեր-պահուստ՝ ըստ 2014թ.-ի:

Գծապատկեր 5-ում ներկայացված է արդյունաբերության ոլորտում տրված վարկերի և պահուստների խաչաձև գրաֆիկը:


Գրաֆիկից պարզ է դառնում, որ ոչ որտեղ հիմնական վարկավորում են խոշոր բանկերը՝ Ամերիաբանկը, Էյ Ջ -Էս-Բի-Սի Բանկը, ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՆ ԲԱՆԿԸ և այլն: Այս ոչ որտեղ կորելյացիայի գործակիցը 0,33, ինչը վկայում է թույլ դրական կորելյացիայի մասին: Սակարելի է բացատրել վարկառուների խոշորությամբ, քանի որ արդյունաբերության ոչ որտեղ հիմնական վարկառուները հանքարդյունաբերության հզոր ընկերություններն են, որոնք իրականացնում են իրենց պարտավորությունները պարտաճանաչ:



Գծապատկեր 5: Արդյունաբերության ոչ որտեղ վարկեր-պահուստ՝ ըստ 2014թ.-ի:


Գծապատկեր 6-ում ներկայացված է սպառողական վարկերի և պահուստների խաչաձև գրաֆիկը: Կորելյացիայի գործակիցը հավասար է 0,81, ինչը վկայում է շատ ուժեղ դրական կորելյացիայի մասին: Սակարելի է բացատրել որոշ բանկերի խիստ ռիսկային սպառողական վարկավորմամբ՝ առանց վարկունակության գնահատականի և երաշխիքների:

Սպառողական վարկերի տրամադրման նման մոտեցումը էապես վտանգում է հասարակության ընդհանուր վարկունակություն: Այսպիսի քաղաքականությունը երաշխավորողների ինստիտուտի միջոցով նաև վնասում է այլ արտենցիալ վարկառուների, որոնց վարկային պատմությունը տուժում է բանկերի և վարկառուների անհետևողական վարքի հետևանքով:



Գծապատկեր 6: Սպառողական վարկեր-պահուստ՝ ըստ 2014թ.-ի:

Գծապատկեր 7-ում ներկայացված է ՀՀ բանկերի տրամադրած ճյուղային հստակ կառուցվածք չունեցող վարկերը՝ այլ անվանմամբ: Դրանց և պահուստի կորելյացիան 0,18, ինչը վկայում է շատ թույլ կորելյացիայի մասին: Սա նշանակում է, որ բանկերն իրենց ոչ որակյալ վարկերը չեն կուտակել այլ վարկերի դասակարգման մեջ:



Գծապատկեր 7: Այլ վարկեր-պահուստ՝ ըստ 2014թ.-ի:

Վերը հաշվարկված ՀՀ բանկային համակարգի ճյուղային վարկավորման և պահուստների կորելյացիայի գործակիցները (աղյուսակ 6), որոնք թույլ են տալիս գնահատել յուրաքանչյուր ճյուղի ազդեցության հարաբերական ուժգնությունը վարկավորման հետևանքով ձևավորված հավանական կորուստների պահուստի վրա:

Աղյուսակ 6: ՀՀ բանկային համակարգի ճյուղային վարկավորման և պահուստների կորելյացիայի գործակիցները՝ ըստ 2014թ.-ի:

Համար	Տնտեսության ճյուղ	Կորելյացիայի գործակիցը
1	Սպառողական	0,81
2	Գյուղատնտեսություն	0,75
3	Շինարարություն	0,54
4	Առևտուր	0,33
5	Արդյունաբերություն	0,33
6	Այլ	0,18

Ընդհանրացնելով իրականացված վերլուծության արդյունքները՝ կարելի է փաստել, որ առաջարկված գնահատման եղանակը լավագույնս արտահայտում է բանկերում ռիսկերի կառավարման մակարդակը: Եղանակի կիրառությունը հնարավոր է ընդլայնել՝ վերլուծությունը իրականացնելով տարբեր ժամանակահատվածների համար: Այդ արդյունքները հնարավորություն կտան պարզել տնտեսության առավել ռիսկային ճյուղերը և ռիսկերի կուտակումների դինամիկան: Այս արդյունքները հետաքրքրական են առաջին հերթին բանկերի համար, քանի որ կարգավորող մարմինը, ըստ երկրորդ տիրապետում է ռիսկերի ձևավորման գործընթացներին, իսկ բանկերը առաջին հերթին ուշադրությունը կենտրոնացնում են սեփական միջոցների կառավարման արդյունավետության վրա:

1.3. Հայաստանի Հանրապետության բանկային համակարգը և դրակարգավորման առանձնահատկությունները

ՀՀ բանկային համակարգը, դրա ֆինանսական կայունությունը և կարգավորման դաշտը պայմանավորված են ոլորտի կայացման ընթացքով, օրենսդրական ակտերով և վերահսկողության առանձնահատկություններով: Այդ նպատակով ստորև համառոտ ներկայացվում է այժմյան բանկային համակարգի զարգացման ուղին:

Պետք է նշել, որ բանկային գործունեությանը վերաբերող մի շարք օրենսդրական ակտեր հաստատվել են մինչ 2000-ականները: Այդ թվում՝ «ՀՀ կենտրոնական բանկի մասին», «Բանկերի և բանկային գործունեության մասին», «Բանկերի սնանկության մասին», «Բանկային գաղտնիքի մասին» օրենքները, որոնք մեծապես կարգավորում էին ոլորտը: «ՀՀ կենտրոնական բանկի մասին» օրենքով Կենտրոնական բանկի հիմնական խնդիրը ՀՀ-ում գների կայունության ապահովումն է, իսկ այլ նպատակներից են՝

- Հայաստանի Հանրապետության ֆինանսական համակարգի կայունության և բնականոն գործունեության ապահովումը, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության բանկային համակարգի կայունության, իրացվելիության, վճարունակության և բնականոն գործունեության համար անհրաժեշտ պայմաններ ապահովելը.
- գործուն վճարահաշվարկային համակարգ ստեղծելն ու զարգացնելը.
- Հայաստանի Հանրապետության արժույթի թողարկումը, դրամաշրջանառության կազմակերպումը և կարգավորումը.
- արժեթղթերում ներդրողների պաշտպանության, շուկայում արժեթղթերի արդար գնագոյացման համակարգի ձևավորման ու պահպանման, արժեթղթերի արդար, թափանցիկ և վստահելի շուկայի կանոնակարգված և բնականոն գործունեության և զարգացման համար անհրաժեշտ պայմանների ապահովումը.
- ֆինանսական համակարգում սպառողների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության համար անհրաժեշտ պայմանների ապահովումը:

Հետագայում նշանակալի փոփոխություններ են իրականացվում վերոնշյալ փոփոխություններում՝ ավելացնելով ոլորտը կարգավորող նոր օրենքներ՝

- «Ինկասացիայի մասին» ՀՀ օրենքը,
- «Վճարահաշվարկային համակարգի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքը,
- «Արժույթային կարգավորման և արժույթային վերահսկողության մասին» ՀՀ օրենքը,

- «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցման երաշխավորման մասին» ՀՀ օրենքը,
- «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքը,
- «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքը,
- «Ապահովված հիփոթեքային պարտատուների մասին» ՀՀ օրենքը,
- «Ակտիվների արժեթղթավորման և ակտիվներով ապահովված արժեթղթերի մասին» ՀՀ օրենքը,
- «Բանկային ավանդների ներգրավման մասին» ՀՀ օրենքը,
- «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքը,
- «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքը,
- «Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին» ՀՀ օրենքը,
- «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքը,
- «Համահայկական բանկի մասին» ՀՀ օրենքը:

Վերոնշյալ օրենսդրական նախաձեռնությունները գրեթե ամբողջությամբ համակարգում են ներկայիս ֆինանսական համակարգի գործունեությունը և վերահսկողությունը: 2010թ. իրականացված փոփոխություններից նշանակալիս ֆիզիկական անձանց ավանդների հատուցման գումարի կրկնապատկումն էր՝ դրամային բանկային ավանդները երաշխավորվում են 4 000 000 ՀՀ դրամի չափով, իսկ արտարժույթային ավանդները՝ 2 000 000 ՀՀ դրամի չափով:

2015թ. նոյեմբերի 28-ից գործողության մեջ են դրվել երաշխավորված ավանդի նոր սահմանաչափերը, որոնց համաձայն՝ ՀՀ տարածքում գործող բանկերում միայն դրամային ավանդների երաշխավորման առավելագույն չափը կազմում է 10 000 000 ՀՀ դրամ, իսկ միայն արտարժույթային ավանդների երաշխավորման առավելագույն չափը՝ 5 000 000 ՀՀ դրամ:

Բանկային գործունեության կարգավորման և վերահսկողության ոլորտում Հայաստանի Հանրապետությունը Վենտրոնական բանկի միջոցով անդամակցում և համագործակցում է մի շարք միջազգային կազմակերպությունների հետ: 1992թ.

Հայաստանը հանդիսանում է Արժույթի Միջազգային Հիմնադրամի⁴¹ անդամ: Նույն ժամանակաշրջանում Հայաստանը անդամակցում է Համաշխարհային բանկի խմբի մի շարք միջազգային կազմակերպությունների՝ Վերակառուցման և զարգացման միջազգային բանկ⁴²(1992թ.), Միջազգային զարգացման ասոցիացիա⁴³(1993թ.), Միջազգային ֆինանսական կորպորացիա⁴⁴(1995թ.), Ներդրումների երաշխավորման բազմակողմանի հիմնադրամ⁴⁵(1995թ.), Ներդրումային վեճերի կարգավորման միջազգային կենտրոն⁴⁶(1992թ.): Հայաստանը համագործակցում է նաև Եվրոպայի վերակառուցման և զարգացման բանկի⁴⁷(1992թ.) հետ, և հանդիսանում է հետևյալ միջազգային կազմակերպությունների հիմնադիր անդամ՝ Միջկառավարական բանկ⁴⁸(1993թ.), Սևծովյան առևտրի և զարգացման բանկ⁴⁹(1997թ.): Հետագայում նաև անդամակցում ենք Ասիայի զարգացման բանկին⁵⁰(2005թ.), Եվրասիական զարգացման բանկին⁵¹ և այլ միջազգային կառույցներին, որոնց կողմից ներդրվում է կարգավորման և վերահսկողության միջազգային նորմեր՝ խորացնելով ինտեգրացիոն գործընթացները զարգացած և զարգացող երկրների հետ:

Հայաստանի Հանրապետության ՆԱԽԱՆԱՍԱԿԱՆ ֆինանսական հատվածի գլխավոր կարգավորողը Կենտրոնական բանկն է: Ըստ ՀՀ նոր սահմանադրության 200 հոդվածի 2-րդ կետի՝ Կենտրոնական բանկի հիմնական նպատակներն են գների և ֆինանսական կայունության ապահովումը: Մինչ այս փոփոխությունը, ֆինանսական կայունությունը մտնում էր կենտրոնական բանկի օրենսդրական գործառնությունների մեջ, սակայն այսուհետև այն դառնում է սահմանադրական դրույթ և կարևորվում է գների կայունության նպատակին հավասար: Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի բնորոշմամբ ֆինանսական կայունության ապահովումը

⁴¹ IMF, <http://www.imf.org>,

⁴² IBRD, <http://www.worldbank.org/en/about/what-we-do/brief/ibrd>,

⁴³ IDA, <http://www.worldbank.org/ida>:

⁴⁴ IFC, <http://www.ifc.org/>

⁴⁵ MIGA, <https://www.miga.org>

⁴⁶ IC SID, <https://icsid.worldbank.org>

⁴⁷ EBRD, <http://www.ebrd.com/>

⁴⁸ ISBNK, <http://www.isbnk.org/>

⁴⁹ BSTDB, <http://www.bstdb.org/>

⁵⁰ ADB, <http://www.adb.org/>

⁵¹ EABR, <http://www.eabr.org/>

Ֆինանսական համակարգը փլուզումից կամ խափանումից զերծ պահելն է, այնպես, որ համակարգը շարունակի ապահովել անհրաժեշտ իրացվելիության մակարդակ, գործարքների և փոխանցումների անխափան իրականացում, տնտեսության ունում խնայողությունների ներդրման ունակության պահպանում:

Ֆինանսական կայունության ապահովման գործառույթն իրականացնելու համար Կենտրոնական բանկն իր տրամադրության տակ ունի մի շարք գործիքներ, որոնցից կարելի է ընդգծել .

- ռիսկերի վերլուծություն և գնահատում,
- շուկայի մասնակիցների ռիսկերի ընկալմանը, տեղեկացվածության բարձրացմանն ու շահերի պաշտպանությանն ուղղված միջոցառումների իրականացում,
- Ֆինանսական ենթակառուցվածքների հսկողությանն ու բարելավմանն ուղղված գործունեության իրականացում,
- գործառնություններ Ֆինանսական շուկաներում և անհրաժեշտության դեպքում իրացվելիության տրամադրում,
- վերջին ատյանի վարկատուի գործառույթի կիրառում,
- Ֆինանսական կայունության հանձնաժողով:

Չավանական ռիսկերի բացահայտման և գսպման նպատակով Կենտրոնական բանկը շարունակաբար իրականացնում է ներքին տնտեսության և արտաքին աշխարհի Ֆինանսական համակարգի և մակրոմիջավայրի ցուցանիշների վերլուծություն, շուկաների մոնիտորինգ, հայրենական վճարահաշվարկային համակարգերի հսկողություն: Այս փուլում որպես վերլուծության առարկա են հանդիսանում ինչպես Ֆինանսական համակարգի բաղադրիչները (Ֆինանսական հաստատություններ, Ֆինանսական ենթակառուցվածքներ և Ֆինանսական շուկաներ), այնպես էլ մակրոտնտեսությունը: Ուսումնասիրվում են բոլոր այն գործոնները, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն կարող են ազդել Ֆինանսական համակարգի կայուն գործունեության վրա: Ֆինանսական կայունության գնահատման գործիք է հանդիսանում նաև ԱՄՆ-ի կողմից մշակված Ֆինանսական կայունության ցուցանիշների համակարգը (համակարգի ցուցանիշները ներկայացված են աղյուսակ 6-ում):

Աղյուսակ 7⁵²: Ֆինանսական կայունության գուցանիշները ՀՀ բանկային համակարգի համար 2005-2016թթ.:

Ֆինանսական կայունության հիմնական գուցանիշները բանկային համակարգի համար (տկոսային արտահայտությամբ)	Դեկտ-2005	Դեկտ-2006	Դեկտ-2007	Դեկտ-2008	Դեկտ-2009	Դեկտ-2010	Դեկտ-2011	Դեկտ-2012	Դեկտ-2013	Դեկտ-2014	Դեկտ-2015	Հուլիս-2016
Նորմատիվային ընդհանուր կապիտալ/ռիսկով կշռված ակտիվներ	33.7	34.9	30.1	27.5	28.4	22.2	18.3	16.8	16.7	14.5	16.2	17.8
Նորմատիվային հիմնական կապիտալ (Tier 1)/ռիսկով կշռված ակտիվներ	31.7	32.7	29.0	26.9	26.7	20.2	16.7	15.2	14.5	12.7	14.0	15.0
Չափաորոշված ընդհանուր վարկեր	2.0	2.4	2.4	4.3	4.9	3.0	3.4	3.7	4.5	7.0	8.0	9.9
Շահույթաբերությունը ըստ ակտիվների	2.9	3.9	3.5	3.5	1.0	2.8	2.4	2.5	1.9	1.0	-0.5	0.2
Շահույթաբերությունը ըստ կապիտալի	13.7	17.2	16.0	15.2	4.8	12.3	12.7	14.7	12.0	6.4	-3.5	1.2
Իրացվելի ակտիվներ/ընդհանուր ակտիվներ	41.8	41.2	33.7	23.8	34.4	29.5	27.9	25.6	29.1	25.1	28.0	28.5
Իրացվելի ակտիվներ/ցածր արժեքի ակտիվներ	110.5	106.1	98.2	103.1	140.8	131.5	120.8	126.1	142.3	129.4	142.4	150.1

Ակնհայտ է, որ ՀՀ բանկային համակարգը ներդաշնակորեն զարգացել է ինչպես մատուցվող ծառայությունների իմաստով, այնպես էլ կարգավորման օրենսդրական նախաձեռնությունների և համաշխարհային կառույցների ինտեգրման իմաստներով: Խիստ կարգավորումը մի կողմից թույլ է տվել, որ բանկերի թիվը աստիճանաբար մեծանա, մյուս կողմից զսպել է անկայունության մակարդակի ընդունելի մակարդակից բարձրացումը: Շատ երկրներում 2008թ. ֆինանսական ճգնաժամը բանկային համակարգի միջոցով խիստ բացասական ազդեցություն ունեցավ տնտեսության վրա, ի տարբերություն այդ երկրների ՀՀ-ում որևէ բանկ չսնանկացավ, ինչը անխափան պահպանեց բանկային համակարգը և դրա հետփոխկապակցված այլ ոլորտների գործունեությունը:

ՀՀ Կենտրոնական բանկը տարեկան և կիսամյակային պարբերականությամբ հրապարակում է ֆինանսական կայունության հաշվետվություն: Այդ հաշվետվությունները կառուցված են գլոբալից դեպի մասնավորի տրամաբանությամբ: Այն սովորաբար



⁵² Տե՛ս <https://www.cba.am/am/SitePages/finstabilitycucanish.aspx>:

բաղկացած է համաշխարհային տնտեսության զարգացումները, զարգացումները Հայաստանի մակրոտնտեսական միջավայրում, Հայաստանի ֆինանսական շուկայի կայունությունը, ՀՀ ֆինանսական հաստատությունների կայունությունը, ֆինանսական կայունությունը ՀՀ ֆինանսական ենթակառուցվածքում բաժիններից: Չորրորդ բաժնում մանրակրկիտ անդրադարձ է կատարվում առևտրային բանկերի կայունությանը՝ այն դիտարկելով ֆինանսական միջնորդության, կենտրոնացվածության, վարկային ռիսկի, իրացվելիության ռիսկի, շուկայական ռիսկի, կապիտալի համարժեքության և եկամտաբերության համատեքստում:

Ինչպես նշել ենք սույն աշխատանքում, բանկային համակարգի կայունությունը գնահատող մեկ ունիվերսալ ցուցանիշ գոյություն չունի, այդ պատճառով ՀՀ ԿԲ-ն պատկերավոր կերպով դաներկայացնում է կայունության քարտեզի օգնությամբ, որն արտացոլում է բանկերին բնորոշ ռիսկերը բնութագրող ցուցանիշների փոփոխությունը երկու ժամանակաշրջանում: Բանկային կայունության վարքագծի վերաբերյալ ընդհանրական պատկերացումը տրվում է տոկոսադրույքի ռիսկի, արտարժույթի ռիսկի, կապիտալի համարժեքության, ակտիվների որակի, եկամտաբերության և իրացվելիության ցուցանիշների⁵³ դինամիկ փոփոխության օգնությամբ: Արժեքների մոտեցումը քարտեզի կենտրոնին վկայում է ռիսկի նվազման, իսկ կենտրոնից հեռացումը՝ ռիսկի աճի մասին: Բանկային համակարգի կայունության քարտեզը չի կարող մեկնաբանվել որպես ֆինանսական կայունության մակարդակի արտացոլում: Այն ընդամենը պատկերացում է տալ իսկ ներառված ռիսկերի մակարդակի փոփոխության վերաբերյալ:

Գծապատկեր 8-ում ներկայացված է ՀՀ բանկային համակարգի 2013-2014, 2014-2015թթ. կայունության քարտեզները:

⁵³ Ցուցանիշները համակարգի կայունության քարտեզում օգտագործելուց առաջ նորմավորվել են 1-10 չափողականությամբ, հաշվարկվել են ԱՄՆ մեթոդաբանությանը համապատասխան:



Գծապատկեր 8⁵⁴: ՀՀ բանկային համակարգի 2013-2014, 2014-2015 կայունության քարտեզները:

Կայունության քարտեզները ցույց են տալիս, որ 2014թ.-ին 2013-ի համեմատ ՀՀ բանկային համակարգի կայունության բոլոր ցուցանիշները վատթարացել են: Նման դինամիկան պահպանվել է նաև

⁵⁴ Տե՛ս <https://www.cba.am/am/SitePages/finstabilityreports.aspx>:

2015թ.-ին, սակայն տեղի է ունեցել իրացվել իուլթյան բարձրացում, իսկ կապիտալի համարժեքությունն ու տոկոսադրույքի ռիսկը պահպանվել են նույն մակարդակում: Իրացվել իուլթյան բարձրացումը և եկամտաբերության անկումը պայմանավորված է ընդհանուր կապիտալի օրենսդրական պահանջի մեծացմամբ, մյուս կողմից ակտիվների որակի անկումը պայմանավորված է 2009թ.-ից շարունակվող տնտեսության ճգնաժամային դրսևորումներով:

ԳԼՈՒԽ2: ՍՔՐԵՍ ԹԵՍԱԿՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՅ ԱՏԿՈՒ ԹՅՈՒՆՆԵՐԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒ ԹՅԱՆ ՀԻՄՆԱՅ ԱՐՑԵՐՈՒՄ

2.1. Սքրեսս թեստավորման էությունը և հիմնական բաղադրիչները

Վերջին տարիներին տնտեսական քաղաքականությունը և իրականացնողները և բանկերի ղեկավարները իրենց ջանքերն ուղղում են ֆինանսական կայունության ապահովմանը՝ համարելով այն տնտեսական քաղաքականության հիմնական նպատակներից մեկը, որն անկախ է մոնետար և միկրոտնտեսական կայունության խնդիրներից⁵⁵: Շատ Կենտրոնական բանկեր պարբերաբար հրապարակում են հաշվետվություններ՝ դրանցում ներկայացնելով այն գործոնները, որոնք կարող են վնասել ֆինանսական կայունությանը: Ստեղծվել են հատուկ ֆորումներ, որոնցում քննարկվում են գլոբալ իզացիայի, ֆինանսական նորարարությունների և մակրոտնտեսական տատանումների հնարավոր ազդեցությունները ֆինանսական կայունության վրա: Խոշոր ֆինանսական հաստատություններն իրենց գործունեության մի մասը նվիրել են ֆինանսական համակարգի խոցելիության վերլուծությանը:

Սակայն, ինչպես նշում է Շինասին⁵⁶ դրամավարկային և մակրոտնտեսական կայունության հետ համեմատ ֆինանսական կայունության վերլուծությունը գտնվում է սկզբնական փուլում: Յուրաքանչյուրը, ով փորձել է սահմանել ֆինանսական կայունությանը գիտի, որ դեռևս չկալայնորեն ընդունված մոդել, որի հիմքի վրա հնարավոր կլիներ գնահատել և չափել ֆինանսական կայունությունը:

Պադոա-Շիոպպայի⁵⁷ համաձայն ֆինանսական կայունությունը մի վիճակ է, որի պարագայում ֆինանսական համակարգը ի վիճակի է դիմակայել շոկերին՝ առանց խոչընդոտելու վճարահաշվարկային համակարգին և ներդրումային գործընթացներին: Ֆինանսական կայունությունը չի ենթադրում, որ ֆինանսական համակարգի բոլոր բաղադրիչները մշտապես աշխատում են առավելագույն կերպով, սակայն կայուն ֆինանսական համակարգը ի վիճակի է

⁵⁵ St'u Schinasi G., J., Responsibility of Central Banks for Stability in Financial Markets, IMF Working Paper N 121, 2013, pp. 5-9

⁵⁶ St'u Schinasi G., J., Preserving Financial Stability, International Monetary Fund Economic Issues 36, 2005, pp. 3-8

⁵⁷ St'u Padoa-Schioppa T., Central Bank and Financial Stability, Remarks at the Bank of Indonesia, Jakarta, 2003, pp. 1-8.

սահմանափակել և լուծել գոյություն ունեցող անհավասարակշռությունները:

Ֆինանսական անկայունությունները խաթարում են ֆինանսական համակարգի որոշ բաղադրիչների բնական աշխատանքը՝ ազդելով իրական հատվածի վրա և հանգեցնելով ֆինանսական համակարգի վրա բացասական հետևանքների: Ազդեցության չափը մեծապես կախված է ֆինանսական համակարգի խոցելիությունից, ֆինանսական համակարգի շոկերին դիմակայելու հնարավորություններից և ֆինանսական համակարգում անկայունությունների տարածման արագությունից⁵⁸:

Ֆինանսական համակարգի բազմաբևեռվածությունը պայմանավորված՝ տնտեսական քաղաքականություն իրականացնողների համար հիմնական մարտահրավերը ֆինանսական համակարգի վիճակի գնահատման արդյունավետ հիմքի ստեղծումն է, որը պետք է լինի քանակական չափումների և որակական ինտուիցիայի արդյունք: Այդ գործընթացը հիմնված է նախապես սահմանված կանոնների և հայեցողական դատողության վրա: Ֆինանսական համակարգի արդյունավետ գործունեությունը ենթադրում է համակարգային թերությունների հավանական թերությունների վերափոխման գործընթացի կանխումը:

Ֆինանսական կայունության գնահատման ցանկացած մոդել պետք է հաշվի առնի հետևյալ երեք երևույթները՝ ռիսկերը, որոնք թուլացնում են ֆինանսական համակարգը, շոկերը, որոնք առաջացնում են այդ ռիսկերը և տարածման մեխանիզմները, որոնք ուժեղացնում են ճգնաժամի ազդեցությունը: Դա պահանջում է ֆինանսական համակարգի առանձին տարրերի և իրական հատվածի համակարգային մոնիթորինգ:

Այսպիսով, ֆինանսական համակարգը ենթակա է համակարգային ճգնաժամերի: Ընդհանուր առմամբ, անկայունության դրսևորումները գոյություն ունեցող բացթողումների հետևանք են, իսկ արտաքին շոկը պարզապես խորացնում է ճգնաժամը. որքան խոցելի է ֆինանսական համակարգը, այնքան խիստ են ճգնաժամի

⁵⁸ St 'u Hoggarth G., Saporta V., Costs of Banking System Instability: Some Empirical Evidence, Bank of England Financial Stability Review, 2001, pp. 1-10

ազդեցությունները: Յեռնաբար, կարևոր է գնահատել մակրոտնտեսական պայմանների և ֆինանսական համակարգի կայունության միջև կապը: Առաջին քայլը ֆինանսական համակարգի առողջական վիճակի գնահատումն է: Դա կատարվում է՝ օգտագործելով միկրոտվյալներ, մակրոտնտեսական և մակրոարոևդենցիալ ինդիկատորներ: Երկրորդ քայլը համակարգի դիմադրողականության՝ արտաքին շուկերի կլանման հնարավորության գնահատումն է: Այդպիսի վերլուծությունը կատարվում է սթրես թեստերի միջոցով: Քանի որ վարկային ինստիտուտները շատ երկրների համար համարվում են ֆինանսական համակարգի հիմքը, վերլուծությունները հաճախ կենտրոնանում են բանկային հատվածի վրա:

Սթրես-թեստինգի տեխնիկան կիրառվել է անհատական մակարդակով միջազգային խոշոր բանկերի կողմից 1990թթ.-ից սկսած: Դրանք սովորաբար օգտագործվում էին բանկային ռիսկ-մենեջմենթի համատեքստում, որպեսզի լրացվեն ներքին մոդելների միջոցով ստացված արդյունքները: 1996թ.-ից սկսած բանկերին և ներդրումային կազմակերպությունների վրա պահանջ է դրվում ներառել սթրես-թեստերը իրենց ներքին մոդելների մեջ, որպեսզի դրանով գնահատեն շուկայական ռիսկերին համապատասխանող կապիտալի ծավալը, իսկ 2006թ.-ից սկսած սթրես-թեսթինգը սկսեց օգտագործվել այլ ռիսկերի գնահատման համար: Սթրես-թեստերը լուծում են երկու տարբեր կարևոր հարցեր: Առաջին հերթին դրանք բանկերին հնարավորություն են տալիս որոշել արդյո՞ք ռիսկի պարամետրերը կապված են (և եթե կապված են, ապա ինչ աստիճանով) տնտեսական այն պայմանների հետ, որոնք ձևավորվել են ուսումնասիրության և գնահատման ժամանակահատվածում: Այլ կերպ ասած՝ դրանք կարող են օգտագործվել կապիտալի պահանջների ցիկլայնության աստիճանի գնահատման համար: Ավելի ցիկլային կապիտալի պահանջներ ունեցող բանկերը պետք է ունենան կապիտալի ավելի բարձր շեմ: Երկրորդ հերթին դրանք բանկերին հնարավորություն են տալիս որոշել հավելյալ կապիտալի ծավալը, որն անհրաժեշտ է էքստրեմալ շուկայական պայմանների դեպքում:

Սթրես-թեստերը միկրոմակարդակով օգտագործվելուց բացի վերջին ժամանակներում համալրել են մակրոմակարդակով տնտեսական քաղաքականության հրականացնողների գործիքակազմը՝ դառնալով \$հնանսական կայունության վերլուծության հիմնական բաղադրիչներից մեկը: \$հնանսական հատվածի գնահատման ծրագրի շրջանակներում Արժույթի Միջազգային Հիմնադրամը և Համաշխարհային Բանկը ավելացրել են մակրոտնտեսական սթրես-թեստերը: Նմանապես զարգացած երկրների կենտրոնական բանկերը և կառավարությանները մշակում են էկոնոմետրիկ մոդելներ, որոնք ուղղված են համակարգի կայունությանը վնասող գործոնների հայտնաբերմանը և գնահատմանը:

Մակրոտնտեսական սթրես-թեստերի հիմնական նպատակը \$հնանսական համակարգի կառուցվածքային խոցելի տեղերի բացահայտումն է և շոկերին դիմակայելու աստիճանի գնահատումն է: Այս համատեքստում ազդեցացված սթրես-թեստերը հարստացնում են \$հնանսական կայունության գործիքակազմը, քանի որ դրանք պարունակում են ապագային ուղղված տեղեկատվություն հնարավոր էքստրեմալ դեպքերի ազդեցության մասին: Ավելին՝ այս տիպի մոդելավորումը հնարավորություն է տալիս դիտարկել տարբեր տնտեսական սեկտորների փոխկախվածությունները՝ բացահայտելով տնտեսական սուբյեկտների հիմնական ռիսկերը:


Գծապատկեր 9-ում ներկայացված է մակրոտնտեսական սթրես-թեստավորման հիմնական բաղադրիչները⁵⁹: Սկզբնական շոկը, որը կարող է լինել ինչպես իրական, այնպես էլ \$հնանսական, հանգեցնում է տնտեսության խոցելի տեղերի բյուրեղացմանը:

⁵⁹ St'u Haldane A., Hall S., Pezzini S., A New Approach to Assessing Risks to Financial Stability, Bank of England Financial Stability Paper 2, 2007, p. 5

Շուկի տեսակը
ազդեցությունը

Սեկտորը

Բանկերի վրա



Գծապատկերը ⁶⁰: Մակրոտնտեսական և ֆինանսական համակարգի կայունության գնահատման համակարգի մասնավորապես շուկայական ռիսկերի համակարգի վրա ազդեցությունը:

Որոշ դեպքերում շուկայական ռիսկերի ազդեցությունը է առանձին ձեռնարկությունների խնդիրների հետ (անհատական շուկայական ռիսկ), այլ դեպքերում՝ մակրոտնտեսական անհավասարակշռությունների հետ, որոնք ազդում են ամբողջ ֆինանսական համակարգի վրա (համակարգային շուկայական ռիսկ): Անկախ շուկայական ռիսկերից՝ դրա ազդեցությունը ուղղակի կամ անուղղակի կերպով փոխանցվում է ֆինանսական հատվածին: Մինչդեռ վարկային, շուկայական և իրացվելիության

⁶⁰ Գծապատկերը կառուցվել է հեղինակի կողմից՝ ամփոփելով տարբեր մոտեցումներ:

ռիսկերը կորուստների հիմնական աղբյուրն են հանդիսանում, դրանով չի սահմանափակվում ճգնաժամի հնարավոր հետևանքները, մասնավորապես՝ ինստիտուտների միջև պրտենցիալ վարակը կարող է ֆինանսական համակարգում դոմինոյի էֆեկտին հանգեցնել, և արդյունքում վտանգի կենթարկվեն այն ֆինանսական հաստատությունները, որոնց վրա սկզբնապես շոկը չի ազդել: Ավելի ին՝ տարբեր տիպի ռիսկերի միջև կորելյացիան ավելացնում է ճնշումը՝ խորացնելով ընդհանուր կորուստները և շահույթների ու կապիտալի վրա բացասական ազդեցությունը: Առաջանում է հետադարձ կապ ֆինանսական հատվածից դեպի իրական հատված, միջնորդները նյութական կորուստներ են կրում անբարենպաստ սցենարներից և նվազեցնում ամբողջ տնտեսության վարկավորումը:

Սթրես-թեստերի նպատակների բազմազանությամբ պայմանավորված է սթրես-թեստերի սահմանումների լայն շրջանակը: Գլոբալ ֆինանսական Յամակարգի Կոմիտեի համաձայն սթրես-թեստավորումը ռիսկ-մենեջմենթի գործիք է, որն օգտագործվում է կազմակերպության վրա կոնկրետ դեպքի կամ ֆինանսական փոփոխականների փոփոխության ազդեցությունը գնահատելու համար: Սթրես-թեստավորումը տնտեսագիտական երևույթների ուսումնասիրության համատեքստում վիճակագրական մոդելներին լրացնող դեր է ստանձնում:

Մակրոտնտեսագիտության տեսանկյունից սթրես-թեստավորումը սահմանվում է որպես մակրոպրոդեցիալ վերլուծության գլխավոր տարր, որն օգնում է հայտնաբերել և գնահատել ֆինանսական համակարգի պրտենցիալ խոցելի տեղերը⁶¹: Սթրես-թեստավորումը դիսամիկ շունչ է հաղորդում ֆինանսական կայունության ինդիկատորների վերլուծությանը:

Սթրես-թեստավորումը օգնում է տնտեսական քաղաքականության իրականացնողներին կանխատեսել ֆինանսական համակարգի էվոլյուցիան և շուկայի մասնակիցների հետ կապը դարձնել ավելի արդյունավետ:

Գործնականում սթրես-թեստավորումը ընդգրկում է մի շարք մեթոդներ, որոնք ուղղված են էքստրեմալ դեպքերի նկատմամբ


⁶¹ St'u Sundararajan V., Enoch C., San Jose A., Hilbers P., Krueger R., Moretti M., Slack G., Financial Soundness Indicators: Analytical Aspects and Country Practices, IMF Occasional Paper, 2012, pp. 9-14

պրոտֆելի զգայունության գնահատմանը: Այլ խոսքերով ասած՝ սթրես թեստավորման հիմնական արդյունքը պրոտֆելի արժեքի փոփոխության գնահատումն է ֆինանսական ցուցանիշների տատանումների պայմաններում: Ջոնսի⁶² համաձայն սթրես-թեստավորումը այն գործիքը չէ, որը կարելի է օգտագործել գիտական ճշգրտությամբ, այլ այն արվեստ է, որը պահանջում է քանակական տեխնիկա, մարդկային դատողություն և հայեցողական ենթադրություններ:

Սթրես-թեստավորման միջոցով խնդիրներ լուծելիս անհրաժեշտ է նույնականացնել դիտարկվող ռիսկերի տեսակները և ազդող գործոնները: Սկզբում սթրես-թեստերը կարող են օգտագործվել կամ ռիսկային գործոնի (օր. բաժնետոմսերի գնի նվազումը) փոփոխության ազդեցությունը վերլուծելու համար, կամ բազմաչափ սցենարի ազդեցությունը գնահատելու համար, երբ որոշ ռիսկային գործոնների միաժամանակյա փոփոխություն է տեղի ունենում (օր. ՀՆԱ-ի նվազումը՝ ուղեկցված բաժնետոմսերի գնի անկումով և տոկոսադրույքների աճով): Վերը նշված մոդելավորման երկու տիպերը սահմանում են համապատասխանաբար զգայունության և սցենարային վերլուծության տեսակները, որոնք ներկայացված են գծապատկեր 9-ում:

Մակրոտնտեսական սթրես-թեստերը բխում են միկրոտնտեսական սիմուլացիաներից, սակայն դրանք առաջացնում են որոշակի մեթոդաբանական խնդիրներ, մասնավորապես՝ հիմնական մարտահրավերը միջնորդների պրոտֆելի վրա շոկերի ընդհանուր ազդեցության քանակական գնահատման հարմար ձևի որոշումն է: Այս տեսանկյունից համակարգային արդյունքների ստացման համար հասանելի են երկու լուծումներ:

⁶² St 'u Jones M., T., Hilbers P., Slack G., Stress Testing Financial Systems: What to do When the Governor Calls, IMF Working Papers 127, 2004, pp. 3-6



Գծապատկեր 10⁶³: Մակրոտնտեսական սթրես-թեստերի տեսակները

Առաջին տարբերակը այն է, որ կառավարման մարմինները սահմանում են մակրոտնտեսական շոկը, թողնում են միջնորդներին գնահատել ազդեցությունը հաշվապահական հաշվեկշռում, այնուհետև ընդհանրացնում են բանկային մակարդակով ելքերը, որպեսզի ստանան ամբողջական ազդեցությունը մակրոմակարդակով: Սթրես-թեստավորման այս տիպի մոտեցումը կոչվում է ներքևից-վերև մոտեցում: Այլ ընտրանքային մոտեցումը վերևից-ներքև մոտեցումն է, որի դեպքում կառավարման մարմինները շոկ են տալիս և վերլուծում դրա ազդեցությունը բանկային համակարգի վրա:

Ներքևից-վերև մոտեցումը յուրաքանչյուր բանկին հնարավորություն է տալիս ավելի ճշգրիտ գնահատել շոկի ազդեցությունը սեփական պորտֆելի վրա: Վերլուծություններում օգտագործվող տվյալների ավելի հարուստ լինելը և շոկի ազդեցությունը մի քանի ենթապորտֆելների վրա բաշխելու հնարավորությունները արդյունքները դարձնում են ավելի իրատեսական: Քանի որ առանձին կազմակերպությունները տվյալների հասանելիության գծով ունեն հարաբերական առավելություն, սեփական տվյալների և ներքին մոդելների օգտագործումը օպտիմիզացնում է տեղեկատվական հոսքերը և արդյունքների որակը: Սակայն տարածական համեմատությունները տարբեր օբյեկտների միջև բարդանում են, քանի որ յուրաքանչյուր

⁶³ Գծապատկերը կառուցվել է հեղինակի կողմից:

կազմակերպությունն օգտագործում է սեփական մեթոդաբանությունը և տարբեր մոդելավորման ենթադրություններ, ինչի հետևանքով ազրեգացումը դառնում է պակաս իմաստային, որտեղ հաշվի չեն առնվում օբյեկտների միջև փոխկախվածությունները: Վերջիվերջո, եթե բանկերի ներքին մոդելները կարող են արդյունավետ օգտագործվել զգայունության վերլուծության համար, դրանք ավելի քիչ հարմար են սցենարային վերլուծության համար:

Վերնից-ներքև մոտեցումը, ընդհակառակը, ընդլայնում է արդյունքների համեմատելիության աստիճանը, սակայն այն պակաս ճշգրիտ է, մասավանդ, երբ օգտագործվում են համակարգային ազրեգացված տվյալներ: Կառավարման մարմինները տվյալների ազրեգացումից առաջացած տեղեկատվության կորստից խուսափելու համար կարող են արդյունքների դիսպերսիայի վերլուծությունն իրականացնել⁶⁴:

Ընդհանրացնելով՝ կարող ենք ասել, որ զգայունության վերլուծությունը և վերնից-ներքև մոտեցումները հարաբերականորեն պարզ են, սակայն ճշգրտության աստիճանը ավելի ցածր է: Սցենարային վերլուծությունը և բանկ-բանկ մակարդակով վարժությունները ավելի բարդ են և ծախսատար, որոնք սակայն բանկային համակարգի վիճակի մասին ավելի վստահելի գնահատականներ են ապահովում:

2.2. Սթրես-թեստերի տրամաբանությունը և իրականացման առանձնահատկությունները \$ֆինանսական համակարգում

Մակրոտնտեսական սթրես-թեստավորումը բարդ բազմաբայլ գործընթաց է, որն իրենից ներկայացնում է տարբեր հմտությունների փոխազդեցություն. այն մասամբ հետազոտական է, մասամբ՝ դիագնոստիկ, մասամբ՝ քանակական և մասամբ՝ բացատրողական: Գործընթացը պահանջում է որոշակի բաղադրիչներ:

⁶⁴ St'e'u Cihak M., Stress Testing: a Review of Key Concepts, Czech Journal of Economics and Finance, Vol. 53, N 9-10, 2004, pp. 417-425.

Առաջին հերթին պետք է ընտրել \$ինանսական կայունության համար առավել ակտուալ միջնորդներին և հավաքագրել տվյալները: Երկրորդ հերթին պետք է հայտնաբերել \$ինանսական համակարգի հիմնական ռիսկերը և խոցելի տեղերը, որպեսզի կարողանանք կենտրոնանալ իրական ճնշման կետերի վրա: Յետագայում ենթադրություններ պետք է կատարվի շոկերի վերաբերյալ, թե ինչպես են դրանք վերափոխվում հետևողական սցենարների: Յառաջ քայլը վիճակագրական մեթոդաբանության ընտրությունն է և զարգացումը, որը թույլ է տալիս բացահայտել փոփոխվող մակրոտնտեսական միջավայրի ազդեցությունը բանկերի պորտֆելի վրա: Վերջապես մոդելավորման արդյունքները պետք է այնպես գնահատվեն, որպեսզի հնարավոր լինի մշակել տնտեսական քաղաքականության արձագանքները: Վերը նշված բոլոր բաղադրիչների հասանելիությունը և որակը ապահովում են հաջող սթրես-թեստավորման գործընթաց:

Սթրես-թեստավորման գործընթացը սկսվում է միջնորդների (խոսքը գնում է տնտեսության \$ինանսական հատվածի համար առանցքային նշանակություն ունեցող կառույցների վերաբերյալ) ընտրությունից: Չնայած ամբողջ \$ինանսական համակարգի ուսումնասիրությունը թույլ է տալիս ցնցումների ազդեցությունների համապարփակ մոդելավորում իրականացնել, այդ գործընթացը բավականին ծանր է, այդ պատճառով շատ երկրներում խորհուրդ է տրվում ընտրել հենակետային այն ինստիտուտները, որոնք առանցքային նշանակություն ունեն երկրի \$ինանսական կայունության համար: Ընտրության չափանիշը այն է, որ ընտրված սուբյեկտները պետք է ներկայացնեն \$ինանսական համակարգի նշանակալի մասնաբաժինը, սակայն ընտրությունը չպետք է լինի այնքան լայն, որ խնդիրը գործնականում լինի անլուծելի:

Ընտրությունը մեծապես կախված է նաև կառավարման մարմինների որդեգրած քաղաքականությունից. մինչդեռ ագրեգացված վերևից-ներքև վարժությունները կարող են իրականացվել մեծ թվով միջնորդների մասնակցությամբ, ներքևից-

վերև սթրես թեստերը կիրառվում են ինստիտուտների ավելի նեղ շրջանակի համար:

Սթրես թեստերը հիմնականում կենտրոնանում են բանկերի վրա, քանի որ \$ինանսական ինստիտուտների մեջ վճարահաշվարկային համակարգում նրանց ունեցած դերը ամենամեծն է:

Սթրես-թեստավորման գործընթացի հաջորդ քայլը այն պոտենցիալ ռիսկերի ուսումնասիրությունն է, որոնք վտանգի են ենթարկում \$ինանսական համակարգը: Միջնորդների ընտրության հետ մեկտեղ սթրես-թեստավորման գործընթացի այս քայլը հնարավորություն է տալիս որոշել բանկային համակարգի թույլ կետերը՝ ամբողջ գործընթացը դարձնելով ավելի արդյունավետ և խուսափելով ժամանակի և ռեսուրսների չարաշահումից:

Իմանալով բանկային համակարգի բնութագրիչները, գործունենության տեսակները, \$ինանսական կարգավորման առանձնահատկությունները և լայն մակրոտնտեսական միջավայրը՝ սթրես թեստավորումը հնարավորություն է տալիս կենտրոնանալ այն ռիսկային գործոնների վրա, որոնք ամենաշատն են ազդում բանկային համակարգի կայունության վրա: Ռիսկի աղբյուր հանդիսացող գործոնների քանակի ընտրությունը պետք է այնպիսի ձևով կատարվի, որպեսզի երաշխավորվի բոլոր այն պարամետրերի ներառումը, որոնք ազդում են դիտարկվող ամբողջական պորտֆելի արժեքի վրա: Չնայած նրան, որ խոցելիության աղբյուրների լայն շրջանակի ուսումնասիրությունը ընդլայնում է սիմուլացիայի կանխատեսման ուժը և մեծացնում արդյունքների ճշգրտությունը, սակայն այն միաժամանակ մեծացնում է նախագծման, հաշվողական և հաշվետվությունների հետ կապված ծախսերը⁶⁵: Օրինակ, երբ բանկերը ակտիվ են ներքին վարկային շուկայում, վերլուծաբանները պետք է կենտրոնանան վարկային ռիսկի վրա և այն գործոնների վրա (տոկոսադրույք, գործազրկություն, անշարժ շուկայի գներ և այլն), որոնք կարող են բացասական հետևանքներ ունենալ այդ բիզնեսում: միջազգային մեծ ակտիվ բանկերի համար արտաքին ռիսկային գործոնները (նավթի և այլ վառելանյութերի

⁶⁵ St 'u Sorge M., Stress-Testing Financial Systems: an Overview of Current Methodologies, BIS Working Paper 165, 2004, pp. 4-7.

գները, փոխանակային կուրսը և այլն) ավելի կարևոր են: Սակայն որոշ հանգամանքներում ռիսկի այլ աղբյուրները ևս կարևոր են. օրինակ՝ փոխանակային կուրսի ռիսկը կարևոր է փոքր երկրների համար, իսկ փոխարժեքով ինդեքսավորված վարկային ռիսկը՝ դուրսընացված երկրներում: Իրացվելիության ռիսկը կարևոր է տեղական կենտրոնացում ունեցող համակարգերի համար, եթե առկա է զգալի արտաքին ֆինանսավորում կամ ներքին ավանդային ապահովագրության պակաս: Իրացվելիության և վարակի ռիսկերը համարվում են հիմնական ռիսկերը ավելի մեծ և բարդ միջնորդների համար: Քանի որ ճգնաժամի տարածման ուղիները տարբեր են և բազմազան, սթրես-թեստավորումը ենթակա է որոշակի սահմանափակումների:

Հիմնական ռիսկերը նույնականացնելուց հետո անհրաժեշտ է ուսումնասիրել այն իրավիճակները, որոնք առաջացնում են շոկը և որոշել այն մակարդակը, որից վերև շոկի տատանումները հանգեցնում են ռիսկի նյութականացմանը: Չնայած, ընդհանուր առմամբ, պարտադիր չէ սցենարների հավանականություններին վերագրել ճշգրիտ թվեր, սակայն դրանք, այնուամենայնիվ, պետք է լինեն ճշմարտանման⁶⁶:

Էքստրեմալ, բայց ճշմարտանման դեպքերի ընտրությունը հաճախ հիմնված է հետազոտողների հայեցողական վերլուծությունների վրա, որը ձևավորվում է կառավարիչների և բանկերի միջև թեժ քննարկումների արդյունքում: Մակրոտնտեսական և ֆինանսական տվյալները օգնում են իրագործել այդ գործողությունը, սակայն էկզոգեն շոկերի դիապազոնի վերաբերյալ վերջնական որոշումը կայացնում է վերլուծաբանը: Իրոք, քանի որ վարժության նպատակն է հասկանալ, թե ինչ է կատարվում ֆինանսական համակարգի հետ հազվադեպ պատահարի ի հայտ գալու դեպքում, օգտագործվող սցենարները դուրս են գալիս սովորական փորձի շրջանակներից⁶⁷:

Ցանկացած սթրես-թեստի համար գրավիչ շոկերը նրանք են, որոնք այնքան լուրջ են, որ համակարգում առաջացնում են

⁶⁶ St'e'u Breuer T., Krenn G., Stress Testing, Guidelines on Market Risk, OeNB Vol. 5, 1999, pp. 47-50.

⁶⁷ St'e'u Jones M., T., Hilbers P., Slack G., Stress Testing Financial Systems: What to do When the Governor Calls, IMF Working Papers 127, 2004, pp. 4-6

նշանակալի տատանումներ և հարվածում են ինստիտուտների մեծ մասի պորտֆելներին: Երբ շուկը սուր է, սակայն կորուստները սահմանափակ են, ֆինանսական համակարգի վրա ազդեցությունը փոքր է, ինչը պահանջում է ռիսկի գնահատման վերանայում: Այդ պատճառով սթրես թեստավորման իրականացումը պետք է լինի իտերատիվ գործընթաց, քանի որ սկզբնապես իդենտիֆիկացված ռիսկերը կարող են ունենալ փոքր ազդեցություն, իսկ ավելի ուշ հայտնաբերվածները՝ մեծ:

Այլ կերպ ասած՝ սթրես սցենարը տնտեսության ապագա զարգացման հիպոթեզ է հանդիսանում: Սթրես թեստը նախագծելիս շատ կարևոր է որոշել այդ հիպոթեզը հիմնված է լինելու պատմական դեպքերի վրա (այսինքն՝ ենթադրվում է, որ անցյալ տարիների շուկերը կկրկնվեն ապագայում), թե հիպոթետիկ շուկերի վրա (այսինքն՝ ենթադրվում է, որ արտաքին միջավայրի էքստրեմալ և ճշմարտանման փոփոխությունները կախված չեն պատմական փորձից) :

Մինչդեռ պատմական սցենարները հեշտ է իրականացնել, և դրանք ավելի նյութական են, հիպոթետիկ սցենարը միակ գործիքն է մնում, երբ առնչվում ենք ֆինանսական համակարգի կառուցվածքային վերափոխումների (ապակարգավորում, կոնսոլիդացիա, արժույթի փոփոխություն և այլն) հետ: Փաստացի, հարյուր տարին մեկ պատահող իրավիճակին համապատասխանող շուկի դասակարգումը իմաստ ունի, եթե սպասվում է, որ արտաքին միջավայրը կմնա կայուն նույն ժամանակահատվածի ընթացքում⁶⁸: Սակայն, պատմական միջադեպերի օգտագործումը հաճախ օգնում է որոշել հիպոթետիկ շուկի տատանողականության աստիճանը: Այդ պատճառով էլ պայմանավորված խառը լուծումները, այսինքն՝ հիպոթետիկ սցենարները, որոնք ուղեկցվում են շուկայի պատմական տեղաշարժերով, լայնորեն տարածված են վերլուծական աշխատանքներում:

Այդ ուսակ 8-ում ներկայացված է պատմական սցենարների որոշ օրինակներ, որոնք լայնորեն տարածված են սթրես-թեստավորման մեջ

⁶⁸ Տե՛ս Oyama T., Plausibility of Stress Scenarios, IMF-DNB 2nd Expert Forum on Advanced Techniques on Stress Testing: Applications for Supervisors, Amsterdam, 2007, pp. 1-10

Աղյուսակ 8⁶⁹: Պատմական սցենարների օրինակներ

1973	Առաջին նավթային ճգնաժամը- OPEC-ի կողմից նավթի գնի բարձրացումը
1979	Երկրորդ նավթային ճգնաժամը- Իրանի նավթի առաջարկի կրճատումը
1987	Սև երկուշաբթի- ԱՄՆ-ի արժեթղթերի շուկայի փլուզումը
1991	Պարսից ծոցի պատերազմը- նավթի գների ավելացում
1992	Եվրոպական Դրամական Զամակարգի ճգնաժամը- թույլ արժույթների նկատմամբ սպեկուլյատիվ գործունեություն
1995	Թեքիլայի ճգնաժամը- Մեքսիկայի ընթացիկ հաշվի դեֆիցիտը
1997	Արևելյան Ասիայի ճգնաժամը
1998	LTCM ⁷⁰ -ի փլուզումը
2001	Սեպտեմբերի 11- ԱՄՆ-ում տեռորիստական ակտը
2007-08	Չիֆոթեքային ճգնաժամը

Ծոցի դասակարգման մյուս, ավելի քիչ տարածված տարբերակը շեմի մոտեցումն է՝ ամենամեծ շոկի որոշումը, որը կվերացնի բանկերի շահույթը և կապիտալը⁷¹:

Սցենարը ենթադրում է ռիսկային գործունեության միաժամանակյա փոփոխության ազդեցության ներքին համատեղելի ներկայացում: Սա բարձրացնում է շոկի ճշմարտամանության հարցը, այսինքն՝ ռիսկային գործունեության միասնական տեղաշարժի հավանականությունը: Սթրես թեստերի արդյունքները կարող են անտեսվել որոշում կայացնողների կողմից, եթե սցենարները համարվում են ոչ իրատեսական: Երբ երկար ժամանակային տվյալները հասանելի են և մոդելավորման տեխնիկան հարաբերականորեն պարզ է, սցենարի հավանականության ստացումը

⁶⁹ Զավաքագրված է սթրես թեստավորման գրականությանը:

⁷⁰ LTCM-ը հեջավորման ֆոնդերի կառավարման ձեռնարկություն էր, որը վարում էր բացարձակ-եկամտաբերություն առևտրային ռազմավարություն, որն ուղեկցվում էր բարձր ֆինանսական և ներքին

⁷¹ St'u Van den End W., Hoeberrichts M., Tabbae M., Modelling Scenario Analysis and Macro Stress-Testing, DNB Working Paper 119, 2006, pp. 4-8.

կարող է հիմնված լինել անցյալի տատանողականությանների և կորելյացիաների վրա: Օրինակ՝ հնարավոր է գնահատել ընտրված փոփոխականների տրենդից շեղումների միասնական էմպիրիկ բաշխումը և որոշել արձեռի շեղումների հավանականությունը: Սակայն, այլ հանգամանքներում, մասնավորապես՝ բազմագործոնային սթրես թեստերի դեպքում, էմպիրիկ բաշխման մոդելավորումը շատ ավելի բարդ է, և ենթադրությունների ճշմարտացիությունը հիմնված է վերլուծաբանի դատողությունների վրա: Պատմական և հիպոթետիկ սցենարների կոմբինացիան տարբեր շոկերի ճշմարտամասնության գնահատման ավելի հեշտ և արդյունքների մեկնաբանման ավելի ինտուիտիվ պրագմատիկ ձև է:

Ժամանակահատվածը, որի համար կատարվում է սթրես թեստը կրիտիկական դեր է խաղում սցենարի կալիբրացիայի մեջ: Ժամանակահատվածի ընտրությունը սահմանվում է՝ հաշվի առնելով դիտարկվող ռիսկերի տիպերը և հետազոտվող պրոտֆելների իրացվելիությունը և մարման ժամկետները:

Չնայած նրան, որ սթրես-սցենարները տնտեսության պարզեցված ներկայացումն են, նրանց իրականացումը թույլ է տալիս գլխավոր փոփոխականների և ռիսկային գործոնների հաջորդական տեղաշարժեր⁷²: Այդ տեսանկյունից կառուցվածքային մակրոէկոնոմետրիկ մոդելները ամենահարմար գործիքն է հասկանալու համար, թե ինչպես է տնտեսական համակարգը աշխատում շոկի նյութականացման դեպքում: Այդ մոդելները օգտագործվում են հիմնական մակրոտնտեսական ինդիկատորների կանխատեսման համար՝ ապահովելով \$ինանսական և ոչ \$ինանսական հատվածների հաջորդական նկարագրությունը: Ռիսկային գործոնների որոշումից և շոկերի կալիբրացիայից հետո մոդելը նման ինֆորմացիան օգտագործում է որպես մոլտքային փոփոխական, իսկ եկամտաբերությունները՝ որպես ելքային փոփոխական:

Քանի որ \$ինանսական կայունության գնահատումը հիմնված է ռիսկային գործոնների լայն շրջանակի վերլուծության վրա, կատարյալ մոդելը պետք է կարողանա արտացոլել \$ինանսական

⁷² St'u Haldane A., Hall S., Pezzini S., A New Approach to Assessing Risks to Financial Stability, Bank of England Financial Stability Paper 2, 2007, pp. 7-14.


համակարգի հիմնական վարակային մեխանիզմները: Գործնականում, մակրոէկոնոմետրիկ մոդելները շատ հազվադեպ են իրենց մեջ ընդգրկում բոլոր առանձնահատկությունները, և քիչ հավանական է, որ եզակի մոդելը ամբողջությամբ լիարժեք կերպով պատասխանի բոլոր հարցերին⁷³. Շատ հաճախ ագրեգացման մակարդակը հարմար է մակրոէկոնոմետրիկ սթրես-թեստավորման նպատակների համար, քանի որ հետազոտողի համար հետաքրքրությունն ենրկայացնող որոշ սեկտորներ կամ փոփոխականներ անտեսվում են մոդելի կողմից:

Այդ դեպքերում շուկի հետևանքները ամբողջովին հասկանալու համար պահանջվում են լրացուցիչ բաղադրիչներ, որի դերում էլ հանդես են գալիս արբանյակային մոդելները՝ էկոնոմետրիկ նվազեցված հավասարումներ են, որոնք ավելի մանրամասն են բացատրում կոնկրետ սեկտորի վարքագիծը (տես գծապատկեր 10):

Մակրոէկոնոմետրիկ մոդելների առկայությունը չի նվազեցնում փորձագիտական դատողության անհրաժեշտությունը: Սցենարի կառուցումը իր ետևից բերում է մի շարք որոշումների, որոնք առանցքային դեր ունեն արդյունքների վստահելիության և հուսալիության մեջ: Նախ, շուկային փոփոխականի մեկնաբանումը կախված է հիմնական սցենարի ենթադրություններից: Այնուհետև, պետք է գնահատել, թե արդյոք գործում է այլ հավասար պայմաններում ենթադրությունը, և եթե գործում է, ապա ինչ մակարդակով:

Տեխնիկական տեսանկյունից մակրոտնտեսական մոդելներից շատերը տնտեսության էվոլյուցիայի կանխատեսման իրական գործիք են հանդիսանում նորմալ պայմաններում, քանի որ նրանք հիմնված են այն ենթադրության վրա, որ մակրոտնտեսական և ֆինանսական փոփոխականների միջև առկա է գծային կախվածություն, որը չի գործում էքստրեմալ շուկայական պայմաններում, որի ժամանակ ի հայտ են գալիս ոչ գծային փոխկախվածություններ: Ավելին՝ նման մոդելները ոչ մի կառուցվածքային վերափոխման ենթադրություն չեն անում:

⁷³ St'u Bardsen G., Lindquist K., G., Tsomocos D., P., Evaluation of Macroeconomic Models for Financial Stability Analysis, Norwegian University of Science and Technology Working Paper 4, 2006, pp. 3-15.



Գծապատկեր 11⁷⁴: Ռիսկային գործոններից դեպի հիմնական մակրոտնտեսական գույքանիշներ փոխանցումային մեխանիզմը

Մյուս կարևոր ընտրությունները հետադարձ ազդեցության ներառումն է: Յետադարձ ազդեցությունն արտահայտվում է ընդհանրապես օգտագործվում է տարբեր երևույթների նկարագրության համար, որոնք ազդում են սթրես-թեստավորման գործընթացի վրա: Նախ դա կարող է պարունակել երկրորդ շրջանի ազդեցությունը, այսինքն՝ ինստիտուտների հնարավոր դոմինոյի էֆեկտը, որն ուղղակիորեն փոխանցվում է այլ միջնորդներին, շուկայի ենթակառուցվածքին և ամբողջ ֆինանսական համակարգին: Օրինակ՝ այն բանկի դեֆոլտը, որն զգալիորեն ակտիվ է միջբանկային շուկայում, կարող է հանգեցնել ուրիշ բանկերի սնանկացմանը: Այլ դեպքերում, հետադարձ ազդեցությունն արտահայտվում է այն հնարավորությունը, որ խաղացողները, ճշգրտելով իրենց վարքագիծը, տարբեր կերպ են արձագանքում շուկան՝ ուժեղացնելով կամ թուլացնելով դրա ազդեցությունը: Իրոք, երբ սցենարի ժամանակահատվածը բավականին երկար է կամ շուկի տատանողականության աստիճանը մեծ է, իրատեսական չէ ենթադրել, որ ոչ մի վարքագծային արձագանք չի լինի: Օրինակ՝ բանկերը կարող են վերանայել իրենց վարկային քաղաքականությունը ճգնաժամի ժամանակ: Վերջիվերջո, հետադարձ

⁷⁴ Գծապատկերը կառուցվել է հեղինակի կողմից:

ազդեցությունը հանդիսանում է արոցիկլայնության հոմանիշն, այսինքն՝ մեխանիզմը, որի միջոցով ֆինանսական համակարգի անկայունությունը փոխանցվում է ոչ ֆինանսական հատվածին՝ խորացնելով ֆինանսական խնդիրները:

Բոլոր վերը նշված ազդեցությունները կարևոր են սթրես-թեստավորման համար: Անտեսելով նման ռեակցիաները՝ վերլուծաբանը կորցնում է որոշակի տեղեկատվություն, և արդյունքների մեկնաբանությունը դառնում է ոչ լիարժեք: Մյուս կողմից, շուկայի մասնակիցների արձագանքը ծայրահեղ շուկերի նկատմամբ դժվար է մոդելավորել և կանխատեսել համապատասխան տվյալների պակասի պատճառով:

Վերջին քայլում սթրեսի պայմանների ներքո ստացված բանկի կորուստները համեմատվում են ֆինանսական կայունության որոշակի սինթետիկ ինդիկատորի հետ, որպեսզի գնահատվի այդ շուկին դիմակայելու բանկային համակարգի հնարավորությունը: Այդ նպատակով սովորաբար համեմատվում են կորուստների աստիճանը բանկի չհարկված շահույթը (սթրես սցենարի արդյունքում առաջացած հավելյալ կորուստների կլանման համար հասանելի եկամուտը) և նվազագույն պահանջներից բարձր կապիտալի մակարդակը (կորուստների դեմ դրված շեմը):

Անգամ այն դեպքում, երբ մակրոտնտեսական սթրեսի նպատակը շուկի ամբողջական ազդեցության գնահատումն է, արդյունքների մեկնաբանությունը պահանջում է փաստացի կորուստների բաշխման հստակ պատկերացում:

Սթրես-թեստի արդյունքների կառուցողական քննարկման համար սթրես-թեստերի իրականացնելիս օբյեկտիվության որոշակի աստիճան է պահանջվում ինչպես սցենարի կառուցման գործընթացում, այնպես էլ թեստի նախագծման մեջ: Այդ տեսանկյունից ծայրահեղ, բայց ճշմարտաման սցենարների դասակարգումը շատ կարևոր է: Սակայն սթրես-սցենարների ճշմարտամանության համընդհանուր ընդունված չափանիշ գոյություն չունի. Դա առավելապես կախված է ռիսկ-մենեջերի դատողություններից:

Սցենարի ցանկացած տիպի պարագայում սցենարի ընտրությունը իր բնույթով սուբյեկտիվ է՝ հատկապես ռիսկային գործոնների և շոկերի ուժեղության որոշման հարցում: Սակայն օբյեկտիվությունը սթրես-թեստի արդյունքների գնահատման անհրաժեշտ չափանիշ է հանդիսանում. ոչ մի արժեքավոր տեղեկատվություն չի կարող ստացվել սթրես-թեստից, առկա է օբյեկտիվության պակաս:

Սթրես-թեստերի համար առանձնացնում են օբյեկտիվության երկու տեսակ՝ մոդելի օբյեկտիվությունը և դիտարկվող շոկի տատանողականությունը: Առաջին տեսակի օբյեկտիվությունը համեմատաբար հեշտ է հասկանալ՝ ինչպես է կառուցված մոդելը և որն է նրա հիմքը: Երկրորդ տիպի օբյեկտիվությունը պայմանավորված է նրանով, որ սթրեսային սցենարում ենթադրվող ռիսկային գործոնները պետք է համապատասխան կերպով ընտրվեն. Շոկի չափը պետք է մանրամասն քննարկվի, որպեսզի կառուցվի ծայրահեղ, բայց ճշմարտամասն սթրեսային սցենար:

VaR (value at risk) մեթոդը լայնորեն օգտագործվում է որպես շուկայական և վարկային պրոտֆեյլների ռիսկային ստանդարտ մոնիթորինգի գործիք: Սթրես-թեստավորումը օգտագործվում է որպես պրոտֆեյլների ռիսկ-մենեջմենթի հավելյալ գործիք, որը տեղեկատվություն է ապահովում այն ռիսկերի մասին, որոնք դուրս են մնում VaR-ից: Սթրես-թեստավորումը նաև կարևոր դեր է խաղում լատենտային ռիսկերի վերաբերյալ մենեջմենթին տեղյակ պահելու հարցում, որոնք ամենավաղն են ահազանգում անսպասելի ռիսկերի նյութականացման մասին: VaR մեթոդը ունի որոշակի բացթողումներ. այն պահանջում է եկամտաբերության բաշխման պրօքսի գնահատում, մինչդեռ այդ գնահատման համար անհրաժեշտ է քստրեմալ դիտարկումների քանակը հաճախ ոչ բավարար է լինում: Էստրեմալ տվյալների սակավությունը գնահատումը դարձնում է պակաս վստահելի, մինչդեռ այդ դեպքերը ռիսկ-մենեջմենթի համար մեծ հետաքրքրություն են ներկայացնում: Սթրես-թեստավորումը հենց կենտրոնանում է այդ տիպի սթրեսային դեպքերի վրա:

2013թ. ապրիլին ՀՀ ԿԲ խորհուրդը ընդունել է «Բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմանները»

կանոնակարգ 4-ը⁷⁵: Այն նպատակ ունի բարձրացնել բանկերում ներքին հսկողության համակարգի արդյունավետությունը, ինչպես նաև համապատասխանեցնել բանկերի ներքին հսկողության համակարգին ներկայացվող պահանջները Բանկային վերահսկողության Բազելյան կոմիտեի (BCBS) կողմից սահմանված սկզբունքներին:

Կանոնակարգում հստակ սահմանվում է քբանկերի համար օրինակելի ներքին հսկողության համակարգը, կազմակերպական կառուցվածքը, գործարար գործընթացները, անձնակազմի կառավարումը, ռիսկերի կառավարման համակարգը, կապիտալի համարժեքության գնահատման ներքին գործընթացները (ICAAP), ինչպես նաև սթրես-թեստավորումը:

Համաձայն նշված կանոնակարգի բանկն իրականացնում է սթրես-թեստավորում առնվազն հետևյալ ռիսկերի գծով.

- 1) վարկային ռիսկ,
- 2) արտարժույթային ռիսկ,
- 3) տոկոսադրույքի ռիսկ,
- 4) գնային ռիսկ,
- 5) իրացվելիության ռիսկ,

6) վարակի ռիսկ (այլ բանկի/ֆինանսական կազմակերպության ֆինանսական խնդիրների հնարավոր բացասական ազդեցությունը տվյալ բանկի կապիտալի և (կամ) շահույթի վրա):


Սթրես-թեստերը կարող են լինել պարզ՝ զգայունության վերլուծություն՝ կախված կոնկրետ ռիսկի գործոնի փոփոխությունից և առավել բարդ, որոնք հաշվի են առնում տարբեր ռիսկային գործոնների, այդ թվում՝ համակարգային, փոխազդեցության արդյունքները: Եթե բանկի կողմից որոշակի ռիսկի գծով սթրես-թեստավորման գործընթացում դիտարկվող իրավիճակը կարող է ազդեցություն ունենալ բանկի գործունեությանն առնչվող այլ ռիսկերի վրա, ապա բանկը պետք է գնահատի ինչպես յուրաքանչյուր ռիսկի գծով ազդեցություններն առանձին-առանձին, այնպես էլ համընդհանուր ազդեցությունը: Ստորև կատարված է սթրես-թեստավորում ՀՀ

⁷⁵ <<Բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմանները>> կանոնակարգ 4, ՀՀ ԿԲ խորհուրդ, որոշում թիվ 102-Ն, 16.04.2016թ.

բանկային համակարգի օրինակով, որտեղ որպես ճշմարտանման սցենար վերցված է կանոնադրական կապիտալի փոփոխությունը: Սթրես թեստավորման նպատակն է բացահայտել, թե ինչպես կազմի կանոնադրական կապիտալի չափի փոփոխությունը բանկային համակարգի ֆինանսական կայունության վրա, և այդ նպատակով օգտագործվել է առաջին գլխում կառուցված ֆինանսական կայունության ընդհանուր ինդեքսը:

2.3. Արժույթային ճգնաժամերի ազդեցությունը և դրանց հաղթահարմանն ուղղված միջոցառումները ՀՀ բանկային համակարգում

Հայ տնի է, որ փոքր բաց տնտեսությունները առավել խոցելի են արտաքին շուկաների շոկերի նկատմամբ: Այդ շոկերի փոխանցումային մեխանիզմը սկսվում է ճկուն տնտեսական բաղադրիչների կտրուկ փոփոխումով, որոնց հաջորդում են նաև ֆունդամենտալների դինամիկայի փոփոխությունները: Կապիտալի հոսքերը բավական զգայուն են արտաքին շոկերի նկատմամբ, ինչն անմիջապես անդրադարձնում է արտարժույթի փոխարժեքի վրա: 2009թ. ֆինանսատնտեսական ճգնաժամի ազդեցությունը նկատելի է դրամի 2009թ. մարտի 9-ի կտրուկ արժեզրկմամբ՝ գծապատկեր 12:




Գծապատկեր 12. ԱՄՆ դոլար/ՀՀ դրամ փոխարժեքի դինամիկան⁷⁶, ըստ 2000-2016

թթ.:

ՀՀ կենտրոնական բանկը մշտապես որդեգրել է արտարժույթի փոխարժեքի կտրուկ փոփոխության քաղաքականություն, որն ըստ բացատրությունների բերում է հետագա կայունություն և կանխատեսելիություն: Այս շուկա ՀՀ բանկային համակարգը կլանեց առանց էական ցնցումների, այդ անգամ բանկային համակարգի կայունության բարձրացման համար շրջադարձային քայլեր չձեռնարկվեցին:

2014թ. հունիս ամսին Ռուսաստանի Դաշնության արտաքին քաղաքականության հետևանքով ռուբլու փոխարժեքը կտրուկ անկում ապրեց, որը նկատելի է գծապատկեր 13-ում բերված դինամիկայից:

⁷⁶Տե՛ս <https://www.cba.am/am/SitePages/ExchangeArchive.aspx>:



Գծապատկեր 13. ԱՄՆ դոլար/ՌԴ ռուբլի փոխարժեքի դինամիկան՝⁷⁷ ըստ 2014-2016թթ.:

Քանի որ Ռուսաստանի Դաշնության համարվում է ՀՀ աշխատանքային միգրացիայի և ֆինանսական հոսքերի խոշորագույն երկիրը, անխուսափելիորեն այդպիսի փոփոխությունները պետք է անդրադառնային մեր տնտեսության վրա, մասնավորապես, առաջին հերթին փոխարժեքի վրա: Այդ ազդեցության արտահայտությունը նկատվում է 2014թ. նոյեմբեր-դեկտեմբերին (գծապատկեր 13): Ի տարբերություն 2009թ. կտրուկ անկմանը՝ 2014թ. բանկային համակարգից ավանդների արտահոսք էր նկատվում, լավագույն դեպքում մարդիկ իրենց դրամային ակտիվները փոխանակում էին արտարժույթայինով: ՀՀ իշխանությունները և կենտրոնական բանկն ինտենսիվորեն փորձում էին կանգնեցնել վերահաս վտանգը, այդ ընթացքում կենտրոնական բանկի կողմից իրականացված միջոցառումները ներկայացված են ստորև:

Վերջին ժամանակներս տեղի ունեցող տնտեսական երևույթների, ՀՀ դրամի արժեզրկման և ֆինանսական կայունության հետ կապված ՀՀ կենտրոնական բանկի կողմից ձեռնարկված միջոցառումների և քայլերի ժամանակագրությունը հետևյալն է:

2014թ. օգոստոսից սկսած ՀՀ կենտրոնական բանկի կողմից սկսվեցին իրականացվել ավելի խիստ սցենարներով սթրես-թեստեր՝

⁷⁷Տե՛ս http://cbr.ru/currency_base/daily.aspx:

գնահատելու ներքին և արտաքին գործունեւորի ոչ բարենպաստ զարգացման հնարավոր ազդեցութեանը Հայաստանի վրա⁷⁸:

Նոյեմբերի 24-ին Կենտրոնական բանկի խորհուրդը որոշեց բարձրացնել կարճաժամկետ դրամային իրացվելիութեան գործիքի (լոմբարդային ռեպո) տոկոսադրույքը՝ 8.25%-ից հասցնելով 10.25%-ի: Այն առևտրային բանկերում պետք է թանկացնեն կարճաժամկետ դրամային իրացվելիութեանը՝ նպատակ ունենալով զսպել ճնշումները արժութային շուկայում:

2014թ. նոյեմբերի վերջին փոխարժեքը Հայաստանում կայունացավ 435 դրամ մակարդակի շուրջ: Դեկտեմբերի 1-ին Ռուսաստանի արժութային շուկայում նկատվեցին անկայունութեան նոր փուլ, ինչը Հայաստանում առաջացրեց դրամի արժեզրկման նոր սպասումներ և նոր ճնշումներ:

Դեկտեմբերի սկզբից սկսած Կենտրոնական բանկը ընթացիկ գործունեութեան և տնտեսութեանը սպասարկելու նպատակով առևտրային բանկերին ազատորեն տրամադրում էր անսահմանափակ քանակութեամբ կանխիկ արտարժույթ՝ ըստ պահանջի: Միևնույն ժամանակ, ֆինանսական շուկայի մասնակիցների մոտ նման ճնշումները զսպելու նպատակով՝ դեկտեմբերի 2-ին Կենտրոնական բանկը բարձրացրեց կարճաժամկետ դրամային իրացվելիութեան տոկոսադրույքը սահմանելով այն 21%:

2014թ. դեկտեմբերի սկզբից սկսած Կենտրոնական բանկը առևտրային բանկերին ԱՄՆ դոլարի պահանջարկը բավարարելու նպատակով առաջարկեց երկարաժամկետ (3-6 ամիս ժամկետով) արժութային սվոփ:

2014թ. դեկտեմբերի 8-ին Կենտրոնական բանկում տեղի ունեցան նոր խորհրդակցութեաններ առևտրային բանկերի ղեկավարների և աշխատակիցների հետ: Ներկայացվեցին նոր գործիքի եութեանը, նպատակները և իրականացման մեխանիզմները:

2014թ. դեկտեմբերի 17-ին Կենտրոնական բանկը գնաց ավելի կոշտ քայլերի՝ կրկնակի բարձրացնելով արտարժույթով ներգրավված միջոցների նկատմամբ պարտադիր պահուստավորման

⁷⁸Տես <<Արժութային շուկայում ձևավորված իրավիճակի հետ կապված ՀՀ ԿԲ կողմից իրականացվող միջոցառումների ժամանակագրական նկարագիր>>, ՀՀ ԿԲ, www.cba.am:

Նորմատիվի պահանջը 12%-ից 24%-ի: Կենտրոնական բանկը սկսեց առևտրային բանկերին տրամադրել իրացվելիություն կարճաժամկետ արժույթային սվոփ գործիքների միջոցով՝ փողի ընդհանուր պահանջարկը բավարարելու նպատակով:

Ներգրավված միջոցների պարտադիր պահուստավորման գործընթացը բխում է բանկային համակարգի կայունության շահերից, քանի որ բանկերն ամբողջությամբ չեն կարողանում օգտագործել ներգրավված միջոցները վարկավորման նպատակով: Դրամավարկային գործիքակազմում պարտադիր պահուստավորման նորմը համարվում է կոշտ գործիք, քանի որ դրա ազդեցությունը նշանակալի է բանկերի գործունեության վրա: ՀՀ բանկային համակարգը պարտադիր պահուստավորման իմաստով անցել է կարգավորման երկար ճանապարհ: ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 9-ի թիվ 39Ն որոշմամբ հաստատված «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» Կանոնակարգ 2-ի (Կանոնակարգ 2) նոր խմբագրության համաձայն՝ բանկերի կողմից կենտրոնական բանկում տեղաբաշխվող պարտադիր պահուստների նվազագույն չափը սահմանվեց ներգրավված միջոցների 8 տոկոսի չափով: Այնուհետև, կախված բանկային համակարգի զարգացումներից, ԿԲ-ն փոփոխել է պահուստավորման նորմը: Այն հայտ է, որ դրամով և արտարժույթային միջոցների համար ԿԲ-ն սահմանում է պահուստավորման տարբեր տոկոսներ: Արտարժույթայինի միջոցների համար պարտադիր պահուստավորման դրույքաչափերը ներկայացված են աղյուսակ 9-ում:

Աղյուսակ 9⁷⁹: Արտարժույթով ներգրավված միջոցների դիմաց 77 պահանջների սահմանման ժամանակագրությունը՝ ըստ 2008-2016թթ.

Պահանջների գործողության ժամանակահատվածը	ՀՀ դրամով կատարվող պահուստավորման մասնաբաժին (%)	Արտարժույթով կատարվող պահուստավորման մասնաբաժին (%)
01.01.2008- 16.03.2010 ⁸⁰	0	12

⁷⁹ Տե՛ս <https://www.cba.am/am/SitePages/regbanks.aspx>:

⁸⁰ ՀՀ ԿԲ խորհրդի 21 նոյեմբերի, 2007 թ.թիվ 368-Ն որոշում (ուժի մեջ է մտել 2008թ-ի հունվարի 1-ից):

16.03.2010 - 27.07.2010 ⁸¹	3	9
27.07.2010 - 01.02.2011 ⁸²	6	6
01.02.2011 - 22.11.2011 ⁸³	9	3
22.11.2011 – 17.12.2014	12	0
17.12.2014 – 23.12.2014	24	0
23.12.2014- 05.10.2016	20	0
05.10.2016--ից սկսած	18	0

Դրամով ներգրավված միջոցների պարտադիր պահուստավորման պահանջները ներկայացված են աղյուսակ 10-ում:

Աղյուսակ 10: ՀՀ դրամով ներգրավված միջոցների դիմաց ՊՊ պահանջների սահմանման ժամանակագրությունը՝ ըստ 2008-2016 թթ.

Պահանջների գործողության ժամանակահատվածը	Դրույքաչափը (%)
01.01.2008 ⁸⁴ - 15.05.2013	8
15.05.2013 ⁸⁵ - 12.02.2014	4
12.02.2014-ից սկսած ⁸⁶	2 ⁸⁷

ԱՄՆ գործադիր խորհուրդը դեկտեմբերի 19-ին կայացած հերթական նիստում հավանության արժանացրեց Հայաստանի հետ ԱՄՆ երկարաժամկետ ֆինանսավորման ծրագրի վերանայումը՝ հնարավորություն տալով Հայաստանին ստանալ ԱՄՆ վարկի հերթական մասնաբաժինը: 2014թ. դեկտեմբերի 23-ին, ՀՀ ԿԲ խորհրդի հերթական նիստում ԿԲ խորհուրդը Կենտրոնական բանկի վերաֆինանսավորման տոկոսադրույքը բարձրացրեց 6.75%-ից 8.5%-ի՝

⁸¹ ՀՀ ԿԲ խորհրդի 16 մարտի, 2010 թ. թիվ 46-Ն որոշում (ուժի մեջ է մտել ընդունման պահից):

⁸² ՀՀ ԿԲ խորհրդի 27 հունիսի, 2010 թ. թիվ 171-Ն որոշում (ուժի մեջ է մտել ընդունման պահից):

⁸³ ՀՀ ԿԲ խորհրդի 1 փետրվարի, 2011 թ. թիվ 21-Ն որոշում (ուժի մեջ է մտել ընդունման պահից):

⁸⁴ ՀՀ ԿԲ խորհրդի 9 փետրվարի, 2007 թ. թիվ 39-Ն որոշում (ուժի մեջ է մտել 2008 թվականի հունվարի 1-ից):

⁸⁵ ՀՀ ԿԲ խորհրդի 16 ապրիլի, 2013 թ. թիվ 101-Ն որոշում (ուժի մեջ է մտել 2013 թվականի հունիսի 1-ից):

⁸⁶ ՀՀ ԿԲ խորհրդի 24 դեկտեմբերի, 2013 թ. թիվ 299-Ն որոշում (ուժի մեջ է մտել 2014 թվականի փետրվարի 12-ից):

⁸⁷ ՀՀ դրամով ներգրավված և սահմանված չափանիշներին համապատասխանող երկարաժամկետ միջոցների համար ներկայումս սահմանված է 0% դրույքաչափ:

ձևավորված գնաճային ճնշումները զսպելու նպատակով: Միևնույն ժամանակ, նվազեցվեցին պարտադիր պահուստավորման նորմատիվի սահմանաչափը 24%-ից 20%-ի և կարճաժամկետ դրամային իրացվելիության գործիքի տոկոսադրույքը՝ 21%-ից 20%-ի:

Կարելի է նշել, որ նման ինտենսիվ գործողությունների շնորհիվ ՀՀ բանկային համակարգը 2014թ. դեկտեմբերի վերջին կայունացման ուղին բռնեց: Որպեսզի ամրապնդվի ձեռք բերված կայունությունը, 2014թ. դեկտեմբերի 30-ին ԿԲ-ն ընդունեց մի կտրուկ որոշում⁸⁸, ըստ որի «Նպատակ ունենալով խթանել Հայաստանի Հանրապետության բանկերի միջև միացումների իրականացումը և բանկերի խոչորացումը, ինչը կհանգեցնի բանկային համակարգի գործունեության արդյունավետության բարձրացմանը, բանկային համակարգի կայունության ու տնտեսական տարբեր իրավիճակներում շոկերին դիմակայելու ունակության ամրապնդմանը, ինչպես նաև նպաստել բանկային համակարգի կողմից առավել արդյունավետ և մատչելի բանկային ծառայությունների մատուցմանը

Բանկի ընդհանուր կապիտալի նվազագույն չափը սահմանվում է.

- 1) մինչև 2017 թվականի հունվարի 1-ը՝ հինգ միլիարդ (5.000.000.000) Հայաստանի Հանրապետության դրամ,
- 2) նոր ստեղծվող բանկերի համար՝ մինչև 2017 թվականի հունվարի 1-ը երեսուն միլիարդ (30.000.000.000) Հայաստանի Հանրապետության դրամ,
- 3) 2017 թվականի հունվարի 1-ի դրությամբ և դրանից հետո՝ բանկի և նոր ստեղծվող բանկերի համար՝ երեսուն միլիարդ (30.000.000.000) Հայաստանի Հանրապետության դրամ»:

2015թ. սկզբից արժույթային շուկայում նկատվեց հավասարակշիռ մակարդակ, սակայն համաշխարհային տնտեսական զարգացումները հետագայում էլ պետք է ճնշումներ գործադրեն \$ինանսական շուկայի վրա: Ըստ ԿԲ-ի⁸⁹ ՀՀ տնտեսությունը կանգնում

⁸⁸Տե՛ս ՀՀ ԿԲ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 9-Ի ԹԻՎ 39-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» 30.12.2014թ.:

⁸⁹Տե՛ս «Ֆինանսական կայունության հաշվետվություն, 2015, առաջին կիսամյակ» ՀՀ ԿԲ, էջ 6-7:

Ե հետևյալ հիմնական մարտահրավերների առաջ՝ միջազգային շուկաներում գունավոր մետաղների գների, ՀՀ արտահանման դուլարային արժեքի, ներքին սպառման և օտարերկրյա ներդրումների նվազումը: Մեծապես կարևորվում է ՌԴ-ում աշխատանքային միգրանտների կողմից ուղարկված գումարի արժեզրկումը:

Այսպիսի զարգացումները ներհատուկ է ոչ միայն ՀՀ տնտեսությանը, այլ շատ զարգացող երկրների: Բանկերի կապիտալը դիտարկելով որպես ռիսկերի և դրան գծով կորուստների կլանման առաջնահերթ տարր, Բազելյան կոմիտեն Բազել 3-ում առաջ է քաշում պրոցիկլայնության կրճատման հիմնախնդիր: Այս խնդրի համար առաջարկվում է երկու նոր գործիքներ՝ կապիտալի պահպանման և հակացիկլիկ բուժքերներ:

Կապիտալի պահպանման բուժքերի էությունը կայանում է նրանում, որ ոչ ճգնաժամային շրջանում բանկերը պետք է կուտակեն միջոցներ, որոնք կօգնեն հաղթահարել ճգնաժամերն առանց ցնցումների: Կապիտալի պահպանման բուժքերը սահմանվում է CET 1 կապիտալի նվազագույն մակարդակի վրա, որը խախտելու դեպքում բանկեր կենթարկվեն չբաշխված շահույթը բաշխելու, բաժնետոմսերը բանկի նախաձեռնությամբ ետգնելու կամ աշխատակիցներին պարգևատրումներ նշանակելու սահմանափակումների, ընդ որում, սահմանափակումները աստիճանաբար մեծանում են: Կապիտալի պահպանման բուժքերը սահմանվել է 2,5%-ի չափով: Կապիտալի պահպանման բուժքերը կգործարկվի 2016թ. հունվարից, իսկ ամբողջությամբ ուժի մեջ կմտնի 2019թ. հունվարի 1-ին:

Հաջորդ գործիքը կապիտալի հակացիկլիկ բուժքերն է, որի հիմնական նպատակը ոչ միայն առանձին բանկերի ֆինանսական կայունությանը ճգնաժամի ժամանակ ապահովելն է, այլև ճգնաժամային փուլում իրական տնտեսության վարկավորումը պահպանելու հնարավորությունն է՝ առանց վտանգելու բանկերի ֆինանսական կայունությանը և, այդպիսով խուսափելով արատավոր շրջանում հայտնվելու վտանգից: Յուրաքանչյուր երկրի կարգավորող մարմին պետք է մոնիտորինգի ենթարկի բանկային

համակարգի համակարգային ռիսկերը և կախված դրանց մեծություներից՝ ռիսկով կշռված ակտիվների 0-2,5%-ի չափով⁹⁰:

Մեր կարծիքով, Բանկային կապիտալի տարրերի, ինչպես նաև կապիտալի նվազագույն մեծության նկատմամբ նման խստացող պահանջները անխուսափելիորեն բերելու են բանկերի եկամտաբերության անկման: Այդ դեպքում սովորաբար շուկայի մասնակիցների թիվը կտրուկ կրճատվում է, ինչն էլ իր հերթին կարող է նվազեցնել մրցակցությունը: Մի կողմից, 2014թ և 2015թ բանկերի եկամտաբերության անկումը հիմնականում պայմանավորված է եղել բանկերի վարկային պորտֆելների որակի վատթարացմամբ, մյուս կողմից, բանկերի կողմից կապիտալի մեծության ավելացումը՝ պայմանավորված կապիտալի համալրմամբ, մոտապագայում բանկերի մոտ առաջացնելու է դրանք եկամտաբեր ակտիվներում ներդնելու խնդիր: Յետևաբար, կանխատեսվում է, որ բանկերի եկամտաբերության ցուցանիշների անկումը կամ առնվազն ցածր մակարդակը կպահպանվի նաև 2017թ-ին: Եկամտաբերության անկումը և մրցակցության նվազումը բերում է բանկային ծառայությունների սակագների բարձրացման: Այս երևույթը ՀՀ բանկային համակարգի համար կարելի է նկատել աղյուսակ 11-ում, որտեղ ներկայացված է համակարգի շահութաբերությունն ըստ ակտիվների և ըստ կապիտալի:

⁹⁰Տե՛ս <<Բազել 3, համառոտ տեղեկանք>>, ՀՀ ԿԲ, Երևան 2012թ.:

Աղյուսակ 11⁹¹. ՀՀ բանկային համակարգի շահութաբերության դինամիկան՝ ըստ 2005-2016 թթ.:

Ամսաթիվ	Դեկտ-2005	Դեկտ-2006	Դեկտ-2007	Դեկտ-2008	Դեկտ-2009	Դեկտ-2010	Դեկտ-2011	Դեկտ-2012	Դեկտ-2013	Դեկտ-2014
Շահութաբերության ըստ ակտիվների	2.9	3.9	3.5	3.5	1.0	2.8	2.4	2.5	1.9	1.0
Շահութաբերության ըստ կապիտալի	13.7	17.2	16.0	15.2	4.8	12.3	12.7	14.7	12.0	6.4
Ամսաթիվ	1.Դկտ2015	Հուն-2016	Փետ-2016	Մարտ-2016	Ապրիլ-2016	Մայիս-2016	Հունիս-2016	Հուլիս-2016	Օգոստ-2016	Սեպտ-2016
Շահութաբերության ըստ ակտիվների	-0.5	-0.8	-0.5	0.2	0.2	0.1	0.5	0.2	0.3	0.5
Շահութաբերության ըստ կապիտալի	-3.5	-5.4	-3.3	1.0	1.0	0.8	3.3	1.2	2.0	3.2

Աղյուսակ 11-ից նկատելի է, որ ի տարբերություն մինչև 2014թ., 2015թ.-ից սկսած բանկային համակարգի շահութաբերության ցուցանիշները աննախադեպ անկում են ապրում, ընդհուպ մինչև վնասի ստացումը: Տնտեսության ճգնաժամային վիճակով և բանկերի հիմնական կապիտալի համալրմամբ պայմանավորված՝ 2016թ. բանկերի շահութաբերությունը պահպանվում է մոտզրոյական մակարդակում:

⁹¹Տե՛ս <https://www.cba.am/am/SitePages/statfinorg.aspx>:


Աղյուսակ 12⁹² .ՀՀ բանկային համակարգի հիմնական հաշվեկշռային ցուցանիշները(մլն. ՀՀ դրամ)՝ ըստ2014-2016թթ.:

	Ընդհանուր ակտիվներ	Ընդհանուր պարտավորություններ	Հաշվեկշռային ընդհանուր կապիտալ
31.12.2014	3,410,923.0	2,941,803	469,120
31.01.2015	3,362,310	2,885,637	476,673
28.02.2015	3,323,660	2,850,248	473,411
31.03.2015	3,264,759	2,790,062	474,697
30.04.2015	3,295,124	2,827,933	467,191
31.05.2015	3,304,766	2,835,091	469,675
30.06.2015	3,239,191	2,760,956	478,235
31.07.2015	3,310,745	2,833,925	476,820
31.08.2015	3,304,084	2,825,597	478,488
30.09.2015	3,305,924	2,829,091	476,833
31.10.2015	3,263,763	2,789,665	474,098
30.11.2015	3,322,367	2,844,913	477,454
31.12.2015	3,457,081	2,943,031	514,050
30.01.2016	3,443,816	2,933,432	510,384
29.02.2016	3,472,527	2,961,834	510,693
31.03.2016	3,493,003	2,963,074	529,928
30.04.2016	3,446,412	2,920,677	525,734
31.05.2016	3,421,310	2,893,624	527,685
30.06.2016	3,455,802	2,907,821	547,981
31.07.2016	3,499,760	2,952,287	547,473
31.08.2016	3,497,012	2,946,189	550,823
30.09.2016	3,553,606	2,982,638	570,968

Ինչպես կարելի է նկատել աղյուսակ 12-ում, 2014թ. դեկտեմբերին բանկային համակարգի շահութաբերությունը ըստ ակտիվների և կապիտալի կազմել են համապատասխանաբար 1 տոկոս և 6.4 տոկոս: Չուտշահույթը կազմել է 32,066 մլն ՀՀ դրամ: Ընդհանուր կապիտալի մեծացման որոշման արդյունքում մինչև 2017թ. բանկային համակարգի ընդհանուր կապիտալը պետք է համալրվեր 222 մլրդ ՀՀ դրամով (եթե բոլոր բանկերը համալրեին և շարունակեին աշխատանքը), որի արդյունքում ընդհանուր կապիտալը կկազմեր 691 մլրդ դրամ: Մեր կարծիքով, վերջին ժամանակներս բանկային համակարգում տոկոսադրույքների (այդ թվում՝ ավանդների և

⁹² Տե՛ս <https://www.cba.am/am/SitePages/statfinorg.aspx>:


վարկերի) նվազման միտումները զգալիորեն պայմանավորված են բանկային համակարգի կապիտալի ավելացմամբ: Այդ միտումները, մի կողմից, շահեկան են վարկառուների համար, սակայն, մյուս կողմից, ձեռնտու չեն ավանդատուների և բանկերի սեփականատերերի համար: Տնտեսական ներկայումս դրսևորվող ցածր աճի պայմաններում տնտեսությանը հազիվ թե կարողանա առաջիկա տարիներին կլանել կապիտալի ավելացմամբ պայմանավորված բանկային համակարգում առկա ավելցուկային իրացվելիությունը: Դա, իր հերթին, կարող է հանգեցնել ներգրավված միջոցների նկատմամբ բանկերի պահանջարկի նվազմանը, և որպես հետևանք, ավանդների տոկոսադրույքների հետագա փոքրացմանը:



Գծապատկեր 14⁹³. Առևտրային բանկերի կողմից ներգրավված ավանդների միջին տոկոսադրույքները:

Վարկերի տոկոսադրույքների բարձրացման միտում չի նկատվում, քանի որ դրանց նկատմամբ պահանջարկն է ապես կրճատվել է: Այս իրավիճակը արտացոլում է ընդամենը հիմնական կապիտալի փոփոխության հետևանքները: Դրանք խորացման միտում կունենան կապիտալի պահպանման և հակացիկլիկ բուժքերների ամբողջական կիրառման դեպքում:

⁹³ Տե՛ս <https://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx>:



Գծապատկեր 15⁹⁴. Առևտրային բանկերի կողմից տրամադրված վարկերի միջին տոկոսադրույքները:

Ակնհայտ է դառնում, որ բանկային համակարգի ֆինանսական կայունությանն ուղղված գործողությունները փոքրացնելու են բանկային միջնորդության մակարդակը, ինչն արտահայտվում է աղյուսակ 13-ում բերված բանկային համակարգի ակտիվներ/ՅՆԱ և վարկեր/ՅՆԱ ցուցանիշներում:

Աղյուսակ 13⁹⁵. Բանկային համակարգի ակտիվներ/ՅՆԱ, վարկեր/ՅՆԱ ցուցանիշները՝ ըստ 2007-2015 թթ.:

%	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015
Բանկային համակարգի ակտիվներ / ՅՆԱ	24.3	28.7	42.2	45.1	54.7	61.8	69.0	70.3	68.5
Բանկային համակարգի վարկեր / ՅՆԱ	13.5	17.8	23.4	27.4	33.6	40.2	42.1	42.7	39.8

Կատարված դիտարկումները և իրականացված ուսումնասիրությունները թույլ են տալիս ենթադրելու, որ ՀՀ բանկային համակարգը և առանձին բանկերն ունեն ֆինանսական կայունության որոշակի մակարդակ, ինչը թույլ է տալիս ճգնաժամերի և շոկերի ժամանակ կարգավորել ոլորտն առանց էական ցնցումների: Կենտրոնական բանկի համակարգման և վերահսկողության մեխանիզմները գործունակ են և արեկվատ

⁹⁴ Տ՛ե՛ս <https://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx>:

⁹⁵ Տ՛ե՛ս <https://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx>:

ազդում են շուկերի զսպման և նոր հավասարակշռություն հաստատելու գործողությունների ժամանակ: Հատկանշական է բանկերի համար ձևավորված նոր իրավիճակը, երբ կարգավորման ավելի խիստ պայմանները ուղեկցվում են թույլ տնտեսական ակտիվության հետ:

ԳԼՈՒԽ 3. ՀՀ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆԴԻՐՆԵՐԸ

3.1. Բանկերի ֆինանսական կայունության գնահատումը ընդհանրական ինդեքսի միջոցով

Երբ դիտարկումները կատարվում են մակրոտնտեսական հարթության նից, կարևորվում են ֆինանսական հատվածի, բանկային և այլ համակարգերի ֆինանսական կայունության ներքինը: Սակայն պետք է ուշադրություն դարձնել նաև սպառողի շահերի և իրավունքների պաշտպանությանը: Այդ նպատակով սույն աշխատանքում տնտեսական նորմատիվների միջոցով ՀՀ առևտրային բանկերի համար կառուցվել է ֆինանսական կայունության ընդհանուր ինդեքս, որը հնարավորություն է տալիս տեսնել, թե յուրաքանչյուր բանկ կայունության տեսանկյունից ինչ դիրք է զբաղեցնում բանկային համակարգում: Ֆինանսական կայունության ընդհանուր ինդեքսը թույլ է տալիս տնային տնտեսության ներքին, ձեռնարկության ներքին, ֆինանսական հաստատության ներքին և Կենտրոնական Բանկին որոշումների կայացման գործընթացը դարձնել ավելի խորացված և հիմնավոր:

Դրամավարկային և ֆինանսական կայունությանը շուկայական տնտեսության արդյունավետ գործունեության կարևորագույն երաշխիքն է: Այն ժամանակի մեջ իրական ռեսուրսների բաշխման ռացիոնալ որոշումների կայացման հիմքն է կազմում և հետևաբար կատարելագործում խնայողության ներքին և ներդրումների միջավայրը: Կայունության բացակայությանը ստեղծում է անորոշություններ, որոնք առաջացնում են միջժամանակային պայմանագրերի կնքման խոչընդոտներ: Ծայրահեղ դեպքերում ֆինանսական հատվածի անկայունության ներքին բացասաբար են ազդում տնտեսական ակտիվության և քաղաքական կառուցվածքների վրա: Այդ պատճառով էլ ֆինանսական կայունության ապահովումը ԿԲ-ի հիմնական նպատակներից մեկն է:

Ֆինանսական կայունությանը ֆինանսական համակարգի մաս կազմող ինստիտուտների սահուն գործունեությունն է: Այլ կերպ ասած ֆինանսական կայունությանը դա ֆինանսական անկայունության բացակայությունն է, իսկ ֆինանսական անկայունությանը այն իրավիճակն է, երբ տնտեսական կատարողականը թուլանում է՝ պայմանավորված ֆինանսական ակտիվների գների տատանումներով կամ ֆինանսական միջնորդների

կողմից պայմանագրային պարտականությանները կատարելու անկարողությանը:

Սույն աշխատանքի նախորդ ենթագլուխներում ուսումնասիրվել են ֆինանսական կայունությանը վերաբերող միջառք աշխատանքներ, սակայն ֆինանսական կայունությանը նդհանուր ինդեքսի կառուցման նպատակով անհրաժեշտ է մեջբերել ևս մի քանի հեղինակների եզրակացություններ:

Գրականության մեջ առանձնացվում է ֆինանսական աղետի երկու հիմնական պատճառ՝ ցիկլային և մոնետարիստական: Ցիկլային պատճառները մանրամասն քննարկված են Յիման Մինսկիի⁹⁶ և Չարլզ Կինդլբերգերի⁹⁷ աշխատանքներում: Ֆինանսական աղետին հանգեցնող գործընթացը սովորաբար սկսվում է այն պահից, երբ որոշակի բարենպաստ իրադարձություն հանգեցնում է ֆինանսական ակտիվների առաջարկվող գների բարձրացման: Գների աճը բերում է գնումների աճին, քանի որ կանխատեսվում է, որ գների աճի տրենդը կպահպանվի: Սակայն, ի վերջո գները հասնում են գերազանահատված մակարդակին կամ որոշակի արտաքին իրադարձություն հանգեցնում է գների փլուզման, որը աղետալի հետևանքներ է ունենում այն ներդրողների համար, որոնց պորտֆելները ֆինանսավորվում են պարտքային ձևով (ներառյալ ֆինանսական միջնորդները):

Մոնետարիստների կարծիքով (Միլտոն Ֆրիդման և Աննա Շվարց⁹⁸) ֆինանսական անկայունության հիմնական աղբյուրը դրամավարկային քաղաքականությունն է, այսինքն՝ դրամավարկային քաղաքականության իրականացման մեջ բաց թողնված սխալներն են հանգեցնում ֆինանսական անկայունության:

Սակայն ֆինանսական անկայունության պատճառների այս մեկնաբանությունները բավարար չեն ամբողջ գործընթացը նկարագրելու համար: Ցիկլային մոտեցումը հաշվի չի առնում իռացիոնալ և անհաշվեկշռված վարքագիծը, իսկ մոնետարիստական մոտեցումը շատ սահմանափակ է, քանի որ բացառում է ոչ դրամավարկային պատճառների առկայություն փաստը: Վերջին

⁹⁶ St'u Minsky H., P., A Theory of Systematic Fragility, Financial Crises, New York, 1977, pp. 138-142:

⁹⁷ St'u Kindleberger C., P., Manias, Panics and Crashes: A History of Financial Crises, Basic Books, New York, 1978, pp. 189-203:

⁹⁸ St'u Friedman M., Schwartz A., J., A Monetary History of the United States 1867-1960, National Bureau of Economic Research, New York, 1963:

տարիներին խաղերի տեսության և անորոշության պայմաններում որոշումների կայացման տեսություններից եկած դրույթները ավելի ընդունելի բացատրություն են ապահովում, թե տնտեսվարող սուբյեկտների վարքագիծը ինչպես կարող է հանգեցնել ֆինանսական անկայունության (Վիլիամսոն⁹⁹, Գրինվալդ և Ստիգլից¹⁰⁰):

Ֆինանսական կայունության վերոնշյալ սահմանումները և դատողությունները ելնում են մակրոտնտեսական տեսանկյունից, ըստ որի մեկ կազմակերպության ֆինանսական խնդիրները կամ անկայունությունը խնդրահարույց չէ, քանի որ ընդունված է համարել, որ շուկայական մրցակցային համակարգում տնտեսական սուբյեկտները չեն կարող նշանակալի դերակատարություն ունենալ ամբողջ տնտեսության վրա: Այս պարագայում ակնհայտ է դառնում, որ որևէ կազմակերպության ֆինանսական կայունության մարտահրավերները ներքին են, եթե այն չի պայմանավորվում ողջ տնտեսությունից եկող խնդիրներով: Սակայն նույնը հնարավոր չէ պնդել ֆինանսական կազմակերպությունների համար. առավել ևս՝ բանկերի համար: Բանկերը ռիսկի են դիմում ոչ միայն սեփական, այլև բազմաթիվ ավանդատուների միջոցներով, ապա այդպիսի գործունեությունը կարգավորման խիստ միջոցների անհրաժեշտություն ունի: Դրանով է պայմանավորված գրեթե բոլոր շուկայական տնտեսությամբ երկրներում բանկային համակարգի նկատմամբ ուղղված մեծ ուշադրությունը: Մյուս կողմից բանկերը, հանդիսանալով տնտեսության մեջ ֆինանսական միջնորդության հիմնական սուբյեկտներ, կարող են իրենց անկայունությամբ վնասել ամբողջ տնտեսությանը (դա հաստատվեց 2009թ. ֆինանսատնտեսական ճգնաժամի ժամանակ): Այդ պատճառով պետության կողմից բանկային համակարգի կարգավորման նպատակով ընդունված է կիրառել տնտեսական նորմատիվներ, որոնք ուղղված են բանկային ռիսկերի նվազեցմանը:

⁹⁹ Տե՛ս Williamson S., M., Costly Monitoring, Loan Contracts and Equilibrium Credit Rationing, Quarterly Journal of Economics 102, 1987, pp. 135-145

¹⁰⁰ Տե՛ս Greenwald B., Stiglitz J., Information, Finance and Markets: the Architecture of Allocative Mechanisms, National Bureau of Economic Research Working Paper No 3652, Cambridge, 1991, pp. 6-14:

Տնտեսական նորմատիվների համակարգը ներառում է հիմնական և հատուկ տնտեսական նորմատիվներ: Հիմնական տնտեսական նորմատիվները կրում են համընդհանուր բնույթ և գործում են անընդհատ: Իսկ հատուկ տնտեսական նորմատիվները սահմանվում են միայն արտակարգ դեպքերում և կրում են ժամանակավոր բնույթ: Աղյուսակ 18-ում բերված են տնտեսական նորմատիվները, որոնք կիրառվել են սույն աշխատանքում:

Բանկի կանոնադրական հիմնադրամի վերաբերյալ տնտեսական նորմատիվը կորցրել է իր տնտեսագիտական իմաստը և արտահայտվում է որպես իրավական պահանջ բանկի լիցենզավորման մեջ: Երկրորդ նորմատիվը՝ ընդհանուր (սեփական) կապիտալի նվազագույն չափը կարևորվում է նրանով, որ մեծ կապիտալի պայմաններում ավելի բարձր է հաստատության կայունությունը, ավելի հեշտ է դիմակայել որոշ ռիսկերի, ավելի ցածր է որոշ ծառայությունների ինքնարժեքը: Կապիտալի համարժեքության նորմատիվների տնտեսագիտական իմաստն այն է, որ բանկի կապիտալը պետք է համարժեք կամ բավարար լինի ստանձնած ռիսկերին: Ըստ էության, այս նորմատիվները կապիտալի որոշակի մեծությամբ են պայմանավորում միջոցներ ներգրավելու և դրանք ռիսկային ակտիվներում տեղաբաշխելու բանկի հնարավորությունը: Հիմնական տնտեսական նորմատիվների հաջորդ կարևոր բաղադրիչը իրացվելիության նորմատիվներն են, որոնք ուղղված են օրենսդրությամբ, ինչպես նաև բանկի կողմից սահմանված ժամկետներում՝ հաճախորդի առաջին իսկ պահանջով կանխիկ կամ անկանխիկ գործառույթների կատարման երաշխիքների ապահովմանը: Մեկ փոխառուի և խոշոր փոխառուների գծով նորմատիվները սահմանափակում են բանկի վարկային ռիսկը: Առևտրային բանկն ինքն է կառավարում իր վարկային ռիսկը, իսկ նորմատիվները միայն սահմանափակում են ռիսկի կենտրոնացվածության աստիճանն ընդհանրապես և բանկի հետ կապված անձանց մասով՝ մասնավորապես¹⁰¹:

¹⁰¹ Տե՛ս Ասատրյան Բ., Բանկային գործ, Երևան, Սարվադ Հրատ., 2013, էջ 505-518:

**Ֆինանսական կայունության ընդհանուր ինդեքսի հաշվարկման
մեթոդաբանությունը:**

Ֆինանսական կայունության ընդհանուր ինդեքսը հաշվարկվում է տնտեսական նորմատիվի գործող սահմանաչափից փաստացի շեղման մակարդակի օգնությամբ:

Նշանակենք A_i^j -ով j -րդ նորմատիվի գծով i -րդ բանկի փաստացի մակարդակը, N^j -ով j -րդ նորմատիվի գործող թույլատրելի սահմանաչափը, D_i^j -ով j -րդ նորմատիվի գծով i -րդ բանկի շեղվածության աստիճանը՝

$$D_i^j = \frac{A_i^j - N^j}{N^j}, \quad (1)$$

բոլոր նվազագույն սահման ունեցող նորմատիվների համար:

$$D_i^j = \frac{N^j - A_i^j}{N^j}, \quad (2)$$

բոլոր առավելագույն սահման ունեցող նորմատիվների համար:

Քանի որ D_i^j -երի ստացված տվյալները համասեռ չեն այն իմաստով, որ արժեքների տատանման ամպլիտուդան մեծ է, առաջանում է նորմավորման պահանջ, որը հնարավոր է իրականացնել հետևյալ եղանակով.

$$IP_i^j = \frac{D_i^j}{\max_j D_i^j}, \quad (3)$$

որտեղ IP_i^j -ն i -րդ բանկի համար j -րդ նորմատիվի գծով մասնակի ինդեքսն է: Նորմավորման նմանատիպ մոտեցումը հնարավորություն է տալիս ինչպես մասնակի ինդեքսի արժեքները բերել (0;1) միջակայքում, այնպես էլ հավասար կշիռներ տալ բոլոր մասնակի ինդեքսներին ընդհանուր ինդեքսը հաշվարկելիս: Այլապես մեծ թվերով արտահայտված նորմատիվներից շեղումները զգալիորեն կազդեն ընդհանուր ինդեքսի արժեքների վրա: IP_i^j մասնակի ինդեքսի հաշվարկումը հնարավորություն է տալիս տեսնել յուրաքանչյուր բանկի զբաղեցրած դիրքը ամեն նորմատիվի ուղղությամբ:

Հաջորդ քայլը ֆինանսական կայունության ընդհանուր ինդեքսի հաշվարկումն է՝

$$IT_i = \sum_j IP_i^j, \quad (4)$$

որտեղ IT_i -ն i -րդ բանկի կայունության ընդհանուր ինդեքսի արժեքն է: Ինդեքսը հաշվարկված է կոնկրետ պահի դրությամբ բանկերի նորմատիվային դիրքերով, սակայն այն կարելի է ընդլայնել մտցնելով ժամանակի բաղադրիչը, ինչը հնարավորություն կտա ուսումնասիրել բանկերի դիրքերի փոփոխությունը ժամանակի մեջ:

Ինչպես արդեն նշվեց՝ կենտրոնական բանկն առևտրային բանկերի ֆինանսական կայունությունն ապահովում է տնտեսական նորմատիվների միջոցով: Սույն աշխատանքում ֆինանսական կայունության ընդհանուր ինդեքսի հաշվարկումը իրականացվում է աղյուսակ 1-ում բերված տնտեսական նորմատիվների օգնությամբ: Այդ նորմատիվները եռամսյակային կտրվածքով ներկայացված են բանկերի հիմնական տնտեսական նորմատիվների վերաբերյալ հաշվետվության մեջ: ՀՀ բանկերն իրենց կայքերում այլ նորմատիվներ ևս հրապարակում են, սակայն դա կրում է կամավոր բնույթ և հնարավոր չէ բոլոր բանկերի համար հավաքագրել այդ ցուցանիշները: Սույն աշխատանքի համար հավաքագրած ցուցանիշները ներկայացված են հավելվածի աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 18-ում ներկայացված առաջին չորս նորմատիվների համար D_i^j -երի հաշվարկվել են հավասարում 1-ով, քանի որ դրանք ունեն նվազագույն սահմանաչափեր: Իսկ վերջին չորս նորմատիվների համար D_i^j -երի հաշվարկվել են հավասարում 2-ով, քանի որ դրանք ունեն առավելագույն սահմանաչափեր: Հաշվարկված ցուցանիշները ներկայացված են հավելվածի աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 18¹⁰²: Ֆինանսական կայունության ընդհանուր ինդեքսի հաշվարկում ներառված տնտեսական նորմատիվները և դրանց սահմանաչափերը

Նորմատիվներ	ՀՀ կենտրոնական բանկի սահմանած նորմատիվի թույլատրելի մեծությունը
Ընդհանուր (սեփական) կապիտալի նվազագույն չափը	5,000,000
Ն ₁ Ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը	12.0%
Ն ₂ ¹ Բանկի բոլոր արժույթներով արտահայտված բարձր իրացվելի ակտիվների և բոլորի արժույթներով արտահայտված ընդհանուր ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը	15.0%
Ն ₂ ² Բանկի բոլոր արժույթներով արտահայտված բարձր իրացվելի ակտիվների և բոլոր արժույթներով արտահայտված ցայտանջ պարտավորությունների միջև նվազագույն հարաբերակցությունը	60.0%
Ն ₃ ¹ Մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափը	20.0%
Ն ₃ ² Խոշոր փոխառուների գծով ռիսկի առավելագույն չափը	500.0%
Ն ₄ ¹ Բանկի հետկապված մեկ անձի գծով ռիսկի առավելագույն չափը	5.0%
Ն ₄ ² Բանկի հետկապված բոլոր անձանց գծով ռիսկի առավելագույն չափը	20.0%

Նորմավորելով D_i^j -երի արժեքները՝ ստանում ենք IP_i^j -կայունության մասնակի ինդեքսները, որոնց արժեքները ներկայացված է հավելվածի աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 19: IP_i^j -կայունության մասնակի ինդեքսների առավելագույն, նվազագույն դիրք գրադեցնող բանկերը:

Նորմատիվ	Ընդհանուր (սեփական) կապիտալի նվազագույն չափը	Ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը	Բանկի բոլոր արժույթներով արտահայտված բարձր իրացվելի ակտիվների և բոլորի արժույթներով արտահայտված ընդհանուր ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը	Բանկի բոլոր արժույթներով արտահայտված բարձր իրացվելի ակտիվների և բոլոր արժույթներով արտահայտված ցայտանջ պարտավորությունների միջև նվազագույն հարաբերակցությունը	Մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափը	Խոշոր փոխառուների գծով ռիսկի առավելագույն չափը	Բանկի հետկապված մեկ անձի գծով ռիսկի առավելագույն չափը	Բանկի հետկապված բոլոր անձանց գծով ռիսկի առավելագույն չափը
Պիրք	Ամերիաբանկ	Մեկ և արժ Բանկ	Մեկ և արժ Բանկ	Յուրեյբանկ	ԱԿԲԱ-ԿՐԵՂԻՏ ԱԳՐԻԿՈՒԲԱՆԿ	ԲՏԱ Բանկ	Մեկ և արժ Բանկ	Մեկ և արժ Բանկ

¹⁰²Տե՛ս <https://www.cba.am/am/SitePages/regbanks.aspx>:

Նվազագույնը	FSU Բանկ	Անելիք Բանկ	Արցախբանկ	Հայ բիզնես բանկ	Արցախբանկ	Հայ բիզնես բանկ	ՎՏԲ-Հայաստան Բանկ	Յուրիբանկ
-------------	----------	-------------	-----------	-----------------	-----------	-----------------	-------------------	-----------

Աղյուսակ 19-ի «առավելագույն» տողում նշված են այն բանկերը, որոնք կոնկրետ ինդեքսի գծով ունեն մեկ թվին հավասար արժեք: Իսկ նվազագույն տողում նշված են այն բանկեր, որոնք կոնկրետ ինդեքսի գծով ունեն ամենափոքր արժեքը:

Ինչպես երևում է վերոնշյալ աղյուսակից, չորս ինդեքսների գծով առավելագույն դիրք է զբաղեցնում Մեյլլաթ Բանկը, որը պայմանավորված է հետևյալ հանգամանքով՝ Մեյլլաթ Բանկն իրականացնում է առավելապես ոչ ռիսկային գործունեություն, այն սպասարկում է ՀՀ-ում գտնվող Իրանի Իսլամական հանրապետության սուբյեկտների ֆինանսական միջնորդությունները՝ լինելով այդ երկրի պետական բանկի դուստր բանկ:

Ընդհանուր կապիտալի նվազագույն չափի նորմատիվի գծով Ամերիաբանկը զբաղեցնում է առավելագույն դիրք, քանի որ ՀՀ-ում գործող բանկերից այդ բանկի ընդհանուր կապիտալը մեծագույնն է:

Բանկի բոլոր արժույթներով արտահայտված բարձր իրացվելի ակտիվների և բոլոր արժույթներով արտահայտված ցպահանջ պարտավորությունների միջև նվազագույն հարաբերակցության նորմատիվի գծով Յուրիբանկը զբաղեցնում է առավելագույն դիրքը, քանի որ այն իրականացնում է ակտիվ վարկային քաղաքականություն, որը պայմանավորված է համեմատաբար մեծ ներգրավված միջոցների առկայությամբ:

Մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափի և խոշոր փոխառուների գծով ռիսկի առավելագույն չափի նորմատիվներով համապատասխանաբար առավելագույն դիրքեր են զբաղեցնում Ակբա-Կրեդիտ Ագրիկուլ Բանկը և ԲՏԱ Բանկը, ինչը վկայում է այն մասին, որ այդ բանկերն իրականացնում են առավել դիվերսիֆիկացված վարկային քաղաքականություն:

Ստացված մասնակի ինդեքսների միջոցով 3 բանաձևի հիմման վրա հաշվարկվել է ֆինանսական կայունության ընդհանուր ինդեքսը, որի արդյունքները ներկայացված են աղյուսակ 20-ում: Ըստ այդ արդյունքների ֆինանսապես կայուն առաջին երեք

բանկերն են Մեյլլաթ Բանկը, Ինեկոբանկը, Ակբա-Կրեդիտ Ագրիկուլ Բանկը:

Բանկերը իրենց դիրքը բարելավելու նպատակով կարող են ուշադրությունը կենտրոնացնել այն նորմատիվների մասնակի ինդեքսների վրա, որոնցով էապես զիջում են մնացած բանկերին:

Աղյուսակ 20: 33 առևտրային բանկերի ֆինանսական կայունության ընդհանուր ինդեքսը:

Բանկ	Կայունության ընդհանուր ինդեքս
Մեյլլաթ Բանկ	5.898
Ինեկոբանկ	4.882
Ակբա-Կրեդիտ Ագրիկուլ Բանկը	4.692
Արարատբանկ	4.575
Ամերիաբանկ	4.407
Առեկսիմբանկ	4.032
ԲՏԱ Բանկ	3.959
Պրոմեթեյ Բանկ	3.750
Պրոկրեդիտ Բանկը	3.635
Արմսվիսբանկ	3.587
Չարգացման Հայկական Բանկ	3.348
Բիբլոս Բանկ	3.341
Անելիք Բանկ	3.060
Կոնվերսբանկ	3.057
Էյջ-Էս-Բի-Սի Բանկ	2.782
Յոլնիբանկ	2.532
Արդշինբանկ	2.220
ՎՏԲ-Հայաստան Բանկ	2.158
Հայ Էկոնոմբանկ	2.035
Հայբիզնեսբանկ	2.008
Արցախբանկ	1.561


Ինդեքսի կառուցվածքը հնարավորություն է տալիս այն ընդլայնել ժամանակի տարբեր պահերի համար և պարզել, թե ինչպես են փոխվել բանկերի ֆինանսական կայունության աստիճանը դինամիկայի մեջ:

3.2. ՀՀ առևտրային բանկերի և բանկային համակարգի հավանական զարգացումները արդի փոփոխությունների համատեքստում

Առևտրային բանկերի և բանկային համակարգի ֆինանսական կայունությունը, անշուշտ, էապես կախված է կարգավորող և վերահսկող մարմնի¹⁰³, առանձին բանկերի գործողություններից: Սակայն պետք է հասկանալ, որ բանկային գործի էությունը կայանում է ֆինանսական միջնորդության օգնությամբ ձեռնարկատիրական գործունեության իրականացումը, որի մեջ առավել մեծ դերակատարություն ունի ավանդների ընդունում և վարկերի տրամադրումը: Սա նշանակում է, որ խնայողություն կատարող սուբյեկտների միջոցները որպես պարտավորություն վերցնելով՝ բանկերը դրանք տրամադրում են ներդրողներին կամ սպառողներին: Տնտեսական ճգնաժամերի կամ ցիկլերի ժամանակ վարկառուները համատարած կարող են դառնալ անվճարունակ, ինչը կազդի բանկերի գործունեության վրա: Այս երևույթը գտնվում է ՀՀ բանկերի խիստ հսկողության ներքո. վարկերը տրվում են լավ ապահովված գրավով (չնայած վերջին իրադարձությունները ցույց են տալիս, որ գրավով ապահովված վարկերի վերադարձելիությունն էլ է դարձել խնդրահարույց՝ անշարժ գույքի գների անկման պատճառով), երաշխավորների առկայությամբ, բարձր տոկոսադրույթներով, վարկունակության խիստ գնահատականներով և այլն: Այսինքն՝ կարելի է ասել, որ վարկերի (ակտիվների) հավանական ռիսկերը գտնվում են բանկերի վերահսկողության ներքո: Նույնը հնարավոր չէ ասել ավանդների (պարտավորությունների) մասին, քանի որ բանկերը չեն կարող վերահսկել ավանդատուների պահանջը իրենց միջոցների ետ վերադարձման վերաբերյալ: Այս երևույթը ձևավորում է կարծիք, ըստ որի բանկային համակարգի ֆինանսական կայունության հիմքում ընկած է ավանդատուների վստահությունը բանկերի նկատմամբ: Սրա մասին իրենց աշխատանքում անդրադարձել են

¹⁰³ՀՀ դեպքում՝ ՀՀ Կենտրոնական բանկի:

Վիլիամ Կ. և այլոք¹⁰⁴ նշելով, որ բանկերի վրա հիմնված ֆինանսական համակարգով երկրներում ֆինանսական կայունությանը պայմանավորված է ավանդատուների (ցպահանջ հաշիվներ ունեցողների) վարքով: Ավանդատուների վարքի մեջ մեծ դերակատարություն ունի հիշողությունը: Բազմիցս նշվել է, որ հորհրդային Միության փլուզման հետևանքով ավանդների կորուստներն էապես նվազեցրել են բանկերի նկատմամբ վստահությունը: Սակայն սերնդափոխությունը և նորանկախ ճյառագծային պատմության բանկային համակարգի կայունությունն աստիճանաբար հավատ են ներշնչում ազգաբնակչությանը, ինչի մասին է վկայում ավանդների աճը այս տարիներին (տես գծապատկեր 16-ը):



Գծապատկեր 16¹⁰⁵: ՀՀ առևտրային բանկերի ավանդների և վարկերի դինամիկան ՀՀ դրամով (մլն)՝ ըստ 2000-2016 թթ.

Բանկային համակարգի նկատմամբ վստահության աճը իրականում կանգնած է օբյեկտիվ հիմքերի վրա, քանի որ չկան տուժած ավանդատուներ, քանի որ խնդրահարույց բանկերին ձեռք են բերում խոշորները և բարեխղճորեն կրում են պարտավորությունները: Սակայն ավանդների աճելին քան տասնութ անգամ աճը չի կարելի բացատրել միայն բանկերի նկատմամբ

¹⁰⁴ St'u Willem K., Romualdas G., Askoldas P., Development of a Methodology of Evaluation of Financial Stability of Commercial Banks, Panoeconomicus, 2014, 3, pp. 349-367.

¹⁰⁵ St'u <https://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx>:


վստահություն անով: Տնտեսագիտության մեջ ավանդի տոկոսադրույքով պայմանավորված եկամուտը միշտ համարվում է այլ ընտրանքային ծախս ներդրումների համար: Ավանդների այսպիսի շեշտակի անը մի կողմից բացատրվում է ներդրումային հնարավորությունների սահմանափակությամբ, մյուս կողմից՝ արժեթղթերի շուկայի թերզարգացվածությամբ, երրորդ կողմից՝ փոքր և նոր ներդրումների անհաջողություններով: Վերոնշյալ խնդիրը ևս ունի էական աղերսներ (եթե փոքր ներդրողների համար բիզնես միջավայրը բարենպաստ չէ, ապա տնտեսությունը բռնում է մոնոպոլացման ճանապարհը, ինչն իր առանձնակի ազդեցությունն է ունենում նաև բանկային համակարգի վրա) ԶԶ բանկային համակարգի \$ինանսական կայունության հետ, սակայն այն առավել նպատակահարմար է դիտարկել ներդրումային միջավայրի ուսումնասիրության ժամանակ:

Բարի Էիչենգրինի «Փոխարժեքի կայունություն և \$ինանսական կայունություն»¹⁰⁶ աշխատանքում նշվում է, որ ճկուն փոխարժեքը համաշխարհային տնտեսությանը ինտեգրված տնտեսություններին հնարավորություն է տալիս իրականացնել դինամիկ փոփոխություններ և զարգացումներ, բայց կայուն փոխարժեքը կարևորվում է առկա հզորությունների պահպանման տեսանկյունից: Բանկային համակարգի համար ևս ճկուն փոխարժեքը արդյունավետ գործելու հնարավորություն է տալիս, քանի որ տնտեսական միջավայրին համապատասխան փոփոխվող փոխարժեքը զսպում է հավանական ռիսկերը և համապատասխանեցնում \$ինանսական միջնորդության ծավալները և տոկոսադրույքները: Ճգնաժամերի ժամանակ այն երկրներում, որոնք թույլ են տալիս փոխարժեքին սահուն ճշգրտվել, \$ինանսական կայունության մակարդակը չի տուժում: Փոխարենը \$իքսված փոխարժեքի քաղաքականությունը երկրներին \$ինանսական փլուզման է տանում:

Գծապատկեր 17-ը ներկայացնում է ԶԶ բանկային համակարգի ավանդները ԱՄՆ դոլարով (ավանդները ստացվել է դրամով ներկայացված ավանդների և ժամանակահատվածին համապատասխանող փոխարժեքի հարաբերությամբ): Այդտեղ կարելի է նկատել, որ անի

¹⁰⁶ Barry E., "Exchange rate and financial stability", University of California, 1998, pp. 38-42.

դիսամիկան այնքան սահուն չէ, որքան դրամական արտահայտությամբ էր: Ավանդների դուլարային ներկայացումը արդիական է, քանի որ ՀՀ տնտեսության դուլարացման մակարդակը բավական բարձր է: Դրանով պայմանավորված՝ տնտեսվարող սուբյեկտները գնանշումը և խնայողությունները իրականացնում են ԱՄՆ դուլարով: Դա բացատրվում է նաև այն հանգամանքով, որ ՀՀ տնտեսությունն ունի առավել աստիճանաբար բնույթ: Այս ամենը հաշվի առնելով՝ պետք է հասկանալ, որ դրամի կտրուկ արժեզրկումը, ինչը բերում է դրամային խնայողությունների դուլարային արտահայտությամբ կտրուկ նվազման, հանրության մոտ ընդունվում է որպես սեփական միջոցների կորուստի պատճառ:



Գծապատկեր 17: ՀՀ առևտրային բանկերի ավանդները և վարկերը ԱՄՆ դոլարով (մլն)՝ ըստ 2000-2016 թթ.

ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար փոխարժեքի դիսամիկան ցույց է տալիս, որ դրամի արժևորումը կատարվում է սահուն, իսկ արժեզրկումը՝ կտրուկ կերպով: Այդպիսի սթրեսների ժամանակ տնտեսվարող սուբյեկտները տարբեր պատճառներով չեն կարողանում իրենց միջոցները փոխարկել դուլարի: 2009թ. փետրվար ամսին դրամը արժեզրկվեց շուրջ քսան տոկոսով, 2014թ. դեկտեմբերին՝ շուրջ 17 տոկոսով: Դրամային ավանդատուների համար իրենց խնայողությունների կորուստները համահունչ են նշված տոկոսներին: Մակրոտնտեսական իմաստով տարբերությունն չկա, թե բանկերից որևէ մեկը կսնանկանար, և ավանդատուները կկորցնեին

իրենց խնայողությունները, թե ամբողջ բանկային համակարգի ավանդատուները կորցնեին իրենց խնայողությունները այդքան զգալի տոկոսներով: Դրանով է պայմանավորված այն հանգամանքը, որ ավանդատուների մոտ ֆինանսական հատվածի նկատմամբ վստահությունը նվազում է վերջին տարիներին:

ՀՀ կենտրոնական բանկը կիսամյակային պարբերականությամբ հրապարակում է ֆինանսական կայունության հաշվետվությունը, որը հիմնականում վերաբերում է բանկային համակարգի ֆինանսական կայունությանը: 2015թ. առաջին կիսամյակի հաշվետվությունը¹⁰⁷ և դրա նախորդը էապես տարբերվում են մնացածներից, քանի որ այստեղ նկատվում են ռիսկերի բարձրացումներ, որոնք պայմանավորված են արտաքին գործոնների և մակրոմիջավայրի այլ փոփոխականների վատթարացմամբ: Հաշվետվությունը ներկայացվում է ՀՀ տնտեսությանը բնորոշ ռիսկերով՝ վարկային, իրացվելիության, շուկայական (առանձնակի ուշադրության է արժանացվում արտարժույթի, տոկոսադրույքի, գնային ռիսկերը):

Ելնելով ռիսկերի նկատելի աճից՝ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ¹⁰⁸ գործող բանկերը 2017թ. հունվարից պետք է ունենան 30 մլրդ ՀՀ դրամ ընդհանուր կապիտալ, իսկ նոր բանկերի համար այդ պահանջը դրվում է բացման օրվանից: Նույն որոշման մեջ նշվում է, որ փոփոխությունը նպատակ ունի իրականացնել ՀՀ բանկերի միացումներ և խոչորացումներ, ինչը կհանգեցնի բանկային համակարգի գործունեության արդյունավետության բարձրացմանը, բանկային համակարգի կայունության և տնտեսական տարբեր իրավիճակներում շուկային դիմակայելու ունակության ամրապնդմանը, ինչպես նաև նպաստել բանկային համակարգի կողմից առավել արդյունավետ և մատչելի բանկային ծառայությունների մատուցմանը:

Այս փոփոխությունը կարելի է համարել արտաքին շուկ, որը բնականաբար կազդի բանկերի ֆինանսական կայունության վրա: Ծոկի ազդեցությունը կարելի է պարզել նաև մեր կողմից կառուցված ֆինանսական կայունության մասնակի և ընդհանուր

¹⁰⁷ Ֆինանսական կայունության հաշվետվություն, ՀՀ ԿԲ, 2015թ. առաջին կիսամյակ:

¹⁰⁸ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի թիվ 376-Ն որոշում, 30 դեկտեմբերի 2014թ.:

ինդեքսների միջոցով. արդյոք բանկերի գործունեությունը կարգավորող հիմնական տնտեսական նորմատիվներում ընդհանուր կապիտալի փոփոխությունը \$ինանսական կայունության մասնակի ինդեքսում կբերի էական փոփոխություններ:

Աղյուսակ 14: ՀՀ-ում գործող առևտրային բանկերի \$ինանսական կայունության մասնակի ինդեքսը հիմնական կապիտալի փոփոխության դեպքում

Բանկ	Կայունության մասնակի ինդեքսը (5 մլրդ դրամ ընդհ. կապիտալի դեպքում)	Կայունության մասնակի ինդեքսը (30 մլրդ դրամ ընդհ. կապիտալի դեպքում)	Բանկի կարգաթիվը
Ամերիաբանկ	1	1	1
Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ	0.787	0.575	2
ՎՏԲ-Հայաստան Բանկ	0.760	0.522	3
Էյջ-Էս-Բի-Սի Բանկ	0.702	0.407	4
Արդշինբանկ	0.693	0.387	5
Հայբիզնեսբանկ	0.425	-0.146	6
Ինեկոբանկ	0.392	-0.211	7
Արարատբանկ	0.321	-0.353	8
Կոնվերսբանկ	0.296	-0.402	9
Յուսիբանկ	0.283	-0.429	10
Պրոմեթեյ Բանկ	0.278	-0.440	11
Արմավիսբանկ	0.225	-0.545	12
Հայէկոնոմբանկ	0.156	-0.683	13
ՊրոԿրեդիտ Բանկ	0.127	-0.747	14
Անելիք Բանկ	0.119	-0.756	15
Արցախբանկ	0.097	-0.799	16
Առեկսիմբանկ	0.097	-0.800	17
Բիբլոս Բանկ	0.086	-0.822	18
Մելլաթ Բանկ	0.082	-0.829	19
Չարգացման Հայկական Բանկ	0.064	-0.865	20
ԲՏԱ Բանկ	0.006	-0.982	21

Աղյուսակ 14-ի երրորդ սյունյակում ներկայացված են բանկերի ֆինանսական կայունության մասնակի ինդեքսները 30 մլրդ դրամ հիմնական կապիտալի դեպքում: Ակնհայտ է, որ բացասական նշանով ինդեքսները ցույց են տալիս, որ տվյալ բանկերը ուսումնասիրության պահին չեն բավարարում նորմատիվային նոր պահանջին: Ինչպես երևում է աղյուսակի չորրորդ սյունյակից, բանկերի ինդեքսային կարգաթվերը չեն փոխվել, ինչը պայմանավորված է շուկայի համատարած բնույթով: Հաշվի առնելով մասնակի ինդեքսի փոփոխությունը՝ ներկայացնենք ՀՀ առևտրային բանկերի ֆինանսական կայունության ընդհանուր ինդեքսի փոփոխությունները աղյուսակ 15-ում:

Աղյուսակ 15: ՀՀ-ում գործող առևտրային բանկերի ֆինանսական կայունության ընդհանուր ինդեքսը հիմնական կապիտալի փոփոխության դեպքում

Բանկ	Կայունության ընդհանուր ինդեքսը (5 մլրդ դրամ ընդհ. կապիտալի դեպքում)	Կայունության ընդհանուր ինդեքսը (30 մլրդ դրամ ընդհ. կապիտալի դեպքում)	Բանկի կարգաթիվը
Մեջլիս Բանկ	5.898	4.987	1
Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ	4.692	4.480	2
Ամերիաբանկ	4.407	4.407	3
Ինտերբանկ	4.882	4.278	4
Արարատբանկ	4.575	3.901	5
Առեկսիմբանկ	4.032	3.135	6
Պրոմեթեյ Բանկ	3.750	3.032	7
ԲՏԱ Բանկ	3.959	2.971	8
Արմսվիսբանկ	3.587	2.817	9
ՊրոԿրեդիտԲանկ	3.635	2.765	10
Էյչ-Էս-Բի-Սի Բանկ	2.782	2.486	11
Բիբլոս Բանկ	3.341	2.433	12
Չարգացման Հայկական Բանկ	3.347	2.418	13
Կոնվերսբանկ	3.057	2.358	14
Անելիք Բանկ	3.060	2.185	15
ՎՏԲ-Հայաստան Բանկ	2.158	1.919	16
Արդշինբանկ	2.220	1.915	17
Յուրաբանկ	2.532	1.820	18
Հայբիզնեսբանկ	2.008	1.436	19
ՀայԷկոնոմբանկ	2.035	1.196	20
Արցախբանկ	1.561	0.664	21

Աղյուսակ 15-ից պարզ է դառնում, որ ինչպես մասնակի ինդեքսի, այնպես էլ ընդհանուր ինդեքսի դեպքում բանկերի ինդեքսային կարգաթվերը չեն փոխվել, քանի որ սթրեսը արտաժին է և բանկերի վարքից կախված չէ: Ընդհանուր կապիտալի նորմեծության պահանջը՝ որպես սթրես փոքրացրել է ՀՀ-ում գործող բանկերի ֆինանսական կայունությանը, սակայն հասկանալի է, որ վերոնշյալ փոքրացումը տեղի կունենար, եթե բանկերը ստիպված լինեին որոշումը անմիջապես ընդունելին: Տրված ժամանակը բանկերին հնարավորություն կտա համապատասխանել տնտեսական նորմատիվին:

Ինչպես երևում է Աղյուսակ 10-ից, նոր նորմատիվին 2016թ. առաջին եռամսյակի ավարտին համապատասխանում են ՀՀ-ում գործող վեց բանկեր՝ Ամերիաբանկը, Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկը, ՎՏԲ-Հայաստան Բանկը, Էյչ-Էս-Բի-Սի Բանկը, Արդշինբանկը, Հայբիզնեսբանկը: ԲՏԱ բանկը միացել է Հայկոնոմբանկին: Մնացած տասնչորս բանկերը կամ պետք է համալրեն իրենց հիմնական կապիտալները, կամ վերակազմակերպվեն՝ միացման ձևով: Երկու ճանապարհն էլ առաջացնում են տնտեսագիտական նոր խնդիրներ:

Եթե նորմատիվին չբավարարող բոլոր բանկերը որոշեն շարունակել իրենց գործունեությունը, ապա ՀՀ բանկային համակարգին անհրաժեշտ կլինի 246,909,117 հազ. դրամ, ինչը կազմում է այժմյան ընդհանուր կապիտալի մոտ 54 տոկոսը: Սանձանակում է, որ անկախ ձեռքբերված միջոցների աղբյուրներից՝ բանկային համակարգի գործունեության արդյունավետության ցուցանիշները անկում են ապրելու: Մասնավորապես եկամտաբերության տեսանկյունից բանկերն ունենալու են արդյունավետության կորուստներ, քանի որ գոնե կարճաժամկետ հատվածում ավելի մեծ միջոցներով հետապնդելու են նույն եկամուտները: Մյուս կողմից այս իրավիճակը կբերի մրցակցության բարձրացման, վարկային տոկոսադրույքների իջեցման և այլն:

Եթե բանկերը միավորվեն, ապա բանկային համակարգում տեղ գտած ռիսկերը, որոնց վերացմանն է ուղղված նորմատիվային փոփոխությունը կարող են ամբողջությամբ չվերանալ: Քանի որ

միավորումից ոչ միայն կմեծանան նոր ձևավորված կամ մնացած բանկերի ընդհանուր կապիտալները, այլև ակտիվները և պարտավորությունների այլ հոդվածներ: Սա նշանակում է, որ տեղի կունենա խնդրահարույց ակտիվների և պարտավորությունների մեծացում միևնույն բանկում: Այլ կերպ սակարելի է անվանել փոքր բանկ-փոքր խնդիրների փոխակերպումը մեծ բանկ-մեծ խնդիրների:

Աղյուսակ 16¹⁰⁹: ՀՀ-ում գործող առևտրային բանկերի հիմնական կապիտալի չափը 31.03.2016թ. դրությամբ և համապատասխանությունը նոր նորմատիվին (հազ. դրամ)

Նորմատիվ	Ընդհանուր (սեփական) կապիտալի չափը	Ընդհանուր (սեփական) կապիտալի պակասությունը
Բանկ		
ՀՀ կենտրոնական բանկի սահմանած նորմատիվի թույլ արտելի մեծությունը	Մինչև 01.01.2017թ. 5000000	01.01.2017թ. 30000000
Ակբա-ԿրեդիտԱգրիկոլ Բանկ	44479401	բավարար
Ամերիաբանկ	55166925	բավարար
Անելիք Բանկ	10968664	19031336
Առեկսիմբանկ	9869598	20130402
Արարատբանկ	21102554	8897446
Արդշինբանկ	39747655	բավարար
Արմսվիսբանկ	16277833	13722167
Արցախբանկ	9888174	20111826
Բիբլոս Բանկ	9303851	20696149
ԲՏԱ Բանկ	5280777	24719223
Չարգացման Հայկական Բանկ	8223875	21776125
Էյջ-Էս-Բի-Սի Բանկ	40241693	բավարար
Ինեկոբանկ	24689081	5310919
Կոնվերսբանկ	19878442	10121558
Հայբիզնեսբանկ	26326202	3673798
Հայէկոնոմբանկ	12815662	17184338
Մեյլաթ Բանկ	9135911	20864089
Յոլնիբանկ	19194702	10805298
ՊրոԿրեդիտԲանկը	11205638	18794362
Պրոմեթեյ Բանկ	18929919	11070081
ՎՏԲ-Հայաստան Բանկ	43136681	բավարար

¹⁰⁹ ՀՀ առևտրային բանկերի ֆինանսական հաշվետվություններից:

Բանկերի խոշորացումը կբերի մրցակցության կրճատման, օլիգոպոլիստական համաձայնության ունենալու հավանականության մեծացման, որոնց միջոցով էլ բանկերը կփորձեն հաղթահարել իրենց խնդիրները: Վերոնշյալ համաձայնության ունենալը կազդեն ավանդների և վարկերի տոկոսադրույքների վրա բացասականորեն, ինչը անկասկած կկրճատի վարկերի ծավալը:

Վերահաս սթրեսից բանկային համակարգի առաջադրված երկու հիմնական ծայրահեղություններից առաջինն առավել նախընտրելի է ինչպես բանկերի, այնպես էլ ամբողջ տնտեսության համար: Ակնհայտ է, որ այս երկու ծայրահեղությունները զուտ տեսական բնույթ են կրում, իսկ իրականում տեղի կունենա դրանց միջանկյալ սցենարը՝ բանկերի մի մասը կհամալրեն իրենց հիմնական կապիտալը, մյուս մասը կմիավորվեն: Այս դեպքում ՀՀ բանկային համակարգը կբախվի առաջադրված երկու ծայրահեղությունների խնդիրներին՝ նոր միջոցների ներգրավման արդյունավետությունը և մրցակցության կրճատումը:

Ներգրաված միջոցների արդյունավետությունը բարձրացնելու համար փոքր բանկերը կմեծացնեն վարկավորման ծավալները, ինչը կուղեկցվի վարկային տոկոսների իջեցումով: Մրցակցության կրճատումը կբարդացնի կենտրոնական բանկի վերահսկողական աշխատանքը, քանի որ օլիգոպոլիստական համաձայնության ունենալու ներքին կմեծանա:

Ընդհանրացնելով, կարելի է նշել, որ տվյալ ենթագլխում ուսումնասիրվել է բանկային համակարգի ավանդները՝ որպես \$ինանսական կայունության գործոն: Ավանդների կտրուկ աճը վերջին տարիներին բացատրվում է համակարգի նկատմամբ հանրության կողմից վստահության աճով և ներդրումային արդյունավետ այլընտրանքների սահմանափակությունամբ: Ավանդների հետագա աճին է ապաստանում կիսափախուցիկ սահուն ճշգրտումները:

ՀՀ ԿԲ որոշումը ընդհանուր կապիտալի չափի մեծացման վերաբերյալ բանկային համակարգի համար նոր վիճակ է ստեղծել: Աշխատանքում քննարկվել է հավանական զարգացումները, որոնք բաժանվում են երկու մասի՝ բոլոր բանկերի պահպանումը և բանկերի կրճատումը: Առաջինի դեպքում ՀՀ բանկային համակարգը

բախվելու է ներգրաված միջոցների արդյունավետության , իսկ երկրորդի դեպքում՝ մրցակցության կրճատման խնդրի հետ: Վերոնշյալ փոփոխությունները իրենց արտահայտությունն է ունենում բանկային համակարգի համար հաշվարկված ֆինանսական կայունության ընդհանուր ինդեքսի վրա: Մասնավորապես այն նվազում է բոլոր բանկերի դեպքում՝ ցույց տալով, որ արտաքին միջավայրի արտածին բացասական փոփոխությունը բերում է ֆինանսական կայունության անկման:

Կատարված դիտարկումները և եզրահանգումները քննարկելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել բանկերի վարքը և ընդհանուր կապիտալի համալրման գործընթացը: 2016թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ ՀՀ առևտրային բանկերի ընդհանուր կապիտալի ցուցանիշները ներկայացված են աղյուսակ 17-ում:

Աղյուսակ 17¹¹⁰. ՀՀ-ում գործող առևտրային բանկերի հիմնական կապիտալի չափը 30.09.2016թ. դրությամբ և համապատասխանությունը նոր նորմատիվին (հազ. դրամ)

Նորմատիվ	Ընդհանուր (սեփական) կապիտալի չափը	Ընդհանուր (սեփական) կապիտալի չափը
Բանկ		
ՀՀ կենտրոնական բանկի սահմանած նորմատիվի թույլ արելի մեծությունը	Մինչև և 01.01.2017թ. 5000000	01.01.2017թ. 30000000
Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ	57144505	բավարար
Ամերիաբանկ	61767890	բավարար
Անելիք Բանկ	14863387	Չի բավարարում
Առեկսիմբանկ	20834128	Չի բավարարում
Արարատ	24093301	Չի բավարարում
Արդշինբանկ	53027607	բավարար
Արմսվիսբանկ	33600000	բավարար
Արցախբանկ	13300681	Չի բավարարում
Բիբլոս Բանկ	21861026	Չի բավարարում
ԲՏԱ Բանկ		Չի գործում
Չարգացման Հայկական Բանկ	11847363	Չի բավարարում
Էյչ-Էս-Բի-Սի Բանկ	52045840	բավարար
Ինեկոբանկ	42660165	բավարար
Կոնվերսբանկ	30238582	բավարար
Հայբիզնեսբանկ	32619770	բավարար
Հայ Էկոնոմբանկ	25218699	Չի բավարարում

¹¹⁰ ՀՀ առևտրային բանկերի ֆինանսական հաշվետվություններից:

Մեղ լ աթ Բանկ	24429743	Չի բավարարում
Յու Նի Բանկ	31994314	բավարար
Պրո Կրեդիտ Բանկը		Չի գործում
Պրոմեթեյ Բանկ	25718168	Չի բավարարում
ՎՏԲ-Յայ աստան Բանկ	39766128	բավարար

Ինչպես արդեն նշել ենք վերևում, որոշ բանկեր կմիանան ավելի խոշորների, ինչպես տեղի ունեցավ ԲՏԱ Բանկի և Պրո Կրեդիտ Բանկի հետ: Մեծ թվով բանկեր համալրեցին ընդհանուր կապիտալը՝ Անելիք Բանկ, Առեկսիմբանկ, ԱՐԱՐԱՏԲԱՆԿ, ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ, ԻՆԵՎՈՒԲԱՆԿ, Կոնվերս բանկ, Յայբիզնեսբանկ, Յու Նի Բանկ: Արդյունքում 31.06.2016թ. ՀՀ առևտրային բանկերի ընդհանուր կապիտալը 455863238 հազ. դրամից աճել է 617031297 հազ. դրամի երրորդ եռամսյակի վերջում: Պատահական չէ բանկային համակարգի եկամտաբերության անկումը, քանի որ ընդհանուր կապիտալի 35 տոկոս աճը տեղի է ունեցել եկամտաբեր ակտիվների գրեթե նույն բազայի պարագայում:

3.3. Ֆինանսական կայունության Էմպիրիկ վերլուծության առանձնահատկությունները ՀՀ բանկային համակարգում

Բանկերն իրենց հիմնական գործառնությունները կատարելիս առնչվում են որոշակի ռիսկերի հետ, որոնց կառավարման արդյունավետությամբ է պայմանավորված բանկերի ֆինանսական կայունության մակարդակը: Տվյալ աշխատանքում Էմպիրիկ ռեգրեսիոն վերլուծության միջոցով բացահայտվել է, թե ինչ գործոններ են ազդում ֆինանսական կայունությանը չափող նորմատիվային ընդհանուր կապիտալ/ռիսկով կշռված ակտիվներ ցուցանիշի վրա, և գնահատվել է, թե ինչքան է յուրաքանչյուր գործոնի ազդեցության չափը:

Բանկերի ֆինանսական կայունության գնահատման նպատակով ԿԲ-ը հաշվարկում է հետևյալ ցուցանիշները՝ նորմատիվային

ընդհանուր կապիտալ / ռիսկով կշռված ակտիվներ, նորմատիվային հիմնական կապիտալ / ռիսկով կշռված ակտիվներ, չափաորոշվարկեր / ընդհանուր վարկեր, շահույթաբերությունն ըստ ակտիվների, շահույթաբերությունն ըստ կապիտալի, իրացվելի ակտիվներ / ընդհանուր ակտիվներ և իրացվելի ակտիվներ / ցպահանջ պարտավորություններ ցուցանիշները:

Ֆինանսական կայունության ինդիկատորները պետության ֆինանսական համակարգի առողջության ազդեցացված չափորոշիչ է, որոնք երկրի կարգավորող մարմինների մակրոարդյունքի ազդեցիկ գործիքազմի մաս են կազմում: Ֆինանսական կայունության ցուցանիշների ֆունդամենտալ արժեքը բանկային հատվածի ընդհանուր անկումը ներկայացնելու, ինչպես նաև ուժեղ և թուլլ բանկերի տարանջատման մեջ է կայանում: Բացի ազդանշանային արժեքից, ֆինանսական կայունության ինդիկատորները բանկային համակարգի ընթացիկ վիճակի մոնիթորինգի կարևոր գործիք են հանդիսանում: Չնայած նրան, որ դեֆոլտները տեղի են ունենում բանկային հատվածի ավելի թուլլ ինստիտուտներում, այնուամենայնիվ բանկային շուկերը և ճգնաժամային դրվագները իրենց արտահայտությունն են գտնում ֆինանսական կայունությանը չափող ցուցանիշներում:


Սույն աշխատանքում մենք կենտրոնացել ենք առաջին ցուցանիշի վերլուծության վրա: Ստորև բերված գծապատկեր 14-ում ներկայացված է այդ ցուցանիշի դինամիկան 2003-2015թթ դրությամբ¹¹¹, որտեղ՝ F1-ը նորմատիվային ընդհանուր կապիտալ / ռիսկով կշռված ակտիվներ ցուցանիշն է:

Ցանկացած բանկ ձեռք է բերում ակտիվներ, որոնց դերում հանդես է գալիս վարկերը, արժեթղթեր՝ մասնավորապես պարտատուներ: Եթե արժեթղթերի դեպքում բանկը չի կրում ռիսկեր, ապա վարկերի դեպքում գոյություն ունեն կորուստների հավանականություններ, որի պատճառով բանկը դրանք կշռում է որոշակի ռիսկով, և դրանք հանդես են գալիս որպես ռիսկով կշռված ակտիվներ: Բանկի հիմնական գործառնություններից մեկը հենց հանդիսանում է վարկերի տրամադրումը, և բանկի գործունեության

¹¹¹ Տե՛ս <https://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx>:

ընդլայնմանը զուգընթաց նրա վարկային պորտֆելը ընդլայնվում է, և հետևաբար՝ ավելանում են ռիսկով կշռված ակտիվները: Եթե բանկը վարկերը տրամադրում է կապիտալի հաշվին, այլ ոչ թե ավելի շատ ներգրավված ավանդների օգնությամբ, դա նշանակում է, որ ընդհանուր կապիտալի մասնաբաժինը ռիսկով կշռված ակտիվների մեջ ավելի քիչ է, ինչը վկայում է այն մասին, որը բանկի ֆինանսական կայունությունը նվազում է, հակառակ դեպքում բանկի ֆինանսական կայունությունը բարձր է, սակայն միջոցների օգտագործման արդյունավետությունն է փոքր: Այսինքն՝ կարելի է նկատել, որ որքան F1 ցուցանիշը բարձր է, այնքան բանկային համակարգի ֆինանսական կայունությունը բարձր է, և որքան այդ ցուցանիշը ցածր է, այնքան բանկերը ֆինանսապես անկայուն են:

Գծապատկեր 18: F1 նորմատիվային ընդհանուր կապիտալ / ռիսկով կշռված ակտիվներ ցուցանիշն 2003-2015թթ.:



Ինչպես տեսնում ենք գրաֆիկից, F1 ցուցանիշն ունի հստակ արտահայտված նվազող միտում, ինչը նշանակում է, որ քսանմեկերորդ դարի սկզբի տասնամյակում ՀՀ բանկային

համակարգի ֆինանսական կայունությունը զգալիորեն նվազել է: 2005թ.-ից նվազման միտումը պահպանվում է մինչև 2008թ. սեպտեմբեր ամիսը, որից հետո այն աճում է որոշակի չափով և մնում այդ մակարդակի վրա մինչև 2010թ. օգոստոս ամիսը: Դապայմանավորված է համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամով, որը իր բացասական ազդեցությունն է թողել վարկերի ծավալի վրա: 2010թ. սեպտեմբերից հետո F1 ցուցանիշը անվերադարձելիորեն առանց մեծ տատանումների նվազում է՝ վկայելով ֆինանսական համակարգի կայունության անկման մասին:

Ակնհայտ է, որ բանկային համակարգի ֆինանսական կայունությունը կախված է ինչպես մակրոտնտեսական գործոններից, այնպես էլ բանկային համակարգին բնորոշ ֆինանսական ցուցանիշներից: Գործոնային վերլուծության համար դիտարկվել են հետևյալ ցուցանիշները՝

- avand_cp – ցախանջ դրամային ավանդներ,
- avand_jam – ժամկետային դրամային ավանդներ,
- avand_jam_art – ժամկետային արտարժույթային ավանդներ,
- varker- դրամային վարկեր,
- varker_art-արտարժույթային վարկեր,
- varker_rate – դրամային վարկերի տոկոսադրույք,
- varker_rate_art – արտարժույթային վարկերի տոկոսադրույք:

Տվյալ ցուցանիշների գրաֆիկները ներկայացված են հավելվածում:

Հիմնական եզրակացությունը, որը կարելի է անել տվյալ ցուցանիշների գրաֆիկական վերլուծությանից այն է, որ տնտեսությունում դիտարկվող ժամանակահատվածում աճել են ինչպես ավանդների ծավալը, այնպես էլ՝ վարկերինը, այսինքն՝ վարկերը և ավանդները ցուցաբերել են աճող միտում, ինչը նշանակում է, որ 2005-2015թթ. ընթացքում քաղաքացիների վստահությունը բանկերի նկատմամբ աճել է, վարկավորման գործընթացը ընդլայնվել է, որն էլ փոխանցումային մեխանիզմով հանգեցնում է գործարար միջավայրի ակտիվացման: Սակայն հարց է առաջանում, թե այս բոլոր միտումները ազդել են ֆինանսական կայունության վրա, և թե ազդել են, ապա՝ ինչ չափով:

Վերը նշված հարցին պատասխանելու համար կառուցվել է Էկոնոմետրիկ մոդել, որտեղ որպես կախյալ փոփոխական դիտարկվել է F1 ցուցանիշը, իսկ որպես բացատրող փոփոխականներ՝ F1 ցուցանիշի նախորդ և ազային արժեքը, դրամային վարկերը և արտարժույթային վարկերը: Ավանդները և տոկոսադրույքները չեն ներառվել մոդելում, քանի որ դրանք նշանակալի չեն եղել: Ստացված և ավագույն էմպիրիկ մոդելը ունի հետևյալ հասկորոշումը՝

$$\Delta \ln(f1_t) = \beta_0 + \beta_1 \Delta \ln(f1_{t-1}) + \beta_2 \Delta \ln(\text{varker}_{t-1}) + \beta_3 \Delta \ln(\text{varker_art}_t) + \beta_4 \Delta \ln(\text{varker_art}_{t-1}) + \varepsilon_t + \theta \varepsilon_{t-1}$$

(1)

Լոգարիթմական տարբերություններով մոդելի ընտրությունը պայմանավորված է նրանով, որ ժամանակային շարքերը հաճախ դառնում են ստացիոնար, իսկ գործակիցները ունենում են տևտեսագիտական մեկնաբանություն՝ (օրինակ՝ β_2 գործակիցը ցույց է տալիս, որ եթե դրամային վարկերի հավելածը ավելանա մեկ միավորով, հաջորդ ժամանակահատվածում ֆինանսական կայունության F1 ցուցանիշի հավելածը կավելանա β_2 չափով):

Էմպիրիկ գնահատման առաջին քայլում ընդլայնված Դիկի-Ֆուլլերի վիճակագրության միջոցով ստուգվել է շարքերի ստացիոնարությունը: Ստացիոնարության թեստի արդյունքները ցույց են տալիս, որ բոլոր փոփոխականները ստացիոնար են, քանի որ յուրաքանչյուր փոփոխականին համապատասխանող Դիկի-Ֆուլլերի վիճակագրության արժեքը փոքր է 95 տոկոսանոց կրիտիկական արժեքներից:

Երկրորդ քայլում ստուգվել է փոփոխականների թույլ կախվածությունը: Փոփոխականների ավտոկորելյացիոն ֆունկցիաներից երևում է, որ բոլոր փոփոխականները ունեն թույլ կախվածություն՝ այսինքն դիտարկումների մեջ կորելյացիան գնալով նվազում է:

Երրորդ քայլում գնահատվել է հավասարումը փոքրագույն քառակուսիների եղանակով Eviews 7.1 ծրագրային փաթեթի միջոցով: Արդյունքները ներկայացված են ստորև բերված աղյուսակում:

Աղյուսակ 21: Հավասարման գնահատման արդյունքները

Dependent Variable: D(LOG(F1))				
Method: Least Squares				
Sample (adjusted): 2005M04 2015M12				
Included observations: 129 after adjustments				
Variable	Coefficient	Std. Error	t-Statistic	Prob.
D(LOG(VARKER(-1)))	-0.203564	0.066026	-3.083082	0.0025
C	0.005462	0.003628	1.505615	0.1347
D(LOG(VARKER_ART))	-0.233734	0.058597	-3.988856	0.0001
D(LOG(VARKER_ART(-1)))	-0.153591	0.056826	-2.702827	0.0078
AR(1)	-0.577023	0.157862	-3.655246	0.0004
MA(1)	0.736060	0.140884	5.224595	0.0000
R-squared	0.230937	Mean dependent var	-0.006281	
Adjusted R-squared	0.199675	S.D. dependent var	0.028972	
S.E. of regression	0.025919	Akaike info criterion	-4.422282	
Sum squared resid	0.082631	Schwarz criterion	-4.289268	
Log likelihood	291.2372	Hannan-Quinn criter.	-4.368236	
F-statistic	7.386992	Durbin-Watson stat	1.925810	
Prob(F-statistic)	0.000004			

Չորրորդ քայլում ստուգվել է գնահատված մոդելի մնացորդների ավտոկորելյացիայի առկայությունը Բոքս-Լյունգի թեստի միջոցով և մնացորդների հոմոսկեդաստիկությունը Ուայթի թեստի միջոցով:

Աղյուսակ 22: Բոքս-Լյունգի թեստի արդյունքները

Date: 03/08/16 Time: 03:37						
Sample: 2005M04 2015M12						
Included observations: 129						
Q-statistic probabilities adjusted for 2 ARMA term(s)						
Autocorrelation	Partial Correlation		AC	PAC	Q-Stat	Prob
. .			1 0.019	0.019	0.0465	
. *			2 0.100	0.100	1.3767	
. .			3 0.051	0.048	1.7229	0.189
. .			4 0.060	0.049	2.2071	0.332
. *			5 0.124	0.115	4.3024	0.231
. .			6 0.036	0.022	4.4767	0.345
. .			7 0.047	0.020	4.7818	0.443
. .		* .	8 -0.060	-0.081	5.2859	0.508
. *			9 0.085	0.067	6.2978	0.505
. .			10 -0.007	-0.016	6.3046	0.613
. *			11 0.079	0.064	7.1903	0.617

Աղյուսակ 23: Ուայթի թեստի արդյունքները

Heteroskedasticity Test: White			
F-statistic	0.417203	Prob. F(27,101)	0.9944
Obs*R-squared	12.94371	Prob. Chi-Square(27)	0.9896
Scaled explained SS	56.15640	Prob. Chi-Square(27)	0.0008

Բոքս-Լյուսգի թեստի արդյունքները ցույց են տալիս, որ ոչ մի կարգի ավտոկորելյացիա գոյություն չունի, քանի որ Չվիճակագրությանը համապատասխանող բոլոր հավանականությունները մեծ են 0.05-ից: Ուայթի թեստը վկայում է այն մասին, որ սխալները հոմոսկեդաստիկ են, հետերոսկեդաստիկության բացակայության վերաբերյալ գրոյական հիպոթեզը մերժվում է:

Վերը նշված հետազոտությունների հիման վրա երկու կարևոր արդյունք ենք ստանում`

1. Քանի որ մեր փոփոխականները ստացիոնար են և ունեն թույլ կախվածություն, և գործում է մոմենտի պայմանը, այսինքն մեր ռեգրեսորները կորելացված չեն սխալների հետ, ապա մեր ստացած գործակիցները ունակային են:
2. Քանի որ մեր փոփոխականները ստացիոնար են և ունեն թույլ կախվածություն, ռեգրեսորները դետերմինիստիկ են, մնացորդները հոմոսկեդաստիկ են, բացակայում է ավտոկորելյացիան, ապա մեր ստացած գնահատականները ունեն ասիմպտոտիկ նորմալ բաշխում:

Առաջին արդյունքը վկայում է այն մասին, որ մենք կատարել որակական գնահատում այն տեսանկյունից, որ ընտրանքի հիման վրա ստացած գնահատականները ձգտում են գլխավոր համախմբության իրական արժեքներին:

Երկրորդ արդյունքը մեզ հնարավորություն է տալիս օգտագործել t վիճակագրության արժեքները որպես վարկածները ստուգելու հիմք` առանց անհանգստանալու թե ինչպիսի բաշխում ունեն ռեգրեսիայի մնացորդները: Այսպիսով` մոդելի գնահատված բոլոր գործակիցները նշանակալի են, քանի որ դրանց համապատասխանող t վիճակագրությունները մոդուլով մեծ են 1,96-ից: Այլ խոսքերով ասած` գնահատված հավասարման գործակիցների վերաբերյալ գրոյական հիպոթեզները մերժվում են:

Գործոնները բացառվող փոփոխականի վրա ունեն պատճառային ազդեցություն, քանի որ սխալների պայմանական սպասումը բացառող փոփոխականների նկատմամբ ևս հավասար է գրոյի: Դետերմինացիայի գործակիցը հավասար է 0.23, ինչը նշանակում է, որ

ընտրված փոփոխականները 23 տոկոսով բացատրում են կախյալ փոփոխականի տատանողականությունը: Ռեգրեսիայի դետերմինացիայի գործակիցը ամենաինչի վկայում , որ ռեգրեսիայի որակը լավը չէ, և ոչ մի ձև չի ազդում մեր փոփոխականների պատճառային ազդեցության վրա, քանի որ ռեգրեսիոն հավասարումների կառուցման բոլոր պայմանները բավարարված են մեր մոդելի համար:

Առաջին կարգի ավտոռեգրեսիվ գործընթացի գործակցի նշանակալիությունը ցույց է տալիս, որ F1 ցուցանիշի դինամիկայի մեջ գոյություն ունի հստակ արտահայտված իներցիոն էֆեկտ: Եվ դրամային վարկերը, և արտարժույթային վարկերը բացասական ազդեցություն ունեն F1 ցուցանիշի վրա, քանի որ ցանկացած տիպի վարկերի ավելացումը նշանակում է ռիսկով կշռված ակտիվների ավելացում, ինչն էլ հանգեցնում է ֆինանսական կայունության նվազման: Դրամային վարկերը միայն լագով են ազդում F1 ցուցանիշի վրա: Գնահատված գործակիցը ցույց է տալիս, որ տվյալ ամսում դրամային վարկերի մեկ միավոր հավելածի տեմպի բարձրացումը բերում է հաջորդ ամսում F1 ցուցանիշի հավելածի տեմպի 0.20 միավոր նվազմանը: Արտարժույթային վարկերի դեպքում պատկերը այլ է՝ ֆինանսական կայունության ինդեքսի վրա ազդում է ինչպես ընթացիկ, այնպես էլ նախորդ ժամանակահատվածի արտարժույթային վարկերը, ինչը նշանակում է, որ արտարժույթային վարկերը ֆինանսական կայունության վրա ավելի տևական և մնայուն ազդեցություն ունեն, քան դրամական վարկերը:

Ֆինանսական կայունության ցուցանիշները և ավանդների ու վարկերի դինամիկաները ուսումնասիրելով՝ բացահայտվեց, որ առկա են հստակ զարգացման ընդհանուր միտումներ այդ փոփոխականների վարքի մեջ, ինչը հնարավոր է լավագույնս ներկայացնել էմպիրիկ վերլուծության միջոցով: Եկոնոմետրիկ մոդելներին լրիվ բավարարող կառուցված գործոնային մոդելը որպես բացատրող փոփոխականներ դիտարկում է դրամային և արտարժույթային վարկերը, իսկ բացատրվող փոփոխական է ֆինանսական կայունության ցուցանիշը: Դրանց միջև բացահայտված կախվածության ուղղությունը և չափը ԿԲ-ի և ֆինանսական

ինստիտուտների համար ֆինանսական կայունության հետ առնչվող հարցերում կարևոր դեր է խաղում:

ԵԶՐԱԿԱՑՈՒ ԹՅՈՒՆՆԵՐ

Բանկային համակարգի կայունության հիմնահարցերով զբաղվում են բոլոր երկրների կառավարությունները՝ անկախ երկրի և ֆինանսական հատվածի զարգացածության մակարդակից: Չնայած այդ հանգամանքին՝ ժամանակակից իրադարձությունները ցույց են տալիս, որ անգամ ԱՄՆ-ի նման զարգացած երկրում ֆինանսաբանկային համակարգը կարող է հայտնվել խորը ճգնաժամի մեջ: Ինչպես ցույց տվեց հետագա ընթացքը, այդպիսի անկայունությունը վերածվեց համաշխարհային տնտեսական ճգնաժամի:

Չեփսորհրդային երկրները անցումային ժամանակահատվածում ստիպված էին արագորեն ինտեգրվել համաշխարհային բանկային համակարգին: Չայաստանն այդ թվում էապես արդյունավետ է իրականացրել բանկային համակարգի հեղափոխական շրջադարձը դեպի կապիտալիստական բանկային գործը, ինչն ապացուցվում է անկախության տարիներին սնանկացած և խնդրահարույց բանկերի բացակայության փաստով:

Ֆինանսատնտեսական ճգնաժամը և Ռուսաստանի տնտեսության կտրուկ անկումը նոր իրավիճակ ձևավորեց ընդհանրապես ՉՉ տնտեսության համար: Այդ նոր իրավիճակում ինչպես ՉՉ Կենտրոնական բանկը, այնպես էլ առևտրային բանկերը առաջին հերթին ուշադրությունը պետք է ուղղեին համակարգի կայունությանը:

Ատենախոսությունում Չայաստանի Չանրապետության առևտրային բանկերի ֆինանսական կայունության գնահատման և կառավարման ուղղությամբ իրականացված վերլուծությունների հիման վրա կատարվել են որոշակի եզրահանգումներ և առաջարկություններ, որոնցից էականներն են.

Ֆինանսական համակարգը գտնվում է կայունության միջակայքում, եթե այն հնարավորություն ունի պատշաճ ապահովել տնտեսության գործունեությունը և չեզոքացնել էնդոգեն կամ չկանխատեսված պատճառներով առաջացած ֆինանսական անհավասարակշռությունը:

Բանկային համակարգի կայունությունը հանդիսանում է ֆինանսական համակարգի կայունության անկյունաքարերից և ենթադրում է բանկային ծառայությունների անխափան և շարունակական մատուցում բնականոն տնտեսական իրավիճակում, իսկ արտաքին կամ ներքին գործոններով պայմանավորված շոկերի պարագայում՝ դրանց հաղթահարման արտենցիալ ի առկայություն:

Բանկային համակարգի կայունությունն էապես կախված է առանձին բանկերում ռիսկերի կառավարման մակարդակից: ՀՀ-ում գործող բանկերի տարեկան հաշվետվությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վարկային ռիսկի ռազմավարության մշակումը և ամրագրումն իրականացվում է բարձր մակարդակով: Սակայն խնդիրը կայանում է ամրագրված ռազմավարության իրացման գործընթացում, քանի որ վարկային ռիսկի կառավարումը հաճախ դրսևորվում է մեկ վարկը տրամադրելու, մեկ էլ խնդրահարույց վարկերի վերադարձելիությունն ապահովելու ժամանակ: Վարկի տրամադրումն իրականացվում է հիմնականում վարկունակության գնահատականով, իսկ ապահովության միջոցները գրավն է և երաշխավորությունները: Բաց է մնում վարկային ռիսկի կառավարման շատ կարևոր մաս՝ վարկի ընթացիկ դիտարկումը: Ընթացիկ դիտարկումը բանկին պետք է հնարավորությունն ընձեռի վարկառուից շուտ հայտնաբերել ապագայում սպասվելիք խնդիրները: Սա թվում է վերամբարձ գաղափար, սակայն ինչպես արդեն նշվել է, վարկային ռիսկը բանկի համար մասնագիտական ուղղություն է: Դա նշանակում է, որ բանկը երբեմն պետք է հաճախորդից առավել լավ տեղեկացված լինի վերահաս ռիսկերի մասին՝ հիմնվելով տնտեսության, դրա ճյուղերի և ոլորտների վերաբերյալ գիտելիքների և տիրապետած վիճակագրության վրա:

Ուսումնասիրվել է ՀՀ առևտրային բանկերի՝ վարկերից հավանական կորուստների պահուստների և վարկերի ծավալների հարաբերակցությունը: Վերջին երկու տարիներում բանկերի պահուստավորման կշիռը վարկային արտոճելում անընդհատ աճում է, որը վկայում է նրամասին, որ վարկային ակտիվների որակն էապես անկում է ապրում: Դիտարկված ժամանակահատվածի համար

Ամերիաբանկը այս ցուցանիշի գծով լավագույն դիրքն է զբաղեցնում, իսկ Բիբլոս Բանկը՝ վատագույն: Միավոր վարկի գծով պահուստի մակարդակը կախված է բանկի մեծությունից, ինչը օրինաչափ է, քանի որ մեծ բանկերը պետք է ունենան վարկային ռիսկի կառավարման մասնագիտական բարձր մակարդակ՝ ունենալով ֆինանսական և կադրային մեծ հնարավորություններ:

Կորելյացիայի գործակցի միջոցով բացահայտվել է, թե տնտեսության տարբեր ճյուղերի վարկավորումն ինչպես է ազդում վարկային ռիսկի վրա, ուսումնասիրվել է վարկերից հավանական կորուստների պահուստի կախվածությունը տնտեսության ճյուղերին տրված վարկերի մեծություններից: Վարկերի ճյուղային կառուցվածքն էական ազդեցություն ունի վարկային ռիսկի վրա: Առևտրի ոլորտում տրված վարկերի և պահուստների կորելյացիան հավասար է 0.33, շինարարության ոլորտում՝ 0.54, գյուղատնտեսության ոլորտում՝ 0.75, արդյունաբերության ոլորտում՝ 0.33, սպառողական ճյուղում՝ 0.81, այլ ճյուղերում՝ 0.18: Կորելյացիայի գործակիցների մշտադիտարկումը հնարավորություն կտա բանկային համակարգի սուբյեկտներին հարաբերության մեջ գնահատել տնտեսության ճյուղերի վարկավորման ռիսկայնությունը և հնարավորություն կընձեռվի վարկավորման նոր քաղաքականություն մշակելիս հաշվի առնել ամբողջ բանկային համակարգի առկա փորձը:

Ուսումնասիրվել է ՀՀ ԿԲ-ի կողմից հրապարակվող բանկային համակարգի կայունության ցուցանիշները: Վերջիններիս և կայունության քարտեզի դինամիկան վկայում են, որ ՀՀ բանկային համակարգը կորցնում է ավելի ցուկային կայունությունը, սակայն իրավիճակը գտնվում է վերահսկելի միջակայքում, և ԿԲ որոշումները համակարգը զերծ է պահում էական ցնցումներից:

Սթրես թեստերի մոտեցումները լայն կիրառություն են ստացել բանկերի և բանկային համակարգի կայունության գնահատման գործում: Դրանցից առավել տարածվածներն են զգայունության վերլուծությունը և վերևից-ներքև մոտեցումները, որոնք հարաբերականորեն պարզ են, սակայն ճշգրտության աստիճանը ավելի ցածր է: Սցենարային

վերլուծությունը և բանկ-բանկ մակարդակով վարժությունները ավելի բարդ են և ծախսատար, սակայն բանկային համակարգի վիճակի մասին ավելի վստահելի գնահատականներ են ապահովում:

Սովորաբար բանկային համակարգի ավանդների դինամիկ աճը վկայում է բանկերի նկատմամբ հասարակության վստահության բարձրացմամբ: Հայաստանում ևս նկատվում է առևտրային բանկերում ավանդների շարունակական աճ, որը սակայն ունի նաև սովորականից տարբերվող բացատրություններ: Ակնհայտ է, որ արժեթղթերի շուկայի թերզարգացածությունը խնայած միջոցների համար միայն ավանդային ներդրում է նախատեսում, փոքր ներդրումները ՀՀ տնտեսությունում շատ են անհաջողության մատնվում և ներդրումների համար տնտեսական և դրական սպասումների նախադրյալները թույլ են արտահայտված:

Դիտարկումները ցույց են տալիս, որ ՀՀ բանկային համակարգը \$ինանսատնտեսական և արժույթային շուկերի ժամանակ դրսևորում է կայունության բարձր մակարդակ: ՀՀ կենտրոնական բանկի նախաձեռնած միջոցառումները հստակ ազդեցություն են ունենում շուկերի հարթման և նոր հավասարակշռությունների ձևավորման գործում:

ԿԲ-ի կողմից ընդունված ընդհանուր կապիտալի նոր պահանջը և շուկայական վիճակն էապես ազդել է բանկերի շահութաբերության վրա: Եղթայական փոխանցումային մեխանիզմով բանկերում թանկացել է ծառայությունների սակագները՝ մասնավորապես 2014թ. համեմատությամբ իջել են ավանդների ներգրավման, և բարձրացել են վարկավորման տոկոսները:

Առավել հատկանշական է, որ տնտեսությունում բանկային միջնորդության ցուցանիշները՝ ակտիվներ/ՅՆԱ, վարկեր/ՅՆԱ, առաջին անգամ 2007թ. ի վերանկում են ապրել: Սա բացատրվում է մի կողմից տնտեսության անկումային տրամադրություններով, մյուս կողմից՝ բանկային համակարգի կարգավորման խստացմամբ:

Տնտեսական նորմատիվների միջոցով ՀՀ առևտրային բանկերի համար կառուցվել է \$ինանսական կայունության ընդհանուր ինդեքս, որը հնարավորություն է տալիս տեսնել, թե

յ ու ր ա ք ա ն չ յ ու ր ք ա ն կ կ ա յ ու ն ու թ յ ա ն տ Ե ս ա ն կ յ ու ն ի ց ի ն չ դ ի ր ք Է գ ր ա ղ Ե ց ն ու մ ք ա ն կ ա յ ի ն հ ա մ ա կ ա ր գ ու մ :

Ֆի ն ա ն ս ա կ ա ն կ ա յ ու ն ու թ յ ա ն ը ն դ ի ա ն ու ր ի ն դ Ե ք ս ը հ ա շ վ ա ր կ վ Է Լ Է մ ա ս ն ա կ ի ի ն դ Ե ք ս ն Եր ի մ ի ջ ո ց ո վ , ո ր ո ն ք հ ա շ վ ա ր կ վ Է Լ Է ն ն ո ր մ ա տ ի վ ն Եր ի գ ծ ո վ ք ա ն կ ի շ Ե դ վ ա ծ ու թ յ ու ն ն Եր ի ն ո ր մ ա վ ո ր մ ա ն Ե դ ա ն ա կ ո վ :

Ֆի ն ա ն ս ա կ ա ն կ ա յ ու ն ու թ յ ա ն ի ն դ Ե ք ս ի տ Ե ս ա ն կ յ ու ն ի ց դ ի տ ա ր կ վ ա ծ Ժ ա մ ա ն ա կ ա հ ա տ վ ա ծ ու մ Ֆի ն ա ն ս ա պ Ե ս կ ա յ ու ն առ ա ջ ի ն Եր Ե ք ք ա ն կ Եր ն Ե ն Մ Ե Լ Լ ա ք Բ ա ն կ ը , Ի ն Ե կ ո ք ա ն կ ը , Ա կ ք ա Կ ր Ե դ ի տ Ա գ ր ի կ ո լ Բ ա ն կ ը :

Բ ա ն կ Եր ը ի ր Ե ն ց դ ի ր ք ը ք ա ր Ե Լ ա վ Ե Լ ու ն ա յ ա տ ա կ ո վ կ ա ր ո ղ Ե ն ու շ ա դ ր ու թ յ ու ն ը կ Ե ն տ ր ո ն ա ց ն Ե Լ ա յ ն ն ո ր մ ա տ ի վ ն Եր ի մ ա ս ն ա կ ի ի ն դ Ե ք ս ն Եր ի վ ր ա , ո ր ո ն ց ո վ Է ա պ Ե ս գ ի ջ ու մ Ե ն մ ն ա ց ա ծ ք ա ն կ Եր ի ն :

Ի ն դ Ե ք ս ի կ առ ու ց վ ա ծ ք ը հ ն ա ր ա վ ո ր ու թ յ ու ն Է տ ա լ ի ս Ֆի ն ա ն ս ա կ ա ն կ ա յ ու ն ու թ յ ա ն գ ն ա հ ա տ ու մ ը կ ա տ ա ր Ե Լ Ժ ա մ ա ն ա կ ի տ ա ր ք Եր պ ա հ Եր ի հ ա մ ա ր և պ ա ր գ Ե Լ , թ Ե ի ն չ ա Կ Ե ս Ե ն փ ո խ վ Ե Լ ք ա ն կ Եր ի Ֆի ն ա ն ս ա կ ա ն կ ա յ ու ն ու թ յ ա ն ա ս տ ի ճ ա ն ը դ ի ն ա մ ի կ ա յ ի մ Ե ջ :

Ու ս ու մ ն ա ս ի ր վ Ե Լ Է ք ա ն կ ա յ ի ն հ ա մ ա կ ա ր գ ի ա վ ա ն դ ն Եր ը ` ո ր ա Կ Ե ս Ֆի ն ա ն ս ա կ ա ն կ ա յ ու ն ու թ յ ա ն գ ր ծ ո ն : Ա վ ա ն դ ն Եր ի կ տ ր ու կ ա ճ ը վ Եր ջ ի ն տ ա ր ի ն Եր ի ն ք ա ց ա տ ր վ ու մ Է հ ա մ ա կ ա ր գ ի ն կ ա տ մ ա մ ք հ ա ն ր ու թ յ ա ն կ ո ղ մ ի ց վ ս տ ա հ ու թ յ ա ն ա ճ ո վ և ն Եր դ ր ու մ ա յ ի ն ա ր դ յ ու ն ա վ Ե տ ա յ Լ ը ն տ ր ա ն ք ն Եր ի ս ա հ մ ա ն ա փ ա կ ու թ յ ա մ ք : Բ ա ն կ ա յ ի ն հ ա մ ա կ ա ր գ ի ն կ ա տ մ ա մ ք վ ս տ ա հ ու թ յ ա ն ա ճ ը ի ր ա կ ա ն ու մ կ ա ն գ ն ա ծ Է օ ք յ Ե կ տ ի վ հ ի մ ք Եր ի վ ր ա , ք ա ն ի ո ր չ կ ա ն տ ու ժ ա ծ ա վ ա ն դ ա տ ու ն Եր , ի ն դ ր ա հ ա ր ու յ ց ք ա ն կ Եր ի ն ձ Ե ո ք Ե ն ք Եր ու մ խ շ ո ր ն Եր ը և ք ա ր Ե խ ճ ո ր Ե ն կ ր ու մ Ե ն պ ա ր տ ա վ ո ր ու թ յ ու ն ն Եր ը : Ա վ ա ն դ ն Եր ի շ Ե շ տ ա կ ի ա ճ ը մ յ ու ս կ ո ղ մ ի ց ք ա ց ա տ ր վ ու մ Է ա ր ժ Ե թ ղ թ Եր ի շ ու կ ա յ ի թ Եր գ ա ր գ ա ց վ ա ծ ու թ յ ա մ ք , փ ո ք ր և ն ո ր ն Եր դ ր ու մ ն Եր ի ա ն հ ա ջ ո ղ ու թ յ ու ն ն Եր ո վ : Ա վ ա ն դ ն Եր ի հ Ե տ ա գ ա ա ճ ի ն Է ա պ Ե ս կ ի ք ա ն ի փ ո խ ա ր ժ Ե ք ի ս ա հ ու ն ճ շ գ ր տ ու մ ն Եր ը :

Հ Հ Կ Բ ո ր ո շ ու մ ը հ ի մ ն ա կ ա ն կ ա պ ի տ ա լ ի չ ա փ ի մ Ե ծ ա ց մ ա ն վ Եր ա ք Եր յ ա լ ք ա ն կ ա յ ի ն հ ա մ ա կ ա ր գ ի հ ա մ ա ր ն ո ր վ ի ճ ա կ Է ս տ Ե դ ծ Ե Լ : Ա շ խ ա տ ա ն ք ու մ ք ն ն ա ր կ վ Ե Լ Է հ ա վ ա ն ա կ ա ն գ ա ր գ ա ց ու մ ն Եր ը , ո ր ո ն ք ք ա ժ ա ն վ ու մ Ե ն Եր կ ու մ ա ս ի ` ք ո լ ո ր ք ա ն կ Եր ի պ ա հ պ ա ն ու մ ը և

բանկերի կրճատումը: Առաջինի դեպքում ՀՀ բանկային համակարգը բախվելու է ներգրաված միջոցների արդյունավետության խնդրի հետ, իսկ երկրորդի դեպքում՝ մրցակցության կրճատման: Վերոնշյալ փոփոխությունները իրենց արտահայտությունն է ունենում բանկային համակարգի համար հաշվարկված ֆինանսական կայունության ընդհանուր ինդեքսի վրա: Մասնավորապես այն նվազում է բոլոր բանկերի դեպքում՝ ցույց տալով, որ արտաքին միջավայրի արտածին բացասական փոփոխությունը բերում է ֆինանսական կայունության անկման:

Ուսումնասիրվել է ֆինանսական կայունությունը չափող նորմատիվային ընդհանուր կապիտալ / ռիսկով կշռված ակտիվներ ցուցանիշի դինամիկան 2003-2015թթ.-ի համար և ռեգրեսիոն վերլուծության միջոցով բացահայտվել, թե ինչ գործոններ են ազդում այդ ցուցանիշի վրա:

Կառուցվել է էկոնոմետրիկ մոդել, որտեղ որպես կախյալ փոփոխական դիտարկվել է ընդհանուր կապիտալ / ռիսկով կշռված ակտիվներ ցուցանիշը, իսկ որպես բացատրող փոփոխականներ՝ ցախանջ դրամային ավանդները, ժամկետային դրամային ավանդները, ժամկետային արտարժույթային ավանդները, դրամային վարկերը, դրամային վարկերի տոկոսադրույքը, արտարժույթային վարկերի տոկոսադրույքը:

Ընդհանուր կապիտալ / ռիսկով կշռված ակտիվներ ցուցանիշի վրա փոփոխականների ազդեցությունը միանշանակ չէ. ժամկետային դրամային և արտարժույթային ավանդները բացասաբար են կորելացված դրա հետ, իսկ ցախանջ ավանդները, դրամային վարկերը, վարկային տոկոսադրույքները ունեն դրական կորելյացիա: Ցախանջ ավանդների մեկ տոկոս աճը բերում է ընդհանուր կապիտալ / ռիսկով կշռված ակտիվների 0.17 տոկոս աճի: Ժամկետային դրամային ավանդների մեկ տոկոս աճը բերում է ընդհանուր կապիտալ / ռիսկով կշռված ակտիվների 0.25 տոկոս նվազման: Ժամկետային արտարժույթային ավանդների մեկ տոկոս աճը բերում է ընդհանուր կապիտալ / ռիսկով կշռված ակտիվների 0.23 տոկոս նվազման: Դրամային վարկերի տոկոսադրույքի մեկ տոկոս աճը բերում է ընդհանուր կապիտալ / ռիսկով կշռված ակտիվների 1.8

տոկոս աճի: Արտարժույթային վարկերի տոկոսադրույքի մեկ տոկոս աճը բերում է ընդհանուր կապիտալ / ռիսկով կշռված ակտիվների 2.6 տոկոս աճի:

Դրամային վարկերի մեկ տոկոս աճը բերում է ընդհանուր կապիտալ / ռիսկով կշռված ակտիվների 0.11 տոկոս աճի:

Վերջին երեք փոփոխականների դրական ազդեցությունը պարզ է, քանի որ դրամային վարկերի աճը, ինչպես նաև վարկային տոկոսադրույքների աճը հանգեցնում են վարկային ռիսկի աճին, որն էլ արտահայտվում է ֆինանսական կայունության ինդեքսի աճով:

Ժամկետային ավանդների և ընդհանուր կապիտալ / ռիսկով կշռված ակտիվների ինդիկատորի բացասական կապը բացատրվում է երկու էֆեկտների միաժամանակյա ազդեցության շնորհիվ՝ ժամկետային ավանդների աճը բանկերի համար նշանակում է լրացուցիչ միջոցների աճ, իսկ ժամկետային լիները՝ այն կառավարելու որոշակի ազատություն: Արդյունքում ժամկետային ավանդների աճը բերում է ֆինանսական կայունության ամրապնդման, որն էլ արտահայտվում է ընդհանուր կապիտալ / ռիսկով կշռված ակտիվների ցուցանիշի նվազումով:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ասատրյան Բ., Բանկային գործ, Երևան, Սարվադ Յրատ., 2013, 363 էջ
2. Բադանյան Լ., Բանկային գործի հիմունքներ, Երևան, Տնտեսագետ Յրատ., 2003, 119 էջ
3. Անդրեասյան Ա., «Վարկային գործառնություններ», 2003թ.
4. Թառումյան Գ., «Բանկերի ֆինանսական վերլուծության հիմունքները», 2003թ.
5. «Բազել -3, Համառոտ տեղեկանք», ՀՀ Կենտրոնական բանկ, 2012թ
6. «Բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմանները» կանոնակարգ 4, ՀՀ ԿԲ խորհուրդ, որոշում թիվ 102-Ն, 16.04.2016թ.
7. ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի թիվ 376-Ն որոշում, 30 դեկտեմբերի 2014թ
8. Ֆինանսական կայունության հաշվետվություն, ՀՀ ԿԲ, 2015թ. առաջին կիսամյակ, 62 էջ
9. О. Н. Лаврушина “Деньги, кредит, банки” Москва. 1998г., 275 с.
10. В. М. Усоскин “Современный коммерческий банк” Москва. 1996г., 320 с.
11. Alan J., William G. and Benjamin H., "Activist Fiscal Policy", Journal of Economic Perspectives, Vol. 24, No. 4, 2010, 25p.
12. Asli D., Enrica D., "Financial Liberalization and Financial Fragility", World Bank Conference on Development Economics, Washington, 1998, 54p.
13. Bardsen G., Lindquist K., G., Tsomocos D., P., Evaluation of Macroeconomic Models for Financial Stability Analysis, Norwegian University of Science and Technology Working Paper 4, 2006, 48p.
14. Barry E., "Exchange rate and financial stability", University of California, 1998, 66p.
15. Basel Committee on Banking Supervision, ' ' Basel 3: International Framework for Liquidity Risk Measurement, Standards and Monitoring' ' , 2010, 53p.


16. Basel Committee on Banking Supervision, ' ' International Convergence of Capital Measurement and Capital Standarts' ' , 2006, 347p.
17. Berger A., G. Udell, Lines of Credit and Relationship Lending in Small Firm Finance, Financial Institutions Center, Wharton, 1994, 44p.
18. Blaise G. and Kaushik J., " Measures of Financial Stability – a Review", IFC Bulletin No 31, 2010, 13p.
19. Breuer T.,Krenn G.,Stress Testing,Guidelines on Market Risk,OeNB Vol. 5,1999, 3p.
20. Chant J., "Financial Stability As a Policy Goal," in Essays on Financial Stability, Bank of Canada Technical Report No. 95 (Ottawa: Bank of Canada), September, 2003, 130p.
21. Cihak M., Stress Testing: a Review of Key Concepts, Czech Journal of Economics and Finance, Vol. 53, N 9-10, 2004, 23p.
22. Crockett A., "The Theory and Practice of Financial Stability," GEI Newsletter Issue No. 6 (United Kingdom: Gonville and Caius College Cambridge), 1997, 11–12 July, 311p.
23. Daniel H., Ceyla P., ' ' Leading Indicators of Banking Crisis: Was Asia Different?' ' , Internationa Monetary Fund, WP/98/91, 1998, 32p.
24. Deutsche Bundesbank, "Report on the Stability of the German Financial System," Monthly Report, Frankfurt, December, 2003, 47p.
25. Emre E. and James B., " Systemic Banking Crises", Federal Reserve Bank of Cleveland, 2005, 13p.
26. Ferguson R., "Should Financial Stability Be An Explicit Central Bank Objective?" (Washington: Federal Reserve Board), 2002, 13p.
27. Foot M.,"What Is 'Financial Stability' and How Do We Get It?" The Roy Bridge Memorial Lecture (United Kingdom:Financial Services Authority), April 3, 2003. 37p.
28. Franklin A., Douglas G., "Financial Contagion", The Journal of Political Economics, Volume 1, Issue 1, Feb. 2000, 30p.
29. Friedman M., Schwartz A., J., A Monetary History of the United States 1867-1960, National Bureau of Economic Research, New York, 1963, 860pp.
30. Gary G., "Banking Panics and Business Cycles" Oxford Economic Papers, New Series, Vol. 40, No. 4, 1988, 30p.

31. Greenwald B., Stiglitz J., Information, Finance and Markets: the Architecture of Allocative Mechanisms, National Bureau of Economic Research Working Paper No 3652, Cambridge, 1991, 46p.
32. Haldane A., Hall S., Pezzini S., A New Approach to Assessing Risks to Financial Stability, Bank of England Financial Stability Paper 2, 2007, 46p.
33. Hoggarth G., Saporta V., Costs of Banking System Instability: Some Empirical Evidence, Bank of England Financial Stability Review, 2001, 10p.
34. Jones M., T., Hilbers P., Slack G., Stress Testing Financial Systems: What to do When the Governor Calls, IMF Working Papers 127, 2004, 38p.
35. Joseph R., ' ' Regulating for Financial System Development, Financial Institutions Stability, and Financial Innovation' ' , 2009, 15p.
36. Minsky H.,P., A Theory of Systematic Fragility, Financial Crises,New York, 1977, 14p.
37. Mishkin F., "Global Financial Instability: Framework, Events, Issues," Journal of Economic Perspectives, Vol. 13 (Fall), 1999, 17p.
38. Kindleberger C., P., Manias, Panics and Crashes: A History of Financial Crises, Basic Books, New York, 1978, 361p.
39. Neil A. Weiss," Introductory Statistics" Arizona State University, Addison-Wesley, 2012, 4p.
40. Oldfield G., A. Santomero, The Place of Risk Management in Financial Institutions, Financial Institutions Center, Wharton, 1995, 39p.
41. Oyama T., Plausibility of Stress Scenarios, IMF-DNB 2nd Expert Forum on Advanced Techniques on Stress Testing: Applications for Supervisors, Amsterdam, 2007, 10p.
42. Padoa-Schioppa T., Central Bank and Financial Stability, Remarks at the Bank of Indonesia, Jakarta, 2003, 48p.
43. Ray B., Philip D., Tatiana F. and Dilruba K., "Bank Capital Composition, Regulation and Risk Taking", Brunel University London, 2011, 22p.
44. Romualdas G., Askoldas P., ' ' A Framework of Evaluation of Commercial Banks' ' , Intellectual Economics, No. 1(9), 2011, 16p.
45. Schinasi G., J., Preserving Financial Stability, International Monetary Fund Economic Issues 36, 2005, 30p.
46. Schinasi G., J., Responsibility of Central Banks for Stability in Financial Markets, IMF Working Paper N 121, 2003, 19p.


47. Sorge M., Stress-Testing Financial Systems: an Overview of Current Methodologies, BIS Working Paper 165, 2004, 41p.
48. Sundararajan V., Enoch C., San Jose A., Hilbers P., Krueger R., Moretti M., Slack G., Financial Soundness Indicators: Analytical Aspects and Country Practices, IMF Occasional Paper, 2012, 120p.
49. Thorsten B., ' ' Finance and Growth – Lessons From The Literature and The Recent Crisis' ' , European Banking Center, 2012, 6p.
50. Van den End W., Hoeberrichts M., Tabbae M., Modelling Scenario Analysis and Macro Stress-Testing, DNB Working Paper 119, 2006, 29p.
51. Willem K., Romualdas G., Askoldas P., Development of a Methodology of Evaluation of Financial Stability of Commercial Banks, Panoeconomicus, 2014, 3, 18p.
52. Williamson S., M., Costly Monitoring, Loan Contracts and Equilibrium Credit Rationing, Quarterly Journal of Economics 102, 1987, 11p.
53. www.cba.am
54. http://ec.europa.eu/finance/index_en.htm
55. <http://www.treasury.gov/initiatives/fsoc/Pages/home.aspx>
56. <http://www.financialstabilityboard.org>
57. <http://www.imf.org>
58. <http://www.worldbank.org/en/about/what-we-do/brief/ibrd>
59. <http://www.worldbank.org/ida>
60. <http://www.ifc.org>
61. <https://www.miga.org>
62. <https://icsid.worldbank.org>
63. <http://www.ebrd.com>
64. <http://www.isbnk.org>
65. <http://www.bstdb.org>
66. <http://www.adb.org>
67. <http://www.eabr.org>


Հավելված

Գծապատկեր 1. Առևտրային բանկերի կողմից ներգրավված արտարժույթային ցպահանջ և ժամկետային ավանդների դինամիկան՝ ըստ 2005-2015թթ.:



Գծապատկեր 2. Առևտրային բանկերի կողմից ներգրավված ցպահանջ և ժամկետային ավանդների դինամիկան՝ ըստ 2005-2015 թթ.:





Գծապատկեր 3. Առևտրային բանկերի կողմից տրամադրված վարկերի դինամիկան՝ ըստ 2005-2015 թթ.: